



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0019 Երևան, Մ. Բաղրամյան 19, հեռ. (+374 11) 888-107, 888-146, էլ. հասցե՝ intrel@armsai.am

№ Իմլե - 202

« 24 » 05 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրզոյան

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետով և 30-րդ հոդվածի 1-ին մասով՝ Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը:

Հարգանքով

ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2020 թվականի *հայրիկի 26-ի* N 60-Վ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 6-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկմանը հաջորդող օրը:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Դ. Հարսիս ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆ

Հավելված
Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի
մայիսի 26-ի թիվ 60-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ	4
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ	4
ՄԱՍ 2. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	16
«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	16
ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	23
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	26
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	29
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	33
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	35
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	36
ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	39
ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	41
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	43
«ԵՐԵՎԱՆԻ ԶԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	45
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	50
ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	51
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	55
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	59
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	62
ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	64
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	66
«ԶԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-Ի ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ	67

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԱՆԴԱՄ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ (ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌԻԴԻՏԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ)..... 70

ՄԱՍ 3. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ73

ՀԱՎԵԼՎԱԾ 82

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն տարեկան հաղորդումը ներկայացվում է՝ ի կատարումն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 198-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, ինչպես նաև «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետի և 28-րդ հոդվածի պահանջների: Այն պատրաստվել է՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով՝ ISSAI-ներով:

Սույն տարեկան հաղորդումը հանդիսանում է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ տարեկան հաղորդումը: Այն ներկայացնում է հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում 2019 թվականի շրջանակներում իրականացված հաշվեքննության վերաբերյալ աշխատանքները:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ հաշվետու տարվա համար նախատեսված 32 հաշվեքննությունից 25-ն ավարտվել է, մեկը՝ կասեցվել, իսկ 6-ը՝ դեռևս շարունակվում է (օրենքի ուժով տեղափոխվել է հաջորդ տարի):

Ոլորտային նկարագիր: 2019 թվականին Հաշվեքննիչ պալատի հաշվեքննության շրջանակը ներառել է բազմաթիվ ոլորտներ, որոնցից են սոցիալական ապահովության, կրթության, գիտության և մշակույթի, առողջապահության, էներգետիկայի, պաշտպանության և անվտանգության, պետական պարտքի, էկոնոմիկայի, ենթակառուցվածքներին վերաբերող և այլ ոլորտները:

Հրապարակված հաշվեքննություններ: Իրականացված 25 հաշվեքննությունից 24-ի արդյունքներով Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատված ընթացիկ եզրակացությունները օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացվել են Ազգային ժողով, Կառավարություն և համապատասխան հաշվեքննության օբյեկտներին, և դրանցից 20-ը, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան, հրապարակվել են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական www.armsai.am և ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am ինտերնետային կայքերում: Հրապարակված հաշվեքննությունների վերաբերյալ ամփոփ արդյունքները ներկայացված են սույն հաղորդման ՄԱՍ 2-ում:

Պետական գաղտնիք պարունակող հաշվեքննություններ: Պետական գաղտնիք պարունակող և այդ հիմքով չհրապարակված 4 հաշվեքննություններն են՝

- ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովմանն ուղղված գնումներ,
- ՀՀ պաշտպանության նախարարության արտաբյուջետային միջոցների ձևավորում և օգտագործում,

- ՀՀ կողմից հիմնադրված պաշտպանության ոլորտում գործող հիմնադրամների ֆինանսատնտեսական գործունեություն,
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն («Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ՝ վարկային և դրամաշնորհային ծրագրեր):

Վերոնշյալ հաշվեքննությունների մասով արձանագրվել են բազմաթիվ անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ, ինչպես նաև ներկայացվել են առաջարկություններ անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և ռիսկեր պարունակող դեպքերի վերացման և կանխարգելման համար: Նշված հաշվեքննությունները հասանելի են «Պետական և ծառայողական գաղտնիք մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Կասեցված հաշվեքննություն: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի հաշվեքննությունը կասեցվել է: Կասեցման համար հիմք է հանդիսացել հաշվեքննության ընթացքում հաշվեքննության արդյունքի վրա էական ազդեցություն ունեցող առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտությունը: Կասեցման հիմքի վերացումից հետո հաշվեքննիչ պալատի որոշմամբ տվյալ հաշվեքննությունը կվերսկսվի մնացած ժամկետով:

Շարունակվող հաշվեքննություններ: Հաշվեքննության ընթացքում ի հայտ եկած էական նշանակություն ունեցող ռիսկերով պայմանավորված լրացուցիչ աշխատանքային ծավալից ելնելով՝ 6 առանձին հաշվեքննության իրականացման ժամկետները երկարաձգվել են: Ուստի, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, 2019 թվականի գործունեության տարեկան ծրագրից վերոնշյալ 6 ծրագրային կետեր տեղափոխվել են 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրի: Դրանք են՝

- «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեություն՝ բացառությամբ վարկային և դրամաշնորհային ծրագրերի,
- Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում,
- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն (պահպանման ծախսեր, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին առնչվող բյուջետային միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության օգտագործում),
- ՀՀ կադաստրի կոմիտե (անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման և կադաստրի համակարգի գործունեության ապահովում, ինչպես նաև պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչում, երաշխավորում և պաշտպանություն),
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն («Հայանտառ» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեություն)

- ՀՀ արդարադատության նախարարություն (քրեակատարողական ծառայության և «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեություն):

Չիրապարակված հաշվեքննություն: Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) մարմիններում բյուջետային միջոցների ձևավորման, կառավարման ու տնօրինման, գույքի և այլ ակտիվների օգտագործման նկատմամբ ԵԱՏՄ անդամ երկրների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների համատեղ հաշվեքննության արդյունքներն ամփոփվել են 2020 թվականի փետրվարին: ԵԱՏՄ անդամ երկրների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների համատեղ որոշումներով հաստատված ամփոփիչ հաշվետվությունները ներկայացվել են Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի քննարկմանը: Հաշվետվության վավերացման գործընթացի ավարտից հետո ստորագրված հաշվետվության օրինակը Հաշվեքննիչ պալատի կողմից ստանալուն պես, այն սահմանված կարգով կներկայացվի Ազգային ժողովին և կառավարությանը, ինչպես նաև կտեղադրվի Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում:

Բյուջետային աջակցության համաձայնագիր: 2019 թվականի ընթացքում ավարտված 24 հաշվեքննությունից 8-ի իրականացման պահանջն ամրագրված է «Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրում՝ որպես 2019 թվականի համար արտաքին հաշվեքննության ոլորտի հատուկ նախապայման: Մասնավորապես, համաձայնագրով 2019 թվականի համար Հաշվեքննիչ պալատի մասով սահմանվել են հետևյալ պահանջները.

1. 2018 թվականի ֆինանսական տարվա ֆինանսական փաստաթղթերի և հարակից ֆինանսական հաշվետվությունների ֆինանսական հաշվեքննության («Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, ISSAI 100 և 200 ստանդարտներին համապատասխան) և համապատասխանության հաշվեքննության («Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, ISSAI 100 և 400 ստանդարտներին համապատասխան) իրականացում պետական այն մարմիններում, որոնց ծախսերի տեսակարար կշիռը ներկայացնում է պետական բյուջեի ընդհանուր ծախսերի առնվազն 25%-ը,
2. Նախորդ երկու տարիներից տարբերվող թեմաներով առնվազն 5 կատարողականի հաշվեքննության իրականացում («Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, ISSAI 100 և 300 ստանդարտներին համապատասխան):

Բոլոր վերը նշված նախապայմանները Հաշվեքննիչ պալատի կողմից ապահովվել են: Մասնավորապես, առաջին նախապայմանի շրջանակներում «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին և ISSAI ստանդարտներին համապատասխան ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ են իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության, ՀՀ Արմավիրի մարզպետարանի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի 2018 թվականի

Ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ, որը կազմում է պետական բյուջեի ընդհանուր ծախսերի ավելի քան 25%-ը:

Երկրորդ նախապայմանի ապահովման շրջանակներում իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին և ISSAI ստանդարտներին համապատասխան 5 կատարողականի հաշվեքննություն հետևյալ թեմաներով՝

- Ստանդարտների մշակման և հաստատման գործընթաց,
- ՀՀ պետական պարտքի կառավարում,
- Երևան քաղաքում շտապ բժշկական օգնության ծառայություններ,
- Միջին մասնագիտական կրթության համակարգի գործունեություն,
- Գեոդեզիական քարտեզագրական ծառայություններ:

Հաշվեքննությունից հետո տարվող աշխատանքներ (follow-up): «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հաշվեքննության օբյեկտի ղեկավարն ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվեքննիչ պալատին է տրամադրում ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն: Հաշվեքննիչ պալատը նշված տեղեկատվությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան ընթացիկ եզրակացության հետ միասին այն ներկայացնում է ՀՀ Ազգային ժողով և ՀՀ կառավարություն: Այս քայլից հետո, օրենսդրական կարգավորումների համաձայն, ավարտվում է Հաշվեքննիչ պալատի դերը հաշվեքննության հետևանքների բնագավառում: Հաշվետու տարում Ազգային ժողովի և Հաշվեքննիչ պալատի փոխգործակցությունը եղել է ակտիվ, նկատի ունենալով follow-up գործընթացը: Այդ կապակցությամբ, Ազգային ժողովում կազմակերպվել են Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունների հրապարակային քննարկումներ, որոնց մասնակցել են նաև հաշվեքննության օբյեկտների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Քննարկվող ընթացիկ եզրակացության արդյունքները ներկայացնելուց հետո պատգամավորներն հարցեր են ուղղել Հաշվեքննիչ պալատի ներկայացուցչին, այնուհետ լսել են հաշվեքննության օբյեկտի դիրքորոշումը՝ արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների, Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված առաջարկությունների կատարման և այլնի վերաբերյալ: Պատգամավորները հաշվեքննության օբյեկտի ղեկավարներից պահանջել են պարբերաբար տեղեկացնել արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների հետևանքների շտկման և վերացման, ինչպես նաև հաշվեքննությամբ ներկայացված առաջարկությունների հետագա կատարման վերաբերյալ: Հաշվետու ժամանակաշրջանում քննարկված ընթացիկ եզրակացությունները ներկայացվում են ստորև բերված աղյուսակում.

Հ/Հ	Ընթացիկ եզրակացություն	Քննարկման ամսաթիվ	Հանձնաժողով (ենթահանձնաժողով)
1.	ՀՀ առողջապահության բնագավառում լիցենզավորման գործընթացի իրականացման (բացառությամբ դեղատնային գործունեության լիցենզավորման) վերաբերյալ	22.05.2019թ.	ՀՀ ԱԺ առողջապահության և սոցիալական հարցերի և ֆինանսավարկային բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովներ
2.	ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման վերաբերյալ	22.05.2019թ.	ՀՀ ԱԺ առողջապահության և սոցիալական հարցերի և ֆինանսավարկային բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովներ
3.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության կողմից պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարման վերաբերյալ	04.06.2019թ.	ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի հաշվեքննության և աուդիտի հարցերի ենթահանձնաժողով
4.	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարման նկատմամբ իրականացված հաշվեքննության արդյունքների վերաբերյալ	17.10.2019թ.	ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի ու տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովներ
5.	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից իրականացված ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ	17.10.2019թ.	ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի ու տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովներ
6.	ՀՀ պետական պարտքի կառավարման կատարողականի հաշվեքննության վերաբերյալ	18.02.2020թ.	ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով
7.	Ռիսկի վրա հիմնված համալիր հարկային ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող չափանիշների կիրառության վերաբերյալ	19.02.2020թ.	ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով
8.	«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ	10.03.2020թ.	ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով

Ծանոթություն: Քննարկվող ընթացիկ եզրակացությունների ընտրությունը կատարել է ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի հաշվեքննության և աուդիտի հարցերի ենթահանձնաժողովը:

Իրավապահ մարմինների հետ համագործակցություն: Հաշվետու տարին բավականին ակտիվ է եղել Հաշվեքննիչ պալատի և իրավապահ համակարգի համագործակցության մասով: Մասնավորապես, միայն հաշվետու տարվա շրջանակներում իրավապահ մարմիններին է ուղարկվել 24 առանձին նյութ, որից 21-ը՝ ՀՀ գլխավոր դատախազություն, մեկը՝ Ազգային անվտանգության ծառայություն, մեկը՝ Հատուկ քննչական ծառայություն և մեկն էլ՝ Պետական վերահսկողական ծառայություն: Հաշվետու տարվա ցուցանիշն աննախադեպ է Հաշվեքննիչ պալատի, այդ թվում՝ վերջինիս իրավանախորդ հանդիսացող Վերահսկիչ պալատի ողջ պատմության համար, որովհետև միայն 2019 թվականի մասով ստացված վիճակագրությունը մի քանի անգամ գերազանցում է նախորդ տարիների ցուցանիշները միասին վերցրած: Առհասարակ, վերջին երկու տարիների ընթացքում ուղարկվել է 33 առանձին նյութ, որոնք իրենց ծավալով և բնույթով բավականին ընդգրկուն թեմաներ են: Վերջին 2 տարիների ընթացքում ուղարկված նյութերից 17-ի մասով տրվել է իրավական գնահատական, իսկ 16 նյութի ուսումնասիրությունները շարունակվում են: Իրավական գնահատականի արժանացած 16 նյութերով հարուցվել է 24 քրեական գործ, իսկ մեկ նյութ կցվել է արդեն հարուցված քրեական գործին: Հարուցված քրեական գործերից 6-ը կարճվել է: ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն հարուցված քրեական գործերի մասով պատճառված վնասի նախնական չափը այժմ կազմում է 2.4 մլրդ դրամ: Պատճառված վնասի վերջնական չափը պարզելու համար նախաքննությունը շարունակվում է: Առավել մանրամասն տեղակատվությունը ներկայացված է հաղորդման Հավելվածում:

Եղել են նաև դեպքեր, երբ հաշվեքննության օբյեկտի ղեկավարն իր նախաձեռնությամբ նյութերն ուղարկել է իրավապահ համակարգի մարմիններին: Օրինակ՝ ԿԳՄՍ նախարարը «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվեքննության նյութերն ուղարկել է ՀՀ գլխավոր դատախազություն:

Հաշվեքննության կարծիքներ (եզրահանգումներ) և եզրակացություններ: Հաշվեքննողներն իրականացրել են հաշվեքննության երեք տեսակներ՝ ֆինանսական, համապատասխանության և կատարողականի: Հաշվեքննության առաջադրանքներն իրականացնելիս կիրառվել են հաշվեքննության համար նախատեսված բոլոր ընթացակարգերը:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

Ֆինանսական	8
Համապատասխանության	13
Կատարողականի	10

¹ Վիճակագրության մեջ ներառված չեն պետական գաղտնիք պարունակող և ԵԱՏՄ համատեղ հաշվեքննությունների տեսակները

Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների արդյունքներով «դրական եզրահանգում» հաշվեքննության կարծիք որևէ հաշվեքննությամբ չի տրամադրվել: Տրամադրված հաշվեքննության կարծիքները հետևյալն են՝

- 9 ոչ լիարժեք եզրահանգում, այսինքն՝ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են, կամ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:
- 3 բացասական եզրահանգում, այսինքն՝ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած են, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են:
- 3 հաշվեքննությամբ տրամադրվել է «հրաժարում եզրահանգում ներկայացնելուց» հաշվեքննության կարծիք:

Կատարողականի հաշվեքննություններով ներկայացվում են «տնտեսման» և(կամ) «օգտավետության» և(կամ) «արդյունավետության» սկզբունքների պահպանման վերաբերյալ հաշվետվություններ:

2019 թվականի կատարողականի հաշվեքննության հաշվետվություններում ներկայացված կատարողականի հաշվեքննության սկզբունքների չպահպանման վիճակագրությունն ամփոփ ներկայացված է ստորև.

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

<i>Տնտեսման</i>	1
<i>Ծախսային արդյունավետության</i>	5
<i>Նպատակային արդյունավետության</i>	6

Հաշվեքննությամբ ներկայացված առաջարկություններ: Բացահայտված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և ռիսկեր պարունակող դեպքերի վերացման և կանխարգելման, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացման համար հաշվեքննության, ստուգման օբյեկտներին, ՀՀ կառավարությանը և այլ մարմիններին ներկայացվել են ընդհանուր թվով 306 առաջարկություն, որոնք բնութագրական հատկանիշներով կարելի է բաժանել երեք տեսակի՝ համակարգին միտված, արդյունքին միտված և խնդրին միտված:

Համակարգին միտված առաջարկությունները նպատակ են հետապնդում բարելավելու կառավարման, ֆինանսական, իրավական համակարգերի գործունեության արդյունավետության բարձրացումը: Հաշվեքննիչ պալատի կողմից 2019 թվականի տարեկան ծրագրով իրականացված հաշվեքննությունների արդյունքում ներկայացվել է համակարգին միտված 117 առաջարկություն:

Արդյունքին միտված առաջարկությունները նպատակ են հետապնդում բարելավելու ծրագրերը և ծառայությունները նպատակներին և ակնկալվող արդյունքներին հասնելու համար: Հաշվեքննիչ պալատի կողմից 2019 թվականի տարեկան ծրագրով իրականացված հաշվեքննությունների արդյունքում ներկայացվել է արդյունքին միտված 75 առաջարկություն:

Խնդիրների բացահայտմանը և լուծմանը միտված առաջարկությունների նպատակը հաշվեքննության արդյունքում բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերացումը կամ շտկումն է: Հաշվեքննիչ պալատի նույն ժամանակահատվածում ներկայացվել է խնդիրներին միտված 114 առաջարկություն:

Հաշվեքննության գործիքակազմ: Տարեկան հաղորդման մեջ ներկայացված բոլոր հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները կազմվել են՝ հիմք ընդունելով հաշվեքննության ընթացքում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության (ստուգման) արդյունքների վերաբերյալ արձանագրությունները: Բոլոր ուղղություններով կազմվել է հաշվեքննության (ստուգման) 61 արձանագրություն, որից 10-ը գաղտնի: Դրանք, համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի, ամբողջությամբ ներկայացվել են հաշվեքննության (ստուգման) օբյեկտների ղեկավարներին: Վերջիններիս կողմից ներկայացվել են առարկություններ և բացատրություններ, որոնց մեծ մասը Հաշվեքննիչ պալատի կողմից չեն ընդունվել չհիմնավորված կամ չփաստարկված լինելու պատճառով: Առարկությունները որոշ դեպքերում իրենց բնույթով եղել են մեկնաբանություններ և բացատրություններ արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ: Հաշվեքննիչ պալատի կողմից ընդունված առարկությունները հաշվի են առնվել ընթացիկ եզրակացությունների մշակման գործընթացում:

Հաշվեքննողների գործողությունները հաշվեքննության (ստուգման) օբյեկտների կողմից չեն բողոքարկվել:

2019 թվականի գործունեության ծրագիրը կատարվել է Հաշվեքննիչ պալատի հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով: Հաշվեքննիչ պալատը որոշ դեպքերում պայմանագրային կարգով հաշվեքննության գործընթացում ներգրավել է համապատասխան բնագավառի, ինչպես նաև հաշվեքննության և ստուգման վերաբերյալ հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետներ և փորձագետներ:

Հաշվեքննության ընթացքում հաշվեքննողները ղեկավարվել են հաշվեքննության իրականացման համար «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, միաժամանակ, չարգելված դեպքերում կիրառել են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային ստանդարտներով նախատեսված հաշվեքննության հատուկ գիտելիքներ:

Հաշվեքննության ողջ գործընթացը, համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջների, հաշվեքննողների կողմից փաստաթղթավորվել է: Հաշվեքննության արդյունքները ձեռք են բերվել անաչառ և համակողմանի տեղեկատվության և փաստերի հիման վրա: Տրված բոլոր

գնահատականները հիմնված են պատշաճ ապացույցների վրա: Հաշվեքննիչ պալատի և հաշվեքննության որակն ապահովելու նպատակով Հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից ապահովվել են հաշվեքննության գործընթացում գործող հիերարխիկ շղթայի համար (հաշվեքննող - հաշվեքննության առաջադրանքի ղեկավար – հաշվեքննություն իրականացնող ստորաբաժանումը համակարգող պալատի անդամ - հաշվեքննիչ պալատ) նախատեսված ներքին հսկողության ընթացակարգերը:

Հաշվեքննիչ պալատն իր գործունեության ընթացքում ամբողջությամբ հետևել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված «քաղաքական չեզոքության» սկզբունքի պահանջներին: Սույն տարեկան հաղորդումը, ինչպես նաև բոլոր ընթացիկ եզրակացությունները զերծ են որևէ «որակումից», որը կարող է վերաբերել բացահայտված անհամապատասխանություններին և խեղաթյուրումներին, ինչպես նաև զերծ են որևէ «կանխատեսումից», որը կարող է առնչվել բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների հետևանքներին:

ՄԱՍ 1. 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացությունը, որը հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի մայիսի 24-ի թիվ 12/1 որոշմամբ: Հաշվեքննիչ պալատի եզրակացությամբ արձանագրվել են մի շարք խնդիրներ և ներկայացվել են 8 առաջարկություններ:

2008 թվականից ի վեր Հաշվեքննիչ պալատն առաջարկել է, որ Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր բյուջետային միջոցները շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով: Անվիճելի է, որ բյուջետային միջոցների՝ գանձապետական համակարգով շրջանառումն ավելի վերահսկելի և թափանցիկ է դարձնում դրանց օգտագործումը: Կառավարությունն ընդառաջ գնաց այդ առաջարկությանը, և 2010 թվականից աստիճանաբար վարկային և դրամաշնորհային միջոցների մի մասը սկսեց շրջանառել գանձապետական համակարգով: Մասնավորապես, խոսքը «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկների մասին է: Իսկ 2018 թվականի վերջից՝ նշված խնդիրը լուծվեց նաև ՊՈԱԿ-ների մասով: Այնուհանդերձ, ՀՈԱԿ-ների, պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների և հիմնադրամների հաշիվները դեռևս շարունակում են մնալ առևտրային բանկերում, ինչը չի բխում հանրային միջոցների կառավարման թափանցիկության և վերահսկելիության պահանջներից և հանգեցնում է դրանց օգտագործման գործընթացում հնարավոր ռիսկերի ավելացմանը:

Պետական բյուջեի կատարման գործընթացում արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնք չեն բխել այդ գործընթացի թափանցիկության, վերահսկելիության և հանրային հաշվետվողականության ապահովման լավագույն սպասումից: Դրանց գծով Հաշվեքննիչ պալատն առաջարկել է՝

- ՀՀ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության մեջ ներառել գանձապետական միասնական հաշվի մնացորդների վերաբերյալ տեղեկատվություն,
- հաշվետվության մեջ ավելացնել վերլուծություն պետական բյուջեի գերատեսչական դասակարգմամբ ծախսերի վերաբերյալ, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել յուրաքանչյուր գերատեսչության կատարողականը,
- «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվություններում ներառել ըստ եկամտատեսակների հարկային եկամուտների պլանի, ինչպես նաև ճշտված պլանի ցուցանիշները,
- ձեռնարկել քայլեր բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության կամ Հաշվեքննիչ պալատին ներկայացվող ՀՀ պետական բյուջեի կատարողականի փաթեթի մեջ «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հավելվածի՝ ՀՀ

կենտրոնական բանկի 2018 թվականի վարչական ծախսերի կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներառելու ուղղությամբ,

- «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը ներառել ներքին պետական պարտքի սպասարկման փաստացի ծախսում: Սույն առաջարկությունը բխել է Հաշվեքննիչ պալատի այն եզրահանգումից, որ 2014 թվականից մինչև այժմ ՀՀ պետական բյուջեի կատարողականի հաշվետվություններում՝ ներքին տոկոսավճարներ հոդվածում, ներառված չեն եղել ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժույթային պետական պարտատոմսերի համար վճարված տոկոսավճարները, որոնք 2018 թվականին կազմել են 31.8 մլրդ ՀՀ դրամ,
- վերանայել ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի շահագործման պահանջի դադարեցումը և գործուն քայլեր ձեռնարկել տեղեկատվական համակարգը կայացնելու և ներդնելու գործում:

Հաշվեքննիչ պալատի կողմից վերլուծվել է նաև պետական բյուջեի ոչ ֆինանսական ցուցանիշների կատարողականը: Վերլուծությամբ պարզվել է հետևյալը.

- քաղաքականության միջոցառումներից 18.6%-ի գծով ընդհանրապես ոչ ֆինանսական ցուցանիշ սահմանված չի եղել: Չնայած Հաշվեքննիչ պալատի նախորդ տարվա առաջարկությանը՝ բարելավել իրավիճակը և սահմանել ոչ ֆինանսական ցուցանիշներ այն քաղաքականության միջոցառումների գծով, որոնց համար այդպիսիք դեռևս սահմանված չեն, 2018 թվականին իրավիճակը ոչ միայն չի բարելավվել, այլ դեռ ավելին՝ վատթարացել է ևս 1.2 տոկոսային կետով,
- քաղաքականության միջոցառումներից 64.8%-ի գծով սահմանված է եղել միայն մեկ տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշ (հիմնականում քանակական),
- քաղաքականության միջոցառումներից միայն 9%-ի գծով է սահմանված եղել ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային լիարժեք կազմ:

Հաշվեքննիչ պալատն ընդգծել է պետական բյուջեի ոչ ֆինանսական ցուցանիշների հետ կապված իրավիճակի շտկման կարևորությունը, հատկապես՝ լիարժեք ծրագրային բյուջետավորմանն անցում կատարելու համատեքստում:

Պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման վերաբերյալ ուսումնասիրության արդյունքում Հաշվեքննիչ պալատն արձանագրել է.

- «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված թվով 27 ծրագիր՝ ավելի քան 11 միլիարդ դրամ ընդհանուր ծավալով, չի կատարվել, այլ կերպ ասած, դրանց գծով վճարումներ չեն իրականացվել,
- թվով 11 ծրագիր՝ ավելի քան 2 միլիարդ դրամ ընդհանուր ծավալով, ճշտված ծրագրով զրոյացվել է,

- 54 ծախսային ծրագրի փաստացի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 50%-ից ցածր՝ առաջացնելով տարեկան ճշտված ծրագրի նկատմամբ 15.9 մլրդ դրամի շեղում,
- 14 ծախսային ծրագիր օրենքով նախատեսված չի եղել, սակայն հետագայում կառավարությունը դրանք ճշտված ծրագրով ավելացրել է՝ 11.1 մլրդ դրամ, իսկ հետագայում պարզվել է, որ փաստացի դրանից կատարվել է միայն 8.7 մլրդ դրամի ծախս:

Ըստ Հաշվեքննիչ պալատի եզրակացության՝ ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացված «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվությունում եկամուտներին, ծախսերին և դեֆիցիտին ամրագրված ցուցանիշները համապատասխանել են «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին և արտացոլել են պետական բյուջեի փաստացի կատարողականը: Ըստ այդմ, ՀՀ հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրամադրել է դրական եզրահանգում:

Ծանոթություն: Հաշվեքննիչ պալատը ՀՀ Սահմանադրությամբ և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն 2020 թվականից սկսած իր հիմնական մանդատից բացի պարտավոր է իրականացնել ընթացիկ տարվա պետական բյուջեի կատարման հաշվեքննություն: Այսինքն՝ 2020 թվականին պետք է հաշվեքննի 2020 թվականի պետական բյուջեի կատարումը: Այն իրականացվելու է պետական բյուջեի երեք, վեց, ինը ամիսների և տարեկան կատարման ֆինանսական հաշվեքննությամբ և համապատասխանության հաշվեքննությամբ: Այդ նպատակով Հաշվեքննիչ պալատն իր 2020 թվականի գործունեության ծրագրի առաջին մասով հատուկ մեթոդաբանության շնորհիվ նախատեսել է մի շարք պետական մարմիններում իրականացնել ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ: Բոլոր նշված հաշվեքննությունների արդյունքների հիման վրա Հաշվեքննիչ պալատը պետք է պատրաստի 2020 թվականի պետական բյուջեի կատարման եզրակացություն՝ տալով աուդիտորական համապատասխան կարծիք: Նշված եզրակացությունը ներկայացվում է Ազգային ժողով, քանի որ վերջինս այդ եզրակացության հիման վրա է քննարկում և հաստատում Կառավարության կողմից ներկայացված պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը:

ՄԱՍ 2. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատը տարեկան հաղորդման մեջ արտացոլում է հաշվեքննության առավել ուշագրավ արդյունքները, իսկ հաշվեքննության բոլոր մանրամասները ներկայացված են ընթացիկ եզրակացություններում, որոնք հրապարակված են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում: Այս մոտեցումը նպատակ ունի Հաշվեքննիչ պալատի տարեկան հաղորդումն անհարկի չծանրաբեռնել, դարձնել մատչելի, դրանում ներառել միայն էական նշանակության տեղեկություններ:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտները		Ստուգման օբյեկտը	
ՀՀ մի շարք պետական մարմիններ		«Հայաստան» համահայկական հիմնադրամ	
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
29.08.2018-30.09.2019թթ.		01.01.2015-31.12.2017թթ.:	
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված «Հայաստան» համահայկական հիմնադրամում գնումների գործընթաց		Իրականացվել է համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն: Կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ	
2	2	1	
Եզրակացություն			Հղումը
Ծախսային արդյունավետության սկզբունքը չի պահպանվել:			

Առավել ուշագրավ փաստեր

Գուդրոնի, բիտումի և մազութի գնման գործընթաց²

Հիմնադրամի կողմից 2015 թվականի ապրիլի 8-ին հայտարարվել է մրցույթ՝ 14,000 տոննա ռուսական հումքից ստացված 90/130 տեսակի բիտումի ձեռքբերման համար: Այդ մրցույթի միակ մասնակիցը եղել է «Մերիան Գրուպ» ՍՊԸ-ն: Վերջինս ճանաչվել է հաղթող՝ 2,947,458.5 հազ. դրամ գնառաջարկով: Մեկ տոննայի գինը կազմել է 210.5 հազ. դրամ:

2015 թվականի հունիսի 18-ին հիմնադրամի և «Մերիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքվել է 15,625 տոննա գուդրոնի վերամշակման և տեղափոխման «Հանձարարության, մատակարարման և ծառայությունների մատուցման» պայմանագիր, որի համաձայն՝ ընկերությունը պետք է Ռուսաստանի Դաշնությունից ներկրի 15,625 տոննա գուդրոն, այնուհետև, վերամշակի այդ գուդրոնը՝ ստանալով 15,000 տոննա 90/130 տեսակի բիտում և մատակարարի համապատասխան ընկերություններին: Պայմանագրի արժեքը կազմել է 3,157,991.3 հազ. դրամ: Այս դեպքում ևս՝ մեկ տոննա բիտումի գինը կազմել է 210.5 հազ. դրամ:

Այսինքն՝ գուդրոնի ձեռքբերման և վերամշակման տարբերակով բիտումի ձեռքբերումը խնայողություններ չի ենթադրում:

Հիմնադրամի կողմից չեն ներկայացվել պատրաստի բիտումը գուդրոնով փոխարինելու հիմնավորումները, ինչպես նաև՝ գուդրոնի և բիտումի գների շուկայական ուսումնասիրությունները:

Պայմանագրում իրականացվել են մի շարք փոփոխություններ: Մասնավորապես, առանց համապատասխան հիմնավորումների, կրճատվել է մատակարարման ենթակա գուդրոնի ծավալը՝ այն նվազեցնելով մինչև 12,504.5 տոննա:

6,901 տոննա ռուսական գուդրոնի ներմուծումից հետո նախատեսվել է գուդրոն ներմուծել Իրանի Իսլամական Հանրապետությունից:

Անընդհատ փոխվել են գուդրոնի մատակարարման գները, տարանջատվել են տրանսպորտային և վերամշակման ծախսերը:

2015թ.-ին, համաձայն ընդունման-հանձնման փաստաթղթերի, մատակարարվել է 6,901 տոննա գուդրոն՝ 1,381,333.2 հազ. դրամ արժեքով (**հապկանշական է, որ ներկայացված մաքսային փաստաթղթերի համաձայն՝ «Մերիան Գրուպ» ՍՊԸ-ն ներմուծել է 4,565 տոննա հեղուկ գուդրոն:**

2015թ.-ին ներմուծված և մատակարարված գուդրոնի մեկ տոննայի արժեքն, ըստ մատակարարման և վճարման փաստաթղթերի, ավել է եղել քան պայմանագրով նախատեսված արժեքներն են: Մասնավորապես, 2015թ.-ին ներմուծված և մատակարարված գուդրոնի մեկ տոննայի արժեքը, ըստ մատակարարման և

² Հաշվեքննության ընթացքում կահույքի, կենցաղային տեխնիկայի, գուդրոնի, բիտումի և մազութի գնման գործընթացների ստուգմամբ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ կազմված առերևույթ հանցագործության հապկանիշներ պարունակող 2 արձանագրություններ ՀՀ հաշվեքննիչ պալատի որոշմամբ ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն

վճարման փաստաթղթերի, կազմել է 158.5-ից 160.1 հազ. դրամ՝ այն դեպքում, երբ վերը նշված պայմանագրով մեկ տոննայի ներմուծումը նախատեսված է եղել 156.6 հազ. դրամ: **Արդյունքում, բիտումի և մազութի ձեռքբերման համար ավել է վճարվել 66,540.9 հազ. դրամ:**

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության, տվյալ ժամանակահատվածում բիտումի ներմուծման գները էապես ցածր են եղել: Մասնավորապես, երկու խոշոր ներմուծողների կողմից (որոնց ներմուծումների ծավալը 2015 թվականին կազմել է երկրի ընդհանուր ծավալի ավելի քան 70%-ը) ներմուծվել են տվյալ ժամանակահատվածում մեկ տոննա պատրաստի բիտում 143 հազ. դրամ միջին ձեռքբերման գնով: Մաքսագերծման մեկ տոննայի արժեքը կազմել է 167.4 հազ. դրամ: Պայմանագրի ընթացքում «Մերիան գրուպ» ՍՊԸ-ն իրականացրել է պատրաստի բիտումի ներմուծում Ռուսաստանի Դաշնությունից շուրջ 3,000 տոննայի չափով, մեկ տոննայի միջին արժեքը՝ 130 հազ. դրամով (վերոնշյալ պայմանագրով մեկ տոննայի արժեքը կազմում է 210.5 հազ. դրամ՝ ներառյալ մատակարարման ծախսերը): Ռուսական կողմի մատակարար և Հայաստանում գուդրոնի վերամշակող կողմ հանդիսացող ընկերությունը ևս ներմուծել է պատրաստի բիտում՝ 1,480 տոննա, մեկ տոննայի միջին արժեքը՝ 135 հազ. դրամով: Հատկանշական է նաև, որ 2015 թվականին հիմնադրամը նույնպես ներմուծել է պատրաստի բիտում՝ 173 հազ. դրամով:

«Մերիան գրուպ» ՍՊԸ-ին մեկ տոննա գուդրոնի համար 2017 թվականին վճարվել է 152 հազ. դրամից ավելի գումար, իսկ վերամշակված և տեղափոխված բիտումի ծախսերը, ներառված Հիմնադրամին մատակարարվող մեկ տոննա բիտումի արժեքը, կազմում է ավելի քան 195 հազ. դրամ՝ այն դեպքում, երբ 2017թ.-ին Հիմնադրամը ներմուծել է 190 տոննա պատրաստի բիտում՝ մեկ տոննայի արժեքը՝ մոտ 146 հազ. դրամով: Հատկանշական է, որ, համաձայն ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության, ծրագրի գլխավոր կապալառուներից մեկը ներմուծել է պատրաստի բիտում՝ մեկ տոննայի ձեռքբերման արժեքը՝ 145 հազ. դրամով (մաքսային արժեքը՝ 150 հազ. դրամով):

«Մերիան գրուպ» ՍՊԸ-ի պայմանագրով նախատեսված ամբողջ ծավալը չի մատակարարվել (փաստացի չի մատակարարվել 1,753 տոննա), պայմանագրում համապատասխան փոփոխություններ չեն իրականացվել: Պայմանագրի 5.1 կետով՝ ապրանքը ժամկետանց տեղափոխելու կամ ապրանքը ժամկետանց վերամշակելու համար նախատեսված է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար չմատակարարված ապրանքի արժեքի 0.1 տոկոսը, բայց ոչ ավելի քան չմատակարարված ապրանքի արժեքի 10 տոկոսը:

Մազութի և բիտումի մյուս կնքված պայմանագրերը չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Մասնավորապես, պայմանագրերը կնքվել են առանց համապատասխան մրցույթի անցկացման, չնայած այն բանի, որ պայմանագրերի արժեքը կազմել է 162,960-ից 27,816 հազ. դրամ, ինչպես նաև չի իրականացվել ձեռքբերվող ապրանքի շուկայական արժեքի ուսումնասիրություն, գնահատում և նախահաշվային արժեքի կազմում:

2015թ. օգոստոսի 4-ին հիմնադրամի (հանձնարարող), «ԲԱՐՍԵԼ» ՍՊԸ-ի (հանձնակատար) և «ԴՈՐՈՇՆԻԿ» ՍՊԸ-ի (ստացող) միջև կնքվել է պայմանագիր, համաձայն որի, հանձնակատարը Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման շինարարական աշխատանքների համար պետք է Իրանի Իսլամական Հանրապետության GOHAR DARADIZ JOLFA LTD ընկերությունից ձեռքբերեր և Հայաստան տեղափոխեր Իրանական նավթի ազգային ընկերության կողմից արտադրված M-100 տիպի 800 տոննա մազութ: Պայմանագրով նախատեսվել է մազութը ձեռքբերել մինչև նոյեմբերի 30-ը, պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 162,960 հազ. դրամ, այդ թվում՝ 1,250 հազ. դրամ միջնորդավճար, մեկ տոննա մազութի ձեռքբերման արժեքը նախատեսվել է 203.3 հազ. դրամ:

Փաստացի ներմուծվել է 224.9 տոննա մազութ՝ նախատեսվածից 575.1 տոննա պակաս: Մազութի չմատակարարված քանակության մասով պայմանագիրը չի խզվել, և պայմանագրային պարտավորությունների դադարման վերաբերյալ համաձայնագիր չի կնքվել: Ներմուծումը փաստացի կատարվել է երեք խմբաքանակներով, համապատասխանաբար, օգոստոս ամսին՝ 80.45 տոննա՝ մեկ տոննայի մաքսային արժեքը՝ 203.3 հազ. դրամ, սեպտեմբեր ամսին՝ 24.48 տոննա՝ մեկ տոննայի մաքսային արժեքը՝ 181.2 հազ. դրամ, և հոկտեմբեր ամսին՝ 119.98 տոննա՝ մեկ տոննայի մաքսային արժեքը՝ 200.6 հազ. դրամ:

Հարկ է նշել, որ, համաձայն ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության, նույն ժամանակաշրջանում այլ ընկերության կողմից ներմուծվել է մազութ՝ մեկ տոննայի մաքսային արժեքը՝ 145 հազ. դրամով (իսկ ձեռքբերման արժեքը՝ 110 հազ. դրամ): 2016թ. սեպտեմբերի 23-ին հիմնադրամի (հանձնարարող), «ԲԱՐՍԵԼ» ՍՊԸ-ի (հանձնակատար) և «ՀԱՅԿ-ՇԻՆ» ՍՊԸ-ի (ստացող) միջև կնքվել է պայմանագիր, համաձայն որի, հանձնակատարը Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման շինարարական աշխատանքների համար պետք է իրանական ընկերությունից ձեռք բերեր և Հայաստան տեղափոխեր Իրանական նավթի ազգային ընկերության կողմից արտադրված M-100 տիպի 300 տոննա մազութ: Պայմանագրով նախատեսվել է մազութը ձեռք բերել մինչև դեկտեմբերի 31-ը, պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 52,980 հազ. դրամ, այդ թվում՝ 120 հազ. դրամ միջնորդավճար, մեկ տոննա մազութի ձեռք բերման արժեքը նախատեսվել է 176.2 հազ. դրամ:

Փաստացի ներմուծվել է 98.6 տոննա մազութ՝ նախատեսվածից 201.4 տոննա պակաս: Մազութի չմատակարարված քանակության մասով պայմանագիրը չի խզվել, և պայմանագրային պարտավորությունների դադարման վերաբերյալ համաձայնագիր չի կնքվել: Պայմանագրով նախատեսվել է ձեռքբերել Իրանի ծագման մազութ, սակայն, համաձայն մաքսային հայտարարագրի, ներմուծվել է Իրաքի ծագման մազութ:

Այսպիսով մատակարարված ապրանքների գներն էապես փարբերվում են (բարձր են) այլ ներմուծող ընկերությունների կողմից կատարված ներմուծումների գներից:

Կահույքի և կենցաղային փեխնիկայի գնման գործընթաց

2015-2017 թվականների ընթացքում «Հայաստան» համահայկական հիմնադրամի և «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի միջև կքվել են գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման 50 պայմանագիր՝ 948,527.1 հազ. դրամ արժեքով, փաստացի կատարողականը, ըստ տրամադրված տեղեկատվության, կազմել է 895,698.6 հազ. դրամ, վճարումը՝ 919,428.0 հազ. դրամ:

Հիմնադրամի և «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի միջև բոլոր պայմանագրերը, անկախ գումարի մեծությունից, կնքվել են ուղղակի ձևով: Պայմանագրերը կնքվել են առանց գնման հայտի և գնման առարկայի բնութագրի հաստատման: Կնքված բոլոր պայմանագրերում բացակայում են գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, որտեղ պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրվեին ձեռք բերվող ապրանքների հատկանիշները (չափսեր, ձև, օգտագործվող նյութեր և այլն), ինչպես նաև՝ դրանց վերաբերվող պայմանների հստակ նկարագրությունը:

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքների գներն էականորեն բարձր են շուկայում առկա նմանատիպ ապրանքների գներից: Բազմաթիվ ապրանքների մատակարարման գծով ընկերությունը հանդիսացել է որպես միջնորդ, և ձեռք բերված ապրանքները վաճառել է հիմնադրամին՝ մինչև 380 տոկոս ավելի գնով: Մասնավորապես.

- Հիմնադրամի կողմից անապահով ընտանիքների համար ձեռք բերված բնակարանների, կառուցված առանձնատների, կառուցված և հիմնանորոգված մանկապարտեզների ու դպրոցների համար գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման համար կնքված պայմանագրերով նախատեսված ապրանքներից՝ կենցաղային տեխնիկական (հեռուստացույցներ, սառնարաններ, գազօջախներ, օդաքաշ պահարաններ) «ՀԱՏՄ» ՍՊԸ-ն ձեռք է բերել մատակարար ընկերությունից՝ 23,609.1 հազ. դրամով և վաճառել՝ 39,996.8 հազ. դրամով կամ 16,387.7 հազ. դրամով ավելի բարձր գնով:

- Ռուսաստանի Դաշնությունից ներմուծված դահլիճի աթոռները «ՀԱՏՄ» ՍՊԸ-ն ձեռք է բերել 11,103.2 հազ. դրամով, վաճառել Հիմնադրամին՝ 29,360.0 հազ. դրամով կամ 18,256.8 հազ. դրամով ավելի թանկ, կիսափափուկ աթոռները ձեռք է բերել 12,360.5 հազ. դրամով, վաճառել՝ 35,160.7 հազ. դրամով կամ 22,792.3 հազ. դրամով ավելի թանկ, ծալվող աթոռները ձեռք է բերել 18,168.3 հազ. դրամով, վաճառել՝ 58,418.4 հազ. դրամով կամ 40,249.9 հազ. դրամով ավելի բարձր գնով:

Այսպիսով, հիմնադրամն ապրանքները ձեռք չի բերել մրցույթների կազմակերպման միջոցով՝ արտադրողներից կամ ներմուծողներից, փոխարենը՝ կատարել է միջնորդավորված գնումներ, նշված ապրանքները ձեռք են բերվել ավելի բարձր գներով:

Ընդհանուր առմամբ, կնքված պայմանագրերի շրջանակում «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ձեռք բերված և Հիմնադրամին 269.0 մլն դրամով վաճառված կենցաղային տեխնիկայի, փափուկ կահույքի և կահույքի տարբեր բաղադրիչների գնային տարբերությունները կազմել են շուրջ 117.1 մլն դրամ:

«Անապահով ընտանիքներին տրամադրելու համար», «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից արտադրվել և «Հայաստան» համահայկական հիմնադրամին վաճառվել է 169.2 ք/մ

խոհանոցի կահույք՝ պատրաստված լամինացված ԴՄ-ից, որի մեկ ք/մ-ի գինը սահմանվել է 105.0 հազ. դրամ՝ առանց հարկերի: Շուկայական գների ուսումնասիրությունից պարզվել է, որ լամինացված ԴՄ-ից պատրաստված խոհանոցի կահույքի մեկ ք/մ-ի գինը շուկայում կազմել է 40.0-ից 60.0 հազ. դրամ, այդ թվում՝ հարկերը, կամ հիմնադրամը խոհանոցի կահույքը ձեռք է բերել շուրջ 9.3 մլն դրամով ավելի թանկ:

Հարկ է նշել, որ «ՀԱՏՄ» ՍՊԸ-ն նույն ժամանակաշրջանում նմանատիպ կահույք վաճառել է ավելի էժան գներով (43,2-85,0 հազ. դրամ): ***Այսինքն «ՀԱՏՄ» ՍՊԸ-ն իր այլ առևտրային գործունեության շրջանակներում նմանատիպ ապրանքները մատակարարել է շատ ավելի էժան, քան՝ Հիմնադրամին:***

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ից ձեռք բերված հյուրասենյակի պահարանների, ննջասենյակի պահարանների, երկտեղանոց մահճակալների և երկհարկանի մահճակալների գները 16-34 տոկոսով գերազանցում է Հիմնադրամի կողմից «Բելինդա» և «Արման Գևորգյան» ՍՊԸ-ներից ձեռք բերված նմանատիպ ապրանքների գները:

Ըստ էության, «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ապրանքների մատակարարումը Հիմնադրամին պետք է լիներ հնարավորինս մարչելի և նպաստեր Հիմնադրամի միջոցների խնայողությանը, սակայն, իրականում տեղի է ունեցել հակառակ գործընթացը:

«Արման Գևորգյան» ՍՊԸ-ի, «Բելինդա» ՍՊԸ-ի, «ԷԿԱ» ՍՊԸ-ի հետ պայմանագրերը կնքվել են ուղղակի ձևով՝ առանց գնման հայտի և գնման առարկայի բնութագրի (չափսեր, ձև, օգտագործվող նյութեր և այլն) հաստատման: Գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, որտեղ պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրվեն ձեռք բերվող ապրանքների հատկանիշները, ինչպես նաև՝ դրանց վերաբերվող պայմանների հստակ նկարագրությունը, բացակայում են: Ապրանքները ձեռք են բերվել կամայական ձևով:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներ

- Հիմնադրամին մատուցված ծառայությունների ժամանակ օգտագործված, հետ վերադարձման ենթակա ապրանքներից 120,314.8 հազ. դրամի ապրանքներ հետ չի վերադարձվել Հիմնադրամին, չի մուտքագրվել պահեստ և չի հաշվառվել, իսկ դրանց դիմաց որևէ պարտավորություն չի ձևավորվել:
- Հիմնադրամի կողմից վարձակալված գներատորների շահագործման համար տրամադրվել է պահանջվող էլեկտրաէներգիայից մի քանի անգամ շատ էլեկտրաէներգիա արտադրելու համար վառելիք:
- Օտարերկրյա ֆիզիկական անձանց, լրատվամիջոցների համար նյութերի պատրաստման, մամլո ասուլիսի և գովազդի կազմակերպման ծառայությունների համար վճարվել է շուրջ 15 մլն դրամ կանխիկ գումար, սակայն մատուցված ծառայությունների վերաբերյալ կազմված հաշվետվությունները բացակայում են:
- Հիմնադրամը ԱՊՀ տարածքում «ՍՊԻ» ֆիլմի ցուցադրման 50 տոկոսի իրավունքը ձեռք բերելու և ֆիլմի ցուցադրումից ստացված եկամտի 50%-ը ստանալու

համար 106,000.0 հազ. դրամ արժեքով (200,000 եվրո) պայմանագիր է կնքել, սակայն 01.07.2019 թվականի դրությամբ Հիմնադրամին ֆիլմի ցուցադրումից որևէ գումար չի փոխանցվել: Ըստ համացանցում առկա տեղեկատվության՝ ԱՊՀ տարածքում ֆիլմի ցուցադրումից միայն 2015 թվականին ստացվել է 140.2 հազ. ԱՄՆ դոլար եկամուտ:

- Ընդհանուր առմամբ, նկարահանված կինոնկարների ցուցադրումից ստացված եկամտից մեկ տարի շարունակ Հիմնադրամին պետք է փոխանցվեր գումարներ /10%-ի և 15%-ի չափով/, ինչը չի արվել:
- Կազմակերպած համերգների տոմսերի վաճառքից ստացված 46,734.9 հազ. դրամ եկամուտը ՀՀ պետական բյուջե չի փոխանցվել, այլ օգտագործվել է Հիմնադրամի սեփական կարիքների համար:
- Երեք տարբեր միջոցառումների կազմակերպման համար (մեկ մեդիա ֆորում և երկու համերգ) պայմանագրերով նախատեսվածից 22,310.7 հազ. դրամ գումարի չափով ավել է վճարվել:
- «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ը, Վարշավայում, Նյու-Յորքում, Լոնդոնում, Գյոթեբորգում, Փարիզում և Մոսկվայում կազմակերպված գրքի միջազգային ցուցահանդես-տոնավաճառների արդյունքում ստացած եկամուտը պետք է փոխանցեր ՀՀ պետական բյուջե, ինչը չի կատարվել:
- Հիմնադրամի կողմից միջոցառումների մասնակիցների քանակի սխալ պլանավորման արդյունքում ամրագրված մեծ թվով սենյակների չեղարկելու պատճառով հյուրանոցային ընկերության կողմից կիրառվել է պայմանագրով նախատեսված տուգանք 14,088.4 հազ. դրամի չափով:
- Հիմնադրամը Գերմանիայում գրանցված ընկերությունից վարձակալել է 310 մետր ալյումինե արգելափակոցներ 475.3 տոկոսով ավելի թանկ և վճարել է 10,902.8 հազ. դրամ ավելի գումար, քան եթե այն ձեռք բերեր ՀՀ շուկայից:
- Միջոցառումների անցկացման ընթացքում ձեռք բերված ապրանքները՝ 77,399.9 հազ. դրամի գույքը և մի շարք ապրանքներ ու հաստոցներ, առանց Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատման որոշման, անհատույց, վեց տարի ժամկետով և պայմանով, որ պայմանագրի ժամկետը լրանալուց հետո գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետք է անցներ կոնցեսիոներին, կնքված «Գույքի կոնցեսիոն կառավարման պայմանագրի» համաձայն հանձնել է «Լոմա Սիսթեմս» ՍՊԸ-ին:

Վարդենիս - Մարտակերտ ավտոճանապարհի վերակառուցման ծրագիր

Ծրագրի շրջանակում վերակառուցվել է 131,9 կմ երկարությամբ ասֆալտբետոնե ծածկույթով ավտոճանապարհ, որի գերակշռող մասը Արցախի Հանրապետության տարածքում: Ընդհանուր 17,163,000.0 հազ. դրամ աշխատանքներից 10,521,000.0 հազ. դրամի աշխատանքներն իրականացվել են եռակողմ պայմանագրերով, որտեղ պատվիրատու 1-ը հանդիսացել է Հիմնադրամը, իսկ պատվիրատու 2-ը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը: Վերակառուցված ճանապարհի որոշակի

հատվածներում ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքներին գրեթե զուգահեռ, նույն կապալառուների կողմից, Արցախի Հանրապետության կառավարության ծրագրերով և ֆինանսավորմամբ իրականացվել են նմանատիպ աշխատանքներ, որոնց վերաբերյալ որևէ փաստաթուղթ հաշվեքննությանը հասանելի չի եղել: Հաշվեքննության ընթացքում պահանջված փաստաթղթերը տրամադրվել են հատվածաբար և ոչ ամբողջական ծավալով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի վերակառուցման ծրագրի մասով անհրաժեշտ և պահանջված տեղեկատվությունն ամբողջական և ճշգրիտ չի եղել, ուստի հնարավոր չի եղել հետազոտել բոլոր փաստերը և տրամադրել եզրակացություն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտները

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն

Հաշվեքննության կատարման ժամկետը

07.02.19-27.12.19թթ.

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

01.01.18-31.12.18թթ.

Հաշվեքննության առարկան

Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարում:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային (ISSAI 100, 200 և 400) ստանդարտներին համապատասխան ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն:

Համակարգին միտված առաջարկություններ

16

Արդյունքին միտված առաջարկություններ

15

Խնդիրներին միտված առաջարկություններ

21

Հաշվեքննության կարծիք

Հղումը

Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:



Ծանոթություն: Սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ ՍԱԾ) տեղեկատվական շտեմարանում, սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում, բնակչության պետական ռեգիստրում և այլ շտեմարաններում առկա տվյալների համադրման արդյունքում պարզվել է, որ կենսաթոշակների և նպաստների վճարման գործընթացում առկա են խեղաթյուրման էական ռիսկեր:

Առավել ուշագրավ փաստեր

Աշխատանքային կենսաթոշակ

- Երկրից 12 ամիս բացակայող աշխատանքային կենսաթոշակի շահառուներին փաստացի վճարվել է անկանխիկ եղանակով 3,003,416.9 հազ. դրամ, կանխիկ եղանակով՝ 1,781,197.0 հազ. դրամ: Երկրից բացակայող և այլ անձին լիազորագրով իրավասություն չտրված անձին կենսաթոշակի տրամադրումը ռիսկային է:
- Երկրից 3-9-ը ամիս բացակայող աշխատանքային կենսաթոշակի շահառուներին կանխիկ եղանակով փաստացի վճարվել է 3,945,015,0 հազ. դրամ: Ծառայությունը, հաշվի առնելով քաղաքացիների երկրից բացակայելու հանգամանքը, բավարար հսկողություն չի իրականացրել պարզելու համար, արդյոք տվյալ անձինք պահանջվող ժամանակաշրջանում իրականում ներկայացել և ստացել են կենսաթոշակ:
- Հայաստանի և Արցախի Հանրապետությունների միջև 2017 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված թիվ 1220-ԱԳ հուշագրով Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի շահառուներին վճարվել են կենսաթոշակներ՝ 6,510,535.8 հազ. ՀՀ դրամ գումարով: Առկա են ռիսկեր՝ պայմանավորված հաշվեքննության ենթակա մարմնում շահառուների ցանկի բացակայությամբ:
- Քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող քաղաքացիների և հոգեբուժական բժշկական կազմակերպություններում բուժում ստացող անձանց վճարված կենսաթոշակի գումարները համարվում են ռիսկային՝ շահառուների նույնականացման հնարավորության բացակայության պատճառով:
- Կենսաթոշակի մասով «Հայփոստ» ՓԲԸ-ին 2018թ.-ին մատուցած ծառայությունների դիմաց հաշվարկվել և վճարվել է 1,330,798.5 հազ. ՀՀ դրամ, իսկ բանկերին՝ 86,545.0 հազ. ՀՀ դրամ: Բանկերի հետ կնքած պայմանագրերով մեկ կենսաթոշակառուի հաշվարկով Ծառայության կողմից հաշվարկվել և վճարվել է տարեկան 360 ՀՀ դրամ, իսկ «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրով՝ 4,468 ՀՀ դրամ կամ 12.4 անգամ ավելի: «Հայփոստ» ՓԲԸ-ի միջնորդավճարի չափը հիմնավորված չէ:
- 2018թ.-ի բյուջետային հայտով թոշակառուների ցուցակները ճշգրտելու, չհիմնավորված փաստաթղթերի հիման վրա աշխատանքային ստաժի հաշվարկման գործընթացում առկա ռիսկերի նվազեցման և վարչարարության ուղղությամբ իրականացվող միջոցառումների շրջանակներում, նախատեսվում էր 13 մլրդ դրամով տնտեսել բյուջետային միջոցներ, ինչը սակայն չի կատարվել:

Ընդանեկան նպաստ

Տարբեր տեղեկատվական շտեմարանների համադրման արդյունքների, հանրապետությունից տարբեր ժամանակահատվածներով բացակայելու և մի շարք ծածկագրերի սխալ կիրառման հետևանքով «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի հաշվեքննությամբ արձանագրվել են հնարավոր էական ռիսկեր՝ 510.4 մլն դրամ: Այդ թվում՝

- 52 Սոցիալական աջակցության տարածքային գրասենյակներում (ՍԱՏԳ) հաշվառված 2148 ընտանիքների 2603 սոցիալական որևէ խումբ ունեցող անդամներ 31.12.2018թ.-ի դրությամբ, 90-ից ավելի օրեր բացակայել են ՀՀ-ից և նրանց վճարվել է ընտանեկան կամ սոցիալական նպաստ կամ հրատապ դրամական օգնություն՝ 326.3 մլն դրամ:
- 53 ՍԱՏԳ-ներում հաշվառված 1337 ընտանիքների 2091 սոցիալական որևէ խումբ ունեցող անդամներ 31.12.2018թ.-ի դրությամբ բացակայել են ՀՀ-ից (2017-2018թթ.-ի ընթացքում ՀՀ-ից դուրս եկած՝ 31.12.2018թ.-ի դրությամբ չվերադարձած): Նշված ընտանիքներին 2018թ.-ին վերոնշյալ անձանց բացակա լինելու ժամանակահատվածներում վճարվել է ընտանեկան կամ սոցիալական նպաստ կամ հրատապ դրամական օգնություն՝ 181.8 մլն դրամ:
- 46 դեպքերում, ընտանիքում Ա34 և/կամ Մ45 ծածկագրերով անձի ծնողների միջև գրանցվել է փաստացի ամուսնություն, որից հետո շահառուն ստանում է նպաստի գումարները: 17 դեպքերում ընտանիքում Ա34 և/կամ Մ45 ծածկագրերով անձի ծնողը ամուսնացել է այլ անձի հետ, սակայն շահառուն ստանում է նպաստի գումարները: 7 դեպքերում ընտանիքում Ա34 և/կամ Մ45 ծածկագրերով անձը ամուսնացել է, հաշվառվել է ներկա և շահառուն ստանում է նպաստի գումարները: Արդյունքում ավել է վճարվել 2.3 մլն դրամ նպաստ:

Պարգևավճարների տրամադրում

Արձանագրվել են պարգևավճարների կանխիկ վճարման բազմաթիվ դեպքեր, որոնք պարունակում են հնարավոր ռիսկեր: Մասնավորապես.

- ՀՀ Պաշտպանության նախարարության համակարգի շահառուների 50.1 %-ի պարգևավճարները 2018թ.-ին տրամադրվում են կանխիկ տարբերակով՝ 1.3 մլրդ դրամ:
- Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի պարգևավճարների մասով ամբողջ կազմը, ինչպես նախկինում, այնպես էլ՝ 2018 թվականին, վճարվում է կանխիկ ձևաչափով՝ 2.9 մլրդ դրամ:
- Տարբեր տեղեկատվական շտեմարանների համադրման արդյունքների, ՍԱԾ, ՀՀ պաշտպանության նախարարության Ռազմա-Բժշկական Հանձնաժողովի (ԿՌԲՀ) և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Բժշկա-Սոցիալական Փորձաքննության գործակալության (ԲՍՓԳ) փաստաթղթային հաշվեքննության արդյունքում «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին (այսուհետ՝ ՀՄՊ), ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1

հողվածի 1-ին մասով սահմանված պարզեցվածության տրամադրում» ծրագրի հաշվեքննությամբ արձանագրվել են խեղաթյուրման էական ռիսկեր՝ 15.3 մլն դրամ:

Թաղման նպաստ

- Առկա են մեկ անձի կողմից թաղման նպաստ ստանալու բազմաթիվ դեպքեր, մասնավորապես, 6 անձինք ստացել են 103 թաղման նպաստներ, 20.6 մլն դրամ:

Մայրության նպաստ

- 2018թ.-ին մայրության նպաստի մասով 1,472 կազմակերպությունների տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկը բավարար չի եղել պետական բյուջեից վճարման ենթակա գումարները վճարելու համար, ուստի համաձայն սահմանված կարգով ներկայացված տեղեկանքների, ՍԱԾ-ը եկամտային հարկի չբավարարող մասը, որը վճարվել էր գործատուի միջոցներից, 307,884.4 հազ. դրամ գումարի չափով փոխհատուցել է համապատասխան գործատուներին: Արդյունքում, ՀՀ ՊԵԿ-ին ավելի է փոխանցվել 307,884.4 հազ. ՀՀ դրամ՝ գործատուներին ՍԱԾ-ի կողմից փոխհատուցված գումարը:

- Գործատուների մոտ եկամտային հարկի հաշվին ժամանակավոր անաշխատունակության նպաստների գծով ծախսերի ֆինանսավորման ենթակա գումարների մասին տեղեկատվական բազայում առկա են մեկ անձին երկու և ավելի անգամ մայրության նպաստի գումարի վճարումներ՝ 43.8 մլն դրամ գումարի չափով:

Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստներ

«Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստներ» ծրագրի հաշվեքննությամբ արձանագրվել են խեղաթյուրման էական ռիսկեր: Մասնավորապես, ՍԱԾ տեղեկատվական շտեմարաններում, սահմանային էլեկտրոնային տեղեկատվական համակարգում և բնակչության պետական ռեգիստրում առկա տեղեկատվության համադրման արդյունքում պարզվել է, որ 36 սոցիալական ապահովության տարածքային բաժիններում 119 շահառուների նպաստի կանխիկ վճարման 185 դեպքով 3.4 մլն դրամի վճարումները կատարվել են վերջիններիս՝ ՀՀ-ից փաստացի բացակայելու ժամանակահատվածում:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ արդարադատության նախարարություն

Հաշվեքննության կատարման ժամկետը

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

20.05.19-30.03.20թթ.

01.01.18-30.06.19թթ.

Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ֆինանսատնտեսական գործունեություն		Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Կիրառվել են գնում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը:
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ

1

4

1

Հաշվեքննության կարծիք	Հղում
Ֆինանսական հաշվեքննության մասով տրվել է «դրական եզրահանգում» կարծիք, համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:	

Ծանոթություն: Դեռևս 2018 թվականին Հաշվեքննիչ պալատն ուսումնասիրել էր ԴԱՀԿ 2016-2017թթ. գործունեությունը: Արձանագրվել էին խոշոր չափերի խեղաթյուրումներ և անհամապատասխանություններ: Նյութերն ուղարկվել էին ՀՀ գլխավոր դատախազություն և այժմ հարուցած է 7 քրեական գործ, ընդհանուր առմամբ 1,379,354.0 հազ. ՀՀ դրամի պեղծությանը վնաս պատճառելու համար: 2019 թվականին Հաշվեքննիչ պալատը կրկին ուսումնասիրել է ԴԱՀԿ գործունեությունը և արձանագրել է, որ թեև նախորդ ուսումնասիրությամբ արձանագրված շեղումների որոշ մասը շտկվել էր, այնուամենայնիվ կրկին արձանագրվել են խնդիրներ:

Առավել ուշագրավ փաստեր

- 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում Ճանապարհային ոստիկանության պահանջով ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (այսուհետև՝ ԴԱՀԿ ծառայություն) կողմից հարուցված վարույթների կեսն ավարտվել է պարտապանների գույք կամ եկամուտ չունենալու հիմքով: Ընդ որում, պարտապան հանդիսացող 114 անձանց նկատմամբ 2018 թվականի ընթացքում հարուցվել և օրենքի սույն հիմքով ավարտվել են 100-ից ավելի կատարողական վարույթներ: Փաստորեն, այդ անձինք, չունենալով գույք կամ եկամուտ, փաստացի շահագործել են ավտոմեքենա և կատարել են բազմաթիվ խախտումներ, որի համար նրանց նկատմամբ հարուցվել և ավարտվել են 158,735.8 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 19,275 վարույթներ:

- 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում տաքսի ծառայություն մատուցող կազմակերպությանը պատկանող ավտոմեքենաներով խախտումների համար 2,753 վարչական ակտերով նշանակված 21,447.0 հազ. դրամի տուգանքներն արձանագրվել են գույք կամ եկամուտ չունեցող երեք ֆիզիկական անձի նկատմամբ, մեկ այլ կազմակերպությանը պատկանող ավտոմեքենաների 339 վարչական ակտերով 2,037.0 հազ. դրամի տուգանքներն արձանագրվել են գույք կամ եկամուտ չունեցող մեկ ֆիզիկական անձի նկատմամբ:
- Մեկ ֆիզիկական անձի նկատմամբ հարուցված 8,739.3 հազ. դրամի 1,100 կատարողական վարույթներ ավարտվել են գույք կամ եկամուտ չունենալու հիմքով այն դեպքում, երբ այդ ֆիզիկական անձն ունեցել է սեփականության իրավունքով իրեն պատկանող 11 ավտոմեքենա, որոնցից և ոչ մեկի վրա հարկադիր կատարողները բռնագանձում չեն տարածել:
- 2018 թվականին հարուցված և գույք կամ եկամուտ չունենալու հիմքով ավարտված 64,006.0 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 7,205 վարույթներով 100-ից ավելի խախտում կատարած 34 պարտապան ֆիզիկական անձ ունեցել է մեկ կամ ավելի սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոմեքենա, սակայն հարկադիր կատարողները պարտապանների ավտոմեքենաների վրա բռնագանձում չեն տարածել:
- 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պահանջով հարուցված 37,035.3 հազ. դրամի 56 կատարողական վարույթներ հարկադիր կատարողների որոշումներով ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Կատարողական վարույթն ավարտելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում» հիմքով: Փաստորեն, հարկադիր կատարողներն ընդամենը հղում են կատարել որոշում կայացնելու իրենց վերապահված իրավասությանը, սակայն որոշումներում բացակայում է վարույթն ավարտելու հիմքը:
- ՊԵԿ պահանջով պետական բյուջեի օգտին բռնագանձման ենթակա 10,000.0 հազ. դրամը գերազանցող ավարտված կատարողական վարույթներից երեք դեպքում պարտապան հանդիսացող իրավաբանական անձինք ունեցել են գույք, սակայն հարկադիր կատարողները գույքը հայտնաբերելու ուղղությամբ կատարողական գործողությունները պատշաճ չեն կատարել, ավարտել են վարույթները և պետական բյուջե մուտք չի եղել դրամական արտահայտությամբ՝ 153,862.3 հազ. դրամ:
- ՊԵԿ պահանջով 2018 թվականին հարուցված 242 կատարողական վարույթներ Ծառայության կողմից կարճվել են, քանի որ առկա են եղել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված հարկադիր կատարման սահմանափակումներ: Պարզվել է, որ ֆիզիկական անձանց նկատմամբ 200.0 հազ. դրամը գերազանցող, ինչպես նաև իրավաբանական անձանց նկատմամբ կարճված վարույթներով այդ վարչական ակտերը դատարանի վճռով տրված կատարողական թերթերով ՊԵԿ-ի կողմից չեն վերադարձվել Ծառայություն բռնագանձման համար: Այդ վարչական ակտերով պետական բյուջե մուտք չի եղել 563,302.0 հազ. դրամ, և խնդիրը ենթակա է ուսումնասիրության ՊԵԿ-ում հաշվեքննության շրջանակում:

- 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում ՊԵԿ պահանջով հարուցված 5155 կատարողական վարույթներ կարճվել են պահանջատիրոջ կողմից պահանջների կատարումից հրաժարվելու հիմքով: Արդյունքում, ՊԵԿ պահանջով հարուցված վարույթներից այդ հիմքով կարճվել են 374,558.8 հազ. դրամի վարույթներ, իսկ Ծառայությունը պահանջատիրոջից չի բռնագանձել կատարողական գործառույթների համար նվազագույն մեկ տոկոսի չափով իրեն հասանելիք գումարը:
- Հաշվի առնելով, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ավարտման հիմքերի վերացման դեպքերում հարկադիր կատարողը պահանջատիրոջ դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին, պետական բյուջեի օգտին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պահանջով բռնագանձման ենթակա գումարների մուտքերը ապահովելու նպատակով հարկադիր կատարողների և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մարմինների համար նպատակահարմար է իրավական ակտերով սահմանել հսկողության պարտադիր պարբերականություն՝ ավարտված կատարողական վարույթների ավարտման հիմքերի վերացումը հայտնաբերելու համար:
- 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ ԴԱՀԿ ծառայության տարբեր բաժինների դեպոզիտային հաշիվներին առկա է չպարզված 185,516.7 հազ. դրամի մնացորդ, որի պահանջատերերը տարիներ շարունակ անհայտ են: Այդ գումարները նպատակահարմար է փոխանցել պետական բյուջե՝ հետագայում պահանջատերերի ի հայտ գալու դեպքում պահանջը պետական բյուջեի միջոցների հաշվին բավարարելու պայմանով:
- ԴԱՀԿ ծառայության Երևանի բաժնի դեպոզիտային հաշվին առկա է տարբեր պետական մարմինների պահանջով բռնագանձված 44,533.0 հազ. դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել պետական բյուջե:
- ԴԱՀԿ ծառայությունը մրցույթ անցկացնելու փոխարեն կազմակերպության հետ մեկ անձից գնման եղանակով կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որով նախատեսվել էր կազմակերպել հյուրասիրություն և տոնական միջոցառումներ: Պայմանագրի շրջանակներում առանց կանխավճարի ապահովման տրվել է կանխավճար: Կնքված պայմանագրի տեխնիկական բնութագրերում բացակայում են տվյալներ միջոցառման կազմակերպման արժեքի, ֆիլմի պատրաստման արժեքի, ինչպես նաև բեյջերի, պաստառների գնի ու քանակի վերաբերյալ, և հնարավոր չէ գնահատել գնման շրջանակում 12,105.9 հազ. դրամ ծախսի հիմնավորվածությունը:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե

Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
24.09.19-24.12.19թթ.		01.01.18-31.12.18թթ.
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Գիտության կոմիտեի 2018 թվականի ֆինանսատնտեսական գործունեություն		Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային (ISSAI 100, 200 և 400) ստանդարտներին համապատասխան:
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
7	-	12
Հաշվեքննության կարծիք		Հղումը
Ֆինանսական հաշվեքննության արդյունքում տրվել է «Հրաժարում եզրահանգում ներկայացնելուց», իսկ համապատասխանության հաշվեքննություն մասով տրվել է «Բացասական եզրահանգում» կարծիք:		

Առավել ուշագրավ փաստեր

Պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մոնիթորինգ

ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մոնիթորինգի կարգի համաձայն՝ Գիտության կոմիտեի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից պետք է իրականացվեր ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային ծրագրերի պայմանագրային թեմատիկ նախագծերի մոնիթորինգ տարեկան մեկ անգամ՝ ոչ ուշ, քան կատարման ավարտից երեք ամիս առաջ:

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ 2018 թվականի ընթացքում կոմիտեի կողմից որևէ ծրագրի մասով կարգի համաձայն մոնիթորինգ չի իրականացվել:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորում

- Փաստացի դրամարկղային ծախսը ծրագրի մասով կազմել է 7,273,374.9 հազ. դրամ, որի շրջանակներում կազմակերպությունների հետ կնքվել են դրամաշնորհի տրամադրման պայմանագրեր: Կազմակերպությունները Կոմիտեին պետք է ներկայացնեին պայմանագրով նախատեսված ձեռքբերումները «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացնելու պատասխանատու

ստորաբաժանում և համակարգող սահմանելու, գնահատող հանձնաժողով սահմանելու մասին հրամանների, ինչպես նաև գնահատող հանձնաժողովների արձանագրությունների, կնքված պայմանագրերի պատճենները: Կոմիտեին ներկայացված հաշվետվություններում նշված փաստաթղթերը բացակայել են:

- Ծրագրի շրջանակներում բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվությունները լրացված են թերություններով, իսկ 4 կազմակերպության մասով 2018թ. տարեկան հաշվետվություն չի ներկայացվել:

- Կոմիտեն Գիտությունների ազգային ակադեմիային ծրագրի շրջանակում տրամադրել է 4,500,417.0 հազ. դրամ գումար: Ակադեմիայի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին հաշվետվությամբ 2017 թվականի տարեվերջի դեբիտորական պարտքը չի համապատասխանում 2018 թվականի տարեսկզբի դեբիտորական պարտքին: Արդյունքում, Կոմիտեի կողմից 816,104.7 հազ. դրամով մեծացվել է փաստացի ծախսի մեծությունը, որի վերաբերյալ որևէ հիմնավորում չի ներկայացվել:

Գիտական և գիտափոխնիկական նպատակային-ծրագրային հեղափոխություններ

Փաստացի դրամարկղային ծախսը կազմել է 135,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում կազմակերպությունների հետ կնքվել են դրամաշնորհի տրամադրման պայմանագրեր: Կազմակերպությունները Կոմիտեին պետք է ներկայացնեին պայմանագրով նախատեսված ծախսեր հաստատող բոլոր փաստաթղթերի պատճենները, ինչը բացակայել է հաշվետվություններում:

Գիտական և գիտափոխնիկական գործունեության պայմանագրային թեմատիկ հեղափոխություններ

- Փաստացի դրամարկղային ծախսը կազմել է 1,238,195.0 հազ. դրամ, որի շրջանակներում կազմակերպությունների հետ կնքվել են դրամաշնորհի տրամադրման պայմանագրեր: Կազմակերպությունները Կոմիտեին պետք է ներկայացնեին պայմանագրով նախատեսված ծախսերը հաստատող բոլոր փաստաթղթերի պատճենները, մինչդեռ կազմակերպությունների կողմից ներայացված ծրագրի ծախսերն առանձնացված չեն եղել կազմակերպության կողմից կատարված այլ ծախսերից:

- Ծրագրի շրջանակներում Հայաստանի երիտասարդական հիմնադրամին նվիրաբերության պայմանագրի հիման վրա տրամադրվել է 100,000.0 հազ. դրամ: Սույն պայմանագիրը չի համապատասխանում ՀՀ կառավարության «Գիտական և գիտափոխնիկական գործունեության պայմանագրային թեմատիկ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 2001 թվականի թիվ 1122 որոշման 3-րդ մասով սահմանված պահանջներին, որի համաձայն նախարարությունը հաստատում է թեմատիկ ֆինանսավորման գծով ֆինանսավորվող թեմաների ցանկը և դրանց ղեկավարների ցուցակը, որից հետո «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նշված ցանկում ընդգրկված թեմաների ղեկավարների հետ կնքվում է պայմանագրեր: Պայմանագրի համաձայն՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամը պետք է Կոմիտեին ներկայացնեի միջոցառումների իրականացման մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվետվություններ, սակայն

Կոմիտեում բացակայում էին 100,000.0 հազ. դրամի ծախսը հիմնավորող փաստաթղթերը և հաշվետվությունը:

«ՔԵՆԴԼ սինքրոպրոնային հեպազոպրությունների ինստիտուտ» հիմնադրամ

• Հիմնադրամի կողմից 2018 թվականի 25,140.2 հազ. դրամի նյութական արժեքների ծախսագրումները կատարվել են ձեռքբերման փաստաթղթերի՝ հարկային հաշիվների հիման վրա՝ առանց պահանջագրերի և նյութական արժեքների ծախսագրման հաշվետվությունների կազմման: Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Հիմնադրամը հարկային հաշվով ստացված նյութական արժեքները անմիջապես ծախսագրել է՝ առանց դրանք որպես պաշար ճանաչելու և մուտքագրելու պահեստ, ինչպես սահմանված է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ (ՀՀՄՍ) 2-ով:

• Հիմնադրամի կողմից հաշվետու ժամանակահատվածում վառելիքը ծախսագրվել է ձեռքբերման փաստաթղթերի՝ հարկային հաշիվների հիման վրա: Հիմնադրամի կողմից կազմվել են երթուղային թերթիկներ, սակայն դրանք չեն հանդիսացել ծախսի ճանաչման համար սկզբնական փաստաթուղթ: Մասնավորապես, բոլոր թերթիկներում լրացված չեն տրանսպորտային միջոցի մեկնման վայրերը, արձանագրված չեն մեքենաների վառելիքի տարաների մնացորդը, նորմայով և փաստացի վառելիքի ծախսը, տնտեսումը կամ գերածախսը:

• Հիմնադրամի կողմից կատարվել է ապրանքների գնման 1,237 հազ. դրամ արժեքով երկու գործարք հարկային հաշիվների և վճարման հանձնարարագրերի հիման վրա, առանց իրականացնելու պետական գնումների մասին օրենսդրությամբ սահմանված գնում և առանց կնքելու պայմանագիր, ինչը հանգեցրել է անհամապատասխանության «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 11-րդ մասի նկատմամբ:

Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ

• Ծրագրի շրջանակներում 2018 թվականին կատարվել է 776,752.7 հազ. դրամ դրամարկային ծախս: Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Կոմիտեի նախագահի հրամանով հաստատված «ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին վճարվող հավելավճարները կազմակերպություններին տրամադրելու» կարգի դրույթները խախտվել են: Մասնավորապես, 85-ից 65 կազմակերպություն չի պահպանել հավելավճարների տրամադրման հայտերի ներկայացման ժամկետները, 37 կազմակերպություններ տարվա ընթացքում ներկայացրել են ընդամենը 1 եռամսյակային հայտ (որոշ դեպքերում հայտերում առկա են միևնույն անձանց տվյալների կրկնօրինակներ), հայտերում արտացոլված դոկտորների և թեկնածուների ընդհանուր թիվը չի համապատասխանում իրականությանը:

• 2018 թվականի տարեսկզբին հավելավճարների մասով դեբիտորական պարտքը կազմել է 26,679.4 հազ. դրամ, իսկ տարեվերջին՝ 9,645.5 հազ. դրամ, որից «ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի մասով տարեսկզբին դեբիտորական պարտքը կազմել է 9,300.0 հազ. դրամ, իսկ տարեվերջին՝ 9,500.0 հազ. դրամ: Ընդ որում, «ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ»

ՊՈԱԿ-ին 2018 թվականի ընթացքում փոխանցվել է 17,600.0 հազ. դրամ ֆինանսավորում «Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» ծրագրի շրջանակում:

• Հաշվեքննության ընթացքում հավելավճարների մասով Կոմիտեի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված 2018 թվականի տարեկան հաշվետվության մեջ հավելավճարների ծախսը, ըստ կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա զեկուցագրերով վճարման ներկայացված թվերի, կազմել է 787,375.0 հազ. դրամ: Արդյունքում, հաշվետվությունում ներկայացվել է 6,411.6 հազ. դրամի չափով չհիմնավորված ծախս:

Հավելավճարների ուսումնասիրությամբ պարզվել է, որ հայտերի տվյալների հիման վրա պետք է հաշվարկվեր հավելավճարներ դոկտորներին՝ 2,929 անգամ, գիտությունների թեկնածուներին՝ 6,270 անգամ՝ ընդամենը 303,200.0 հազ. դրամ գումարով: Կոմիտեի կողմից փաստացի ծախսը հաշվարկվել է ընդամենը 302,150.0 հազ. դրամ: Կատարվել է 1,050.0 հազ. դրամի պակաս ծախս: Ընդ որում, պակաս է հաշվարկվել դոկտորի 8 վճարում և գիտությունների թեկնածուի 49 վճարում, իսկ ավելի՝ դոկտորի 3 վճարում և գիտությունների թեկնածուի 17 վճարում:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ Արմավիրի մարզպետարան		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
24.09.2019-20.12.2019թթ.	01.01.2018-31.12.2018թթ.	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Արմավիրի մարզպետարանի ֆինանսատնտեսական գործունեություն	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային (ISSAI 100, 200 և 400) ստանդարտներին համապատասխան:	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
5	2	11
Հաշվեքննության կարծիք		Հղումը
Համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «բացասական եզրահանգում» կարծիք, ֆինանսական հաշվեքննության մասով տրվել է «հրաժարում եզրահանգում ներկայացնելուց» կարծիք:		

Առավել ուշագրավ փաստեր

- Արմավիրի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) և մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային

կազմակերպությունների կողմից օրենսդրության սահմանված կարգով հաշվապահական հաշվառում չվարելը հանգեցրել է հսկողության համակարգի թերացման և ֆինանսական հաշվետվությունների բացակայության, արդյունքում՝ մարզպետարանի ակտիվների, պարտավորությունների, ծախսերի և եկամուտների կառավարման անհնարինություն:

- Պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից Մարզպետարանին ներկայացված հաշվետվություններում աշխատավարձի հոդվածով փաստացի և դրամարկղային ծախսերը, համապատասխանաբար, շեղվել են վերջիններիս աշխատավարձի հաշվարկների և փաստացի վճարումների տվյալներից:

Մարզպետարանում իրականացվող հաշվեքննության ժամանակահատվածում պետական ոչ առևտրային կազմակերպությունների հիմնական մասին չի հաջողվել ճշտել իրենց կողմից ներկայացված հաշվետվությունները, ինչը փաստում է համապատասխան հաշվառման բացակայության հանգամանքը:

- Մարզպետի առանձին որոշումներով 789 քաղաքացիների տրվել են 28,950.0 հազ. դրամ գումարի դրամական օգնություններ: Օգնություններն ամբողջությամբ տրվել են կանխիկ եղանակով: Գումարների տրամադրումն իրականացվել է դրամարկղային գործառնությունների կարգի խախտումներով, դրամարկղային գրքի վարումը և դրամարկղի մուտքի և ելքի օրդերների դուրս գրումը չի կատարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

- Դրամարկղային գրքի վարման և դրամարկղային գործառնությունների իրականացման կարգի խախտումներ են եղել նաև մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպություններում:

- Մշակութային և կրթական օբյեկտների շենքերի և շինությունների կապիտալ հիմնանորոգման ծրագրերով կնքված պայմանագրերի նախահաշիվներում կատարված փոփոխությունները պատշաճ ձևով չեն փաստաթղթավորվել և հիմնավորվել: Փոփոխությունների արդյունքում պայմանագրի ծավալաթերթերը (նախագծանախահաշվային փաստաթղթերը) չեն փոփոխվել, չկատարված աշխատանքների մասով չեն հիմնավորվել դրանց կատարման պահանջի վերացումը, լրացուցիչ աշխատանքները կատարվել են նախահաշվից հանված աշխատանքների գումարների հաշվին՝ չհիմնավորելով դրանց հետագայում կատարման կամ չկատարման անհրաժեշտությունը:

- «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով կատարվել է 18,636,7 հազ. դրամ գումարի ծախսեր, որի շրջանակներում Մարզպետարանը «Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում» ծրագրով իրականացրել է 16 երաժշտական դպրոցներում սովորող 163 աշակերտների ուսման վարձերի ֆինանսավորում (փոխհատուցում): Երաժշտական և արվեստի դպրոցների մարզպետարան ներկայացրած հաշվետվությունների տարբեր բաժինների տվյալների, ինչպես նաև վերջիններիս կողմից տրամադրված տեղեկատվության (տեղեկանքների) և

մարզպետարան ներակայացված հաշվետվությունների տվյալների միջև առկա են անհամապատասխանություններ, հաշվետվությունները լրացված են թերի՝ բաց թողնված լրացման դաշտերով և թվաբանական անճշտություններով:

- Մարզպետարանը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ կառավարության համապատասխան որոշումների հիման վրա կապիտալ սուբվենցիաների գծով համայնքներին փոխանցել է 41,376.8 հազ. դրամ գումար: Համայնքները սուբվենցիայի պայմանագրերով նախատեսված կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ մարզպետարան չեն ներկայացրել: Բացակայել են նաև 2018 թվականի մարտի 19-ի ՀՀ կառավարության թիվ 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովների կողմից ավարտած շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի ակտերը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ Սյունիքի մարզպետարան		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
21.10.2019 – 27.02.2020 թթ.	01.01.2017 – 31.12.2018 թթ.	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
2017 և 2018 թվականների ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են գնում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ ընթացակարգերը:	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
7	3	7
Հաշվեքննության կարծիք		Հղումը
Ֆինանսական հաշվեքննության մասով տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում», իսկ համապատասխանության հաշվեքննության մասով՝ «բացասական եզրահանգում» կարծիքներ:		

Առավել ուշագրավ փաստեր

- Մարզպետարանում և նրա ենթակայության ՊՈԱԿ-ներում հաշվապահական հաշվառումը չի իրականացվել ավտոմատացված համակարգերով և հաշվապահական ստանդարտներով:

- Մարզպետարանի և նրա ենթակայության 23 հիմնարկների 92 աշխատակիցներ 2017-2018 թթ. 1157 աշխատանքային օրեր գտնվել են արտերկրում և ստացել են աշխատավարձեր՝ 5,690.4 հազ. դրամ:
- Մարզպետարանում բացակայում են՝ Մարզպետարանի և «Արդշինբանկ» ՓԲԸ-ի միջև միջոցների տրամադրման ծառայությունների մատուցման պայմանագիրը, վճարման ցուցակները և բանկի փաստացի վճարված գումարների մասին քաղվածքները:
- Մարզպետարանում առկա չէ դրամական օգնությունները տրամադրելու համապատասխան հրամանով հաստատված կանոնակարգ, որի հետևանքով արձանագրվել են անհամապատասխանություններ:
- Մարզպետարանը 2017թ.-ին չմատուցված ծառայությունների դիմաց 2,914.0 հազ. դրամ փոխանցել է «Յուքոմ» ՍՊԸ-ին:
- Մարզպետարանի աշխատակազմի և նրա ենթակայության 12 դպրոցներում մեկ անձից կատարված 1 մլն դրամը չգերազանցող գնումների վերաբերյալ պահանջվող էլեկտրոնային փաստաթղթերը բացակայում են, իսկ՝ 3 դպրոցների կողմից 22,612.1 հազ. դրամ գումարով գնումները կատարվել են առանց պատասխանատու ստորաբաժանումներ և գնահատող հանձնաժողովներ ձևավորելու:
- 12 հանրակրթական դպրոցների կողմից մեկ անձից կատարված մեկ միլիոն դրամը չգերազանցող գնումները կատարվել են տնտեսվարող անձանց հետ ուղղակի կնքված պայմանագրերի հիման վրա:
- 4 հանրակրթական դպրոցներում բացակայում են մասնակիցների կողմից ներկայացվող հայտերի գրանցամատյանները, իսկ թվով 3 հանրակրթական դպրոցների կողմից մեկ անձից կատարված 500.0 հազար դրամը չգերազանցող գնումների վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը առկա չեն:
- Մարզպետարանի և կապալառուների միջև կնքված սուբվենցիոն պայմանագրերում բացակայում են «Սուբվենցիայի չօգտագործված գումարի՝ ՀՀ պետական բյուջե վերադարձման» մասին և «Սուբվենցիայի չօգտագործված գումարի՝ ՀՀ պետական բյուջե վերադարձման» սահմանված պայմանները: Կատարողական ակտերը ներկայացվում և ընդունվում են սուբվենցիոն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետին անհամապատասխան:
- ՀՀ Սյունիքի մարզի երաժշտական և արվեստի հիմնարկները պետական բյուջեից և համայնքային ֆինանսավորմամբ սովորողների ծախսերի միասնական համամասնությունների և առանձնացված հաշվետվությունների ներկայացումը չեն վարել հիմնադրի՝ համայնքների և պետական բյուջեի ծրագրի ֆինանսական կարգադրիչի՝ Մարզպետարանի, համապատասխան պահանջների բացակայության պատճառով:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ ոստիկանություն

Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
14.01.19-01.08.19թթ.		01.01.17-31.12.18թթ.	
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Պետական պահպանության գլխավոր վարչության ֆինանսատնտեսական գործունեություն		Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգեր:	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ	
2	4	1	
Հաշվեքննության կարծիք			Հղումը
Ֆինանսական հաշվեքննության մասով տրվել է «դրական եզրահանգում» կարծիք, համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:			

Առավել ուշագրավ փաստեր

- ՊՊԳ վարչությունը տարիներ շարունակ չի իրականացրել ՀՀ կառավարության 29.04.2004թ. թիվ 1008-Ն որոշմամբ ՀՀ ոստիկանության կողմից պահպանության ենթակա պետական մարմինների շենքերի ու շինությունների ցանկում ընդգրկված ՀՀ Ազգային ժողովի շենքի՝ հարակից շինություններով, ՀՀ առաջին ատյանի դատարանների ու նրանց նստավայրերի, տնտեսական դատարանի Երևանի, Գյումրու, Վայքի, Սևանի, Վեդու նստավայրերի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների շենքերի պետական պահպանությունը:
- ՊՊԳ վարչությունը 2017 և 2018 թվականներին պետական բյուջեի 14,162.4 հազ. դրամ միջոցների հաշվին (2004 թվականից՝ ավելի քան 100 մլն դրամ) իրականացրել է «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ-ի (ք.Երևան, Աբովյան փողոց 64) պահպանությունը, որը ընդգրկված չէ պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների ցանկում:
- Պետական բյուջեի միջոցների հաշվին օբյեկտների պետական պահպանությունը իրականացվել է ՊՊԳ վարչության և ենթակա ստորաբաժանումների կողմից կնքված

պայմանագրերով սահմանվածից պակաս անձնակազմով: Ընդ որում, բյուջետային հաստիքներ զբաղեցնող 58 կրտսեր խմբի ոստիկաններ և 7 հրաձիգներ պետական բյուջեի միջոցների հաշվին պետական պահպանության ենթակա օբյեկտների պահպանություն իրականացնելու փոխարեն ներգրավվել են տնտեսավարողների հետ արտաբյուջեի շրջանակում կնքված պայմանագրերով պահպանվող օբյեկտների վերակարգերում, սակայն վարձատրվել են պետական բյուջեի միջոցներից, որը 2017 թվականի համար կազմել է 145,150.6 հազ. դրամ, 2018 թվականի համար՝ 70,810.0 հազ. դրամ:

- Պահպանության ծառայության մատուցման պայմանագրերում վճարումների ուշացումների համար տույժեր հիմնականում սահմանված չեն, իսկ պայմանագրային հիմունքներով ծառայությունների մատուցման դիմաց ՊՊԳ վարչության ստորաբաժանումների դեբիտորական պարտքը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 94,090.8 հազ. դրամ, որը, 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, կրկնապատկվել է՝ կազմելով 204,939.3 հազ. դրամ:

- Կենտրոնական, Մալաթիայի և Կոտայքի պահպանության բաժինների և տնտեսավարողների միջև պահպանության առանձին պայմանագրեր կնքվել են ՀՀ կառավարության 22.01.2015թ. թիվ 25-Ն որոշմամբ ոստիկանների և հրաձիգների համար սահմանված ծախսերի նորմատիվներից 6,257.9 հազ. դրամ պակաս գնով:

- 2017 թվականի փետրվարից մինչև 2018 թվականի հունիս ամիսը Սևանի պահպանության բաժանմունք գործուղված Մալաթիայի պահպանության բաժնի մեկ և Կենտրոնական պահպանության բաժնի հինգ ոստիկաններ գործուղման ժամանակաշրջանում չեն ընդգրկվել Սևանի պահպանության բաժանմունքի կողմից պահպանվող օբյեկտների վերակարգերում, և չի հիմնավորվում այդ ոստիկաններին, առանց հաշվարկված հարկերի և վճարների, վճարված 11,455.8 հազ. դրամ աշխատավարձը: Հաշվեքննության արդյունքում գումարը վերականգնվել է արտաբյուջետային հաշիվներին:

- Կենտրոնական պահպանության բաժնի մեկ կրտսեր խմբի ոստիկան 2017 թվականի հուլիսից մինչև 2018 թվականի ապրիլ ամիսն աշխատանքից ազատվելը չի ընդգրկվել օբյեկտների պահպանության վերակարգերում, սակայն ստացել է 1,032.2 հազ. դրամ աշխատավարձ: Հաշվեքննության արդյունքում գումարը վերականգնվել է արտաբյուջետային հաշիվին:

- 2017 և 2018 թվականներին Էրեբունու պահպանության բաժնի կողմից 34 տնտեսավարող սուբյեկտներին պահպանության ծառայությունը մատուցվել է ամբողջությամբ, սակայն դրա դիմաց բաժնի արտաբյուջետային հաշվին մուտք է եղել 14,947.5 հազ. դրամ պակաս գումար: Հաշվեքննության ընթացքում արտաբյուջետային հաշվին վերականգնվել է 14,000.0 հազ. դրամ: Եվս 947.5 հազ. դրամ ձևակերպվել է՝ որպես տնտեսավարողների դեբիտորական պարտք:

- Մալաթիայի պահպանության բաժնի կողմից կնքված երկու պայմանագրերի շրջանակներում պահպանությունն իրականացվել է պայմանագրով սահմանվածից ավելի անձնակազմով, որի համար արտաբյուջետային միջոցների հաշվին նորմատիվով սահմանվածից ավելի է ծախսվել 2,651.4 հազ. դրամ:

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Հաշվեքննության կատարման ժամկետը

09.11.2019-31.01.2020թթ.

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

01.01.2017-31.12.2018թթ.

Հաշվեքննության առարկան

Տրանսպորտի ոլորտին առնչվող բյուջետային միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության օգտագործում՝ բացառությամբ շինարարական և «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում» ծրագրերի:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, զննում, դիտարկում, վերահաշվարկ և վերակատարում հաշվեքննության ընացակարգերը:

Համակարգին միտված առաջարկություններ

2

Արդյունքին միտված առաջարկություններ

4

Խնդիրներին միտված առաջարկություններ

4

Հաշվեքննության կարծիք

Հղումը

Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների մասով տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:



Առավել ուշագրավ փաստեր

«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի կողմից դրամաշնորհային ծրագիր

• 2017 թվականի ընթացքում ավտոճանապարհների ցանցի անձնագրավորման համար պայմանագրով նախատեսված ճանապարհների և ճանապարհների առանձին էլեմենտների ուսումնասիրության և տվյալների հավաքագրման, ավտոմոբիլային ճանապարհների և դրանց ինժեներական կառույցների /կամուրջների, թունելների և մետաղական արգելափակոցների/ վերականգման շինարարական աշխատանքների հսկողության պայմանագրով նախատեսված

աշխատանքները չեն կատարվել, սակայն պայմանագրով նախատեսված գումարը՝ 24,710.0 հազ. դրամը, ամբողջությամբ վճարվել է:

- 2017 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրով նախատեսված աշխատանքները ՊՈԱԿ-ի կողմից փաստացի կատարվել է 13,671.2 հազ. դրամով պակաս, սակայն նախարարությունը, պայմանագրի 5.1 կետի համաձայն, կազմակերպությունից չի պահանջել փոխհատուցել չկատարված աշխատանքների դիմաց վճարված գումարը, կամ այն հաշվարկել և հաշվանցել կազմակերպության վճարվելիք գումարներից:

- Տնտեսագիտական վերլուծության արդյունքում առաջարկված վերականգման ենթակա 423.6 կմ երկարությամբ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհահատվածներից 2017-2019թթ.-երի ծրագրերում ներառվել են ընդամենը 172.13 կմ ճանապարհահատվածներ, որից 49.6 կմ հատվածն է համապատասխանում տնտեսագիտական վերլուծության արդյունքում առաջարկված աշխատանքներին:

- Տնտեսագիտական վերլուծության արդյունքում կազմված վերանորոգման ենթակա ճանապարհահատվածների ցանկում ընդգրկվել են այնպիսի ճանապարհահատվածներ, որոնք ընդհանրապես ուսումնասիրության չեն ենթարկվել, իսկ նորոգվել են ուսումնասիրված, սակայն վերլուծության արդյունքում վերանորոգման ենթակա ճանապարհահատվածների ցանկում չներառվածները:

Թվային տախտգրաֆի համակարգի պահապանման և քարտերի պատրաստման ծառայությունների մատուցում

- Ծառայությունների մատուցման համար կազմված հանձնման-ընդունման արձանագրություններում տախտգրաֆիկ քարտի միավոր գինը գերազանցել է պայմանագրով սահմանված միավոր գինը՝ 2,312.9 եվրոյով:

- 2018թ.-ի համար կազմված հանձնման-ընդունման արձանագրության գումարը 5,831.2 հազ. դրամով գերազանցել է ՀՀ պետական բյուջով նախատեսված գումարը, իսկ ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունում ծրագրի փաստացի ծախսը նույն գումարի չափով պակաս է ցույց տրվել:

Արձանագրված այլ փաստեր

- Ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման պետական տուրքի մասով կուտակված 1,595,034.7 հազ. դրամ ապառքի վերականգման ուղղությամբ ոչ մի քայլ չի ձեռնարկվել:

- ՀՀ տրասպորտի և կապի նախարարությունը, շրջանցելով ՀՀ կառավարության 15.02.2007 թվականի թիվ 690-Ն որոշմամբ սահմանված պահանջները, առանց գործունեության համար օգտագործվող ապրանքների, առարկաների, սարքավորումների փորձաքննության դրական եզրակացության, 2017-2018թթ.-ի ընթացքում հինգ ընկերությունների տրամադրել է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման լիցենզիաներ:

- ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար ճանապարհային վճարից ապառքը 01.01.2018թ դրությամբ 40,747.0 հազ. դրամի փոխարեն հաշվարկվել է ընդամենը 3,232.0 հազ. դրամ:

- ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար 2017-2018թթ.-ի համար 60,615.0 հազ. դրամի ճանապարհային վճար և հարկ պակաս է գանձվել:
- Միջպետական և հանրապետական նշանակության 3,698 կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհներից, 348 կմ երկարությամբ միջպետական նշանակության ավտոճանապարհահատվածներում կատարված զննությամբ արձանագրվել է 158 ապօրինի տեղադրված գովազդային վահանակներ՝ շուրջ 1,282 քմ ընդհանուր մակերեսով, ինչի դիմաց ՀՀ պետական բյուջե տարեկան չի վճարվել շուրջ 12,820.0 հազ. դրամ ճանապարհային վճար կամ հարկ:

ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
Գյումրու համայնքապետարան		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
22.04.2019-31.03.2020	01.01.2017-31.12.2018	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Գյումրու համայնքային բյուջեի միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և համայնքային սեփականության օգտագործում	Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում հաշվեքննության ընթացակարգերը:	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
3	19	8
Հաշվեքննության կարծիք		Հղումը
Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «Ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:		

Առավել ուշագրավ փաստեր

- Համայնքի գույքահարկի բազայից դուրս մնացած կազմակերպությունների կողմից նախորդ տարիներից կուտակված համայնքի բյուջե վճարման ենթակա գումարը ընդհանուր կազմել է 01.12.2019թ. դրությամբ՝ 8,772.4 հազ. դրամ, իսկ 2017-2018թթ.-ին այն կազմել է՝ 1,735.9 հազ. դրամ:
- Համայնքի վարչական տարածքում գտնվող, տարիներ առաջ կառուցված շենք-շինությունների սեփականատերերը, ստանալով համայնքապետարանից շինարարության թույլտվություն, սահմանված շինարարական աշխատանքների տևողություն ժամկետում չավարտելով շինության կառուցումը, չեն ստացել համայնքապետարանից շինարարության ավարտական ակտեր և չեն կատարել գույքի պետական գրանցում, որի արդյունքում առ այսօր իրենց պատկանող շինությունների մասով չեն դարձել համայնքի համար եկամտի աղբյուր:
- Համայնքի տարածքում գործող 13 հասարակական նշանակության օբյեկտների (առևտրի սրահների) զբաղեցրած 3 մլն կադաստրային արժեքը չգերազանցող բնակելի նշանակության շենք-շինությունների գործառնական նշանակությունը չի փոխված հասարակականի, որի արդյունքում համայնքի բյուջեն զրկվել է լրացուցիչ գույքահարկից:
- Քաղաքապետարանը չի բավարարել ՀՀ կառավարության 22.06.2012թ. N 822-Ն որոշմամբ հաստատված «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգի պահանջը և 2017-2018 թթ. ընթացքում ընդհանուր՝ 2,196.2 հազ. դրամի գույքահարկի արտոնություններ է տրամադրել փոխադրամիջոցների գծով գույքահարկ վճարողներին:
- 2017-2018թթ.-ին համայնքի բյուջե նախատեսվածից պակաս է վճարվել 16,058.1 հազ. դրամ տեղական տուրք:
- Հողօգտագործողների կողմից խախտվել են պայմանագրային պարտավորությունները, որի դիմաց 31.12.2017թ. դրությամբ հաշվարկվել և արձանագրվել է 89,759.0 հազ. դրամի պարտք՝ ներառյալ տույժերը, 31.12.2018թ. դրությամբ՝ 107,865.3 հազ. դրամի պարտք՝ ներառյալ տույժերը:
- Գույքի վարձակալության ապառքը 31.12.17թ. դրությամբ կազմել է 4,848.0 հազ. դրամ, տույժը՝ 1,415.4 հազ. դրամ: 31.12.2018թ. դրությամբ՝ ապառքը կազմել է 2,890.9 հազ. դրամ, տույժը՝ 2,715.8 հազ. դրամ:
- 2017-2018 թթ. ընթացքում աղբահանության և սանիտարական մաքրման նախահաշիվները կազմվել են առանց սանիտարական մաքրման սխեմաների հաստատման:
- «Գյումրու կոմունալ ծառայության և աղբահանության ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերման» գնման համար քաղաքապետարանում կազմակերպված բաց մրցույթի գնման հայտով, ներկայացված գնման առարկայի տեխնիկական բնութագրի հատկանիշները պարունակել են պահանջ կամ հղում կոնկրետ մոդելին և կոնկրետ աղբյուրին, իսկ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրերը չեն պարունակել «կամ համարժեք» բառերը:
- 2017-2018թթ. ընթացքում ավտոուղեգրերում երթերի քանակները չեն նշվել, քանի որ ավտոմեքենաների ցուցիչները հաճախ չեն աշխատել, իսկ «Լոկատոր»

համակարգի միջոցով արձանագրված տվյալները հաշվեքննությանը չի ներկայացվել՝ չպահպանվելու պատճառաբանությամբ:

- 2018թ. օգոստոս ամսին բյուջետային հիմնարկը փաստաթղթերով դիզելային վառելիքի բացակայության պայմանաններում իրականացրել է 555 լիտր դիզելային վառելիքի ծախս:
- Կանաչապատման աշխատանքների համար ծառերի, թփերի և ծաղկասածիլների մատակարարման մասով առկա է անհամապատասխանություն պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների և փաստացի կազմված փաստաթղթերի հետ: Արդյունքում, ստացվել է, որ ծառերը, թփերը և ծաղկասածիլները ստացվել են ավելի ուշ, քան, կազմած փաստաթղթերի համաձայն, դրանք տեղադրվել են համապատասխան վայրերում:
- Համայնքապետարանի կողմից 2017-2018թթ. ընթացքում համայնքի թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների ձեռք բերման մասով հաշվեքննությամբ արձանագրվել են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի, 25-րդ և 13-րդ հոդվածների մասով՝ գնումը մեկ անձից կատարելը հիմնավորված չէ և տեխնիկական բնութագրերում հստակ չեն նկարագրվել ձեռք բերվող ծառայության պայմանները:
- Մշակութային ՀՈԱԿ-ների կողմից այցելությունների համար նախատեսված տոմսերը չեն համարակալվել և չեն հաշվառվել /չեն հանդիսանում խիստ հաշվառման փաստաթղթեր/, հետևաբար, դրանց վաճառքի ծավալի և մուտքերի վերաբերյալ կարծիք տալ հնարավոր չի եղել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն

Հաշվեքննության կատարման ժամկետը

17.04.2019թ.- 29.02.2020թ.

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

01.01.2017թ.-31.12.2018թ.

Հաշվեքննության առարկան

Հայաստանի վերականգնվող
էներգետիկայի
և էներգախնայողության հիմնադրամի
ֆինանսատնտեսական գործունեություն

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Իրականացվել է համապատասխանության
և կատարողականի հաշվեքննություն:
Կիրառվել են գնում, դիտարկում, հարցում,
արտաքին հաստատում, վերլուծական
ընթացակարգ, վերահաշվարկ, վերակա-
տարում ընթացակարգերը:

Համակարգին միտված
առաջարկություններ

2

Արդյունքին միտված
առաջարկություններ

4

Խնդիրներին միտված
առաջարկություններ

2

Հաշվեքննության կարծիք

Եզրակացություն

Հղումը

Համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «Ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:	Նպատակային արդյունավետության սկզբունքը չի պահպանվել	
--	---	---

Առավել ուշագրավ փաստեր

- Հիմնադրամի կողմից ծախսերի պլանավորումը կատարվել է թերություններով, հաշվի չեն առնվել ու չեն գնահատվել աշխատավարձի գծով կատարվելիք ծախսերի իրական ծավալներն ու նախորդ տարիների փաստացի ծախսերը: Հաստիքացուցակում ներառվել են տարիներ շարունակ չհամալրվող հաստիքներ՝ հանգեցնելով աշխատավարձի գծով 2017-2018 թվականներին 49.1%-ի և 78.3%-ի չափով ցածր կատարողականների:
- Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող՝ երկրաջերմային էներգիայի հետախուզական հորատման ծրագրի շրջանակում բարձր երկրաջերմային ֆոն ապահովելու նպատակով B-2 հորատանցքի հորատման համար 1,500 մետրի փոխարեն նախատեսվել է հորատել 1,800 մետր, սակայն իրականում այն հորատվել է ընդամենը 1,684 մետր խորությամբ, որում ստացված առավելագույն ջերմաստիճանը նախատեսված 150°C-ի փոխարեն կազմել է մոտ 124°C: Ուստի, չի ապահովվել ծրագրի նպատակայնությունը, քանի որ ստացված արդյունքը չի բավարարել նվազագույն պայմաններին, որոնք պետք է գրավիչ լինեին ներդրողների համար:
- Հիմնադրամի կողմից բավարար միջոցներ չեն ձեռնարկվել Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի նախապատրաստական ծրագրի՝ ֆոտովոլտային կայանների կառուցման համար պոտենցիալ ներդրողների ներգրավմանը վերաբերող նպատակի իրականացման ուղղությամբ, որի արդյունքում թվով 6 տեղանքից 5-ի նկատմամբ դեռևս առարկայական առաջարկություններ չեն ստացվել:
- ՀՀ ՖՆ և Հիմնադրամի միջև կնքված գործակալության համաձայնագրի շրջանակներում մասնակից ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերով Հիմնադրամն օժտված չէ գործուն վերահսկողական գործառնություններով՝ ծրագրի շահառուների ընտրության, վարկային միջոցների հատկացման, արևային ֆոտովոլտային և արևային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրման աշխատանքների գնագոյացման նկատմամբ: Որպես հետևանք՝ նույն մարզի տարբեր համայնքներում և անգամ նույն համայնքի ներսում համակարգերի տեղադրման աշխատանքների գների միջև առաջացել են տարբեր գնային մակարդակներ, որին էլ ավելի է նպաստել որոշ բանկերի կողմից աշխատանքներում տնտեսավարող սուբյեկտների ցածր ներգրավմամբ: Առկա են նաև գազաֆիկացված համայնքներում համակարգերի տեղադրման առանձին դեպքեր՝ հակասելով իրականացվող ծրագրի պահանջներին:

«ԵՐԵՎԱՆԻ ԶԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		Ստուգման օբյեկտը
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն		«Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
28.03.2019-30.12.2019թթ.		01.01.2017-31.12.2018թթ.
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
«Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեությունը		Իրականացվել է համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
-	7	10

Հաշվեքննության կարծիք	Եզրակցություն	Հղումը
Համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «Ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:	Տնտեսման սկզբունքը չի պահպանվել:	

Ծանոթություն: Հաշվի առնելով միջազգային որոշ պայմանագրերին առնչվող տեղեկությունների բնույթը՝ հաշվեքննության ընթացիկ եզրակացության մի մասը ներկայացվել է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով:

Առավել ուշագրավ փաստեր

- Սակագների ձևավորման մեջ ներառվող աշխատավարձի ֆոնդի գումարներից, թափուր հաստիքների համար նախատեսված գումարների հաշվին 2017թ. ընթացքում աշխատողների համար հաշվարկվել և վճարվել են 64,731.5 հազ. դրամ և 84,489.1 հազ. դրամ պարգևատրում, այն դեպքում, երբ հաստատված հաստիքացուցակների համաձայն միավոր աշխատավարձի մեջ ի սկզբանե ներառվել են աշխատողների հիմնական աշխատավարձը և աշխատողների համար նախատեսված ամենամսյա պարգևատրումները՝ հիմնական աշխատավարձի 5%-ից մինչև 45%-ի չափով: 2017-2018թթ. այն կազմում է ընդամենը՝ 238,399.4 հազ.դրամ: Աշխատակիցների հետ ի սկզբանե աշխատանքային պայմանագրերը կնքվել են նույն տրամաբանությամբ՝ պայմանագրի մեջ նշելով նաև պարգևատրման տոկոսի չափով գումարը: Հաստիքացուցակում կամ աշխատանքային պայմանագրում տոկոսային հարաբերությամբ պարգևատրման գումարների ներառումը չի համապատասխանում «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» պահանջներին, քանի որ պարգևատրումը օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով սահմանված կարգով և չափերով աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության, ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա վճարվող վարձատրությունն է: 2017թ. ընթացքում ընկերության աշխատակիցների համար հաշվարկվել և վճարվել են 180,332.1 հազ. դրամ պարգևատրում, որը կազմում է ընդհանուր աշխատավարձի ֆոնդի 26%-ը, 2018թ. ընթացքում հաշվարկվել և վճարվել են 207,287.9 հազ. դրամ աշխատավարձ, որը կազմում է ընդհանուր աշխատավարձի ֆոնդի 27.4%:
- «Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետև Ընկերություն) և ABB AB, Substations և Cobra Instalaciones Y Servicios S.A. կոնսորցիումի հետ 2016թ. հուլիսի 14-ին կնքվել է նոր ենթակայան կառուցելու վերաբերյալ պայմանագիր, սակայն կառուցման աշխատանքները սկսվել են 2017թ. հունվարից՝ ֆինանսավորումը ուշացնելու հետևանքով: Գործողության ժամկետը սահմանվել է 17 ամիս, որը հետագայում երկարաձգվել է մինչև 20 ամիս և կառուցման ավարտ է սահմանվել 16.09.2018թ.-ը: Արդյունքում, ծրագիրը չի իրականացվել սահմանված ժամկետներում, 31.12.2018թ. դրությամբ՝ չեն ստորագրվել աշխատանքների կատարման վերջնական արձանագրությունները, ինչպես նաև չեն հաշվարկվել աշխատանքների ուշացումների համար պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների գումարները:
- Ընկերությունը 2017թ.-ին կատարել է շուրջ 301,738.0 հազ. դրամի մեկ անձից և բանակցային ընթացակարգերով գնումներ: Մասնավորապես, արտասահմանյան գործընկերներից իրականացված գնումները, որով և առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների հետ, ինչպես նաև չեն կնքվել պայմանագրեր, ինչը հակասում է 22.12.2010 թվականի «Գնումների մասին» ՀՀ ՀՕ-206-Ն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:
- 2018թ. գնումներն իրականացնելիս, համաձայն ՀՀ կառավարության 29.03.2018թ. N347-Ա որոշման, Ընկերությանը թույլատրվել է որոշ ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների գնման գործընթացներն իրականացնել անմիջապես արտադրողներից կամ վերջիններիս միակ ներկայացուցիչ հանդիսացող անձանցից և 794,168.79 հազ. դրամի գնումները կատարվել են մեկ անձից և առանց համապատասխան պայմանագրեր կնքելու: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 71-րդ կետի պահանջների հետ:

- 2017-2018թթ. Ընկերության կողմից կատարվել են գնումներ, որոնց հրավերների տեխնիկական բնութագրերում հղում է կատարվում գնման առարկայի մոդելին, մակնիշին ու արտադրողին: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների հետ:

- «Գազատուրբինի մոդեռնացում C2 ինսպեկցիայի ժամանակաշրջանում աշխատանքների ծավալները՝ ըստ GE ընկերության ընթացակարգի» մրցույթում հաղթող ճանաչված ընկերության հետ կնքվել է 346,624.0 հազ. դրամի պայմանագիր: Հաշվեքննության արդյունքում արձանագրվել են հետևյալ փաստերը.

- Մրցութային հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ ենթակետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի բաց մրցույթի հրավերի մաս 1-ի 2-րդ կետի 2.5 ենթակետի (4), (գ) և հավելված 5.2-ի վերջին պարբերության պահանջները, այն է՝ «Ամբողջական չեն անձնակազմի որակավորումը հավաստող փաստաթղթերը»:

- Սահմանվել են լրացուցիչ աշխատանքներ (գազատուրբինի ռոտորի հանում, հետ տեղադրում և կոմպրեսորի ու տուրբինի թիակների հղկում, տաշում), բայց գազատուրբինի ռոտորի հանման և հետ տեղակայման, շինհրապարակ տեղափոխման աշխատանքները նախատեսված են եղել պայմանագրով և դրանց կատարողականները ներկայացված են եղել մինչև լրացուցիչ համաձայնագրի կնքումը N1 և N2 կատարողական ակտերով:

- Հղկման աշխատանքներ կատարվել են միայն կոմպրեսորի թիակների վրա, որը նախատեսված և ցուցված չի եղել ՀՇԳՑ թիվ 1 էներգոբլոկի հիմնական նորոգման աշխատանքների տեխնիկական կանոններով, պահանջներով կամ ստանդարտներով: Չի ներկայացվել նաև տեխնիկական հսկողություն իրականացնող «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության ցուցումները տվյալ աշխատանքների վերաբերյալ, մասնավորապես, որ առկա է «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության գրությունն ուղղված ընկերությանը, որով «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության տեխնիկական դեպարտամենտը արձանագրել է մատակարարված թիակների մասով խնդիրներ և առաջարկել է իր հաշվին իրականացնել դրանց հնարավորինս շուտ փոխարինումը և փոխադրումը:

- «Գազատուրբինի մոդեռնացման աշխատանքներ C2 ինսպեկցիայի շրջանակներում» «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության կողմից», մեկ անձից գնում, որի պայմանագրի գինը կազմել է 783,240.9 հազ. դրամ և «Շոգետուրբինի կապիտալ աշխատանքներ C2 ինսպեկցիայի շրջանակներում» (ծառայությունների մատուցում) «Ֆուջի» ընկերության կողմից», մեկ անձից գնում, որի գինը կազմել է՝ 266,509.4 հազ. դրամ, գործընթացներում կապիտալ աշխատանքների ժամկետների երկարացման արդյունքում Ընկերությունը կրել է

հետևյալ լրացուցիչ ծախսերը՝ «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության մասով 158,015.71 եվրո, իսկ «Ֆուլք» ընկերությունների մասով՝ 15,426.36 ճապոնական իեն:

- Կապիտալ վերանորոգման աշխատանքների ժամկետը նախատեսված 51 օրից փաստացի կազմել է 62 օր: Համաձայն Ընկերության կողմից ներկայացված պարզաբանման՝ սեփական կարիքների համար «ՀԷՏ» ՓԲԸ-ից ձեռք բերվող էլեկտրական էներգիայի դիմաց Ընկերությունը պլանավորել էր կատարել 45,740 հազ. դրամի ծախս (քանի որ փոխհոսքերի գործառույթը չի պլանավորվում), սակայն փաստացի կատարել է 80,113 հազ. դրամի ծախս, որից 26,447.0 հազ. դրամը (1,303,824 կՎտ/ժ) փոխհոսքեր գործարքի շրջանակներում էլեկտրական էներգիայի արտահանման համար : Այսինքն, Ընկերությունն առանց փոխհոսքերի «ՀԷՏ» ՓԲԸ-ից սեփական կարիքների համար ձեռք բերված էլեկտրական էներգիան կազմել է 53,666 հազ. դրամ: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հատկացված 45,740 հազ. դրամի փոխարեն Ընկերության փաստացի ՀԷՏ ՓԲԸ-ից ձեռք բերված էլեկտրական էներգիայի գծով ծախսը կազմել է 53,666 հազ. դրամ՝ գերաճախսը կազմել է 7,926.0 հազ.դրամ:
- «Գազատուրբինի մասերի ձեռք բերում «Ջեներալ էլեկտրիկ» ընկերությունից» (գինը 355,725.2 հազ. դրամ) և «Շոգետուրբինի մասերի ձեռք բերում «Ֆուլք» ընկերությունից» (գինը 207,898.7 հազ. դրամ) մեկ անձից գնման գործընթացներում՝
- Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ «Գնման առարկայի բնութագրերը» 1-ին և 3-րդ կետի պահանջները, Ընկերությունը գնվող աշխատանքների (ծառայությունների) համար պահանջվող տեխնիկական բնութագրեր չի ներկայացրել «Ֆուլք» ընկերությանը:
- Մատուցած աշխատանքների համար երկկողմանի հաստատված նախահաշիվներ, գնահաշվարկներ առկա չեն: Գնումների պլանում բացակայում են ապրանքների ձեռք բերման միավորի կողմնորոշիչ գների վերաբերյալ գների փաստաթղթավորված վերլուծական հիմնավորումները, իսկ փաստացի ձեռքբերումների գները ներկայացված են մեկ թվով, այլ ոչ թե՛ ըստ ապրանքների գների:
- «Գույքի գնահատման ծառայության մատուցում» (Պայմանագրի գինը 9,890.0 հազ. դրամ) գնանշման հարցման ընթացակարգում հաղթող ճանաչված «Արթին Էնթերպրայս» ՍՊԸ-ի հետ 27.04.2018թ. կնքված պայմանագիր, որում՝
 - Հստակ չի նշվում գնման անհրաժեշտությունը: Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջը:
 - Համեմատության համար անհրաժեշտ է անդրադառնալ 2017 թվականին գույքի գնահատման ծառայության ձեռք բերմանը, որի պայմանագիրը կնքվել է 13.10.2017թ., այսինքն՝ ավելի քան 5 ամիս առաջ և պայմանագրի գինը կազմել է՝ 19,900.0 հազ. դրամ: Պայմանագրի անբաժան մաս հանդիսացող տեխնիկական

բնութագրով սահմանվել է 2018թ. տեխնիկական բնութագրով սահմանված գրեթե նույն նպատակը՝ «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և Միջազգային Ստանդարտների Կոմիտեին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու նպատակով՝ 01.12.2017թ. դրությամբ», իսկ ծառայության մատուցումը սահմանվել է այսպես՝ «Կազմակերպության հիմնական միջոցների իրական և մնացորդային արժեքների, ինչպես նաև օտարվող պաշարների վերագնահատման ծառայությունների մատուցում»: Աշխատանքների արդյունքի ամփոփման 18 անուն գործողություններից (2017թ. 17 անուն գործողություն է սահմանված) 13 անունը նույնն է, ինչ որ 2017 թվականին:

- «ՀՀ-ի և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (այսուհետ՝ ՎԶՄԲ) միջև 2015թ. ապրիլի 8-ին ստորագրված «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր» 8495-AM և 2016թ. մայիսի 12-ին ստորագրված «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր» 8615-AM համաձայնագրերի, ՎԶՄԲ «Վարկերի ընդհանուր պայմաններ»-ի Բաժիններ 5.08-ի և 5.09-ի դրույթների (այսուհետ Ընդհանուր պայմաններ) պահանջներին ԵՐՋԷԿ-ի համապատասխանության /իրագործելիության ապահովման աուստրոսինգի ծառայությունների ձեռք բերում» (պայմանագրի գինը 31,800.0 հազ. դրամ) գնանշման հարցման ընթացակարգում հաղթող ճանաչված «ԴԻ ԶԻ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի հետ 08.08.2018թ. կնքված պայմանագիր: Համեմատության համար անհրաժեշտ է նշել, որ նմանատիպ ծառայությունների մատուցման համար 2017թ. կնքված պայմանագրի գումարը կազմել է՝ 99,900.0 հազ. դրամ: Ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրերը համեմատվել են և պարզվել է, որ 9 կետից բաղկացած «Հիմնական պահանջների նկարագրությունը» բաժնում 5 կետ կրկնվում է, իսկ 8 կետից բաղկացած «Գնման առարկայի նկարագրերը» բաժնում 3 կետեր նույնպես կրկնվում են: Արդյունքում, տարբեր տարիների մատուցված ծրագրի հաշվապահական աուստրոսինգի ծառայությունները կատարվել են տարբեր գներով:
- ՓԲԸ-ում 2017 թվականին ձեռք բերված երկու մեքենաների պետհամարանիշների համար վճարվել է 1,224.0 հազ. դրամ: Յուրաքանչյուր մեքենայի համար 612.0 հազ.դրամ:
- Նոր ենթակայան կառուցելու նպատակով ներգրավվել են ավելի շատ վարկային միջոցներ, որի հետևանքով, համաձայն ենթավարկային պայմանագրի 3-րդ կետի, վարկառուն չօգտագործված վարկի դիմաց վճարել է պարտավճար տարեկան 0.25 տոկոսի չափով՝ 2015թ. հունիսից մինչև 2016թ. դեկտեմբեր ամիսը շուրջ 118,000.0 ԱՄՆ դոլար, 01.01.2017-31.12.2018թթ.՝ 74,121.4 ԱՄՆ դոլար:

Ծանոթություն: Վերոնշյալ հաշվեքննությունն ունի գաղտնի մաս, որին հնարավոր է ծանոթանալ «Պետական և ծառայողական գաղտնիք մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		Ստուգման օբյեկտները
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության		«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
10.04.19-28.02.20թթ.		01.01.17-31.12.18թթ.
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեություն		Իրականացվել է համապատասխանության հաշվեքննություն: Կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը: վերակատարում, հաշվեքննության
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
2	0	5
Հաշվեքննության կարծիք		Հղումը
Համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:		

Առավել ուշագրավ փաստեր

- Լիազոր պետական մարմնի կողմից ՊՈԱԿ-ի կառավարման մասով համապատասխան խորհուրդ չի ստեղծվել: Փաստորեն՝ ՊՈԱԿ-ի կառավարումը չի համապատասխանում կանոնադրությամբ սահմանված կառավարման ձևին:
- Համաձայն ՊՈԱԿ-ի և պրոդյուսերական ընկերությունների միջև կնքված պայմանագրերի համապատասխան կետերի՝ ՊՈԱԿ-ը պետք է հսկեր պրոդյուսերի կողմից ներդրված գումարների ծախսերը՝ ըստ ներկայացված նախահաշվի: Վերջինների կողմից չի կատարվել պայմանագրերի համապատասխան կետերի պահանջները: Համադրվել է ՊԵԿ-ի կողմից տրամադրված՝ 2017-2018 թվականներին պրոդյուսերական ընկերությունների, որպես մատակարար, հարկային հաշիվ դուրս գրված և, որպես գնորդ, հարկային հաշիվ ստացած գումարների վերաբերյալ տեղեկատվությունը և ֆիլմերի նկարահանման համար կատարված ներդրումները: Կինոկենտրոնի կողմից նախատեսված չեն պրոդյուսերական ընկերության ներդրումների արժանահավատության նկատմամբ վերահսկողական կամ հաշվետվողականության գործառույթներ: Պրոդյուսերական ընկերությունների սեփական և /կամ/ համաարտադրողների միջոցներից 2,848,284.2 հազ. դրամ ներդրումների իրականացումը ռիսկային է:

- ՊՈԱԿ-ը, չունենալով ֆիլմերի նախագծերն ուսումնասիրող հանձնախմբի կողմից պետական ֆինանսավորման տրամադրման որոշում, պրոդյուսերական ընկերության հետ կնքել է պայմանագիր:
- ՊՈԱԿ-ի թվով աշխատակիցներ, որոնք աշխատում են առանց համատեղության, ըստ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության, աշխատել են նաև այլ ընկերություններում:
- Ուսումնասիրելով 2017-2018թթ. ընթացքում վարձակալած նկարահանման և լուսավորման տեխնիկայի գնման գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը՝ պարզվեց, որ նկարահանման և լուսավորման տեխնիկայի վարձակալության ծառայությունները մատուցվել են 2017թ.-ին՝ 63,38 մլն դրամ, իսկ 2018թ.-ին՝ 1,67 մլն դրամի չափով: Հարկ է նշել որ 2017թ.-ի հուլիս ամսվա դրությամբ գնման գործընթացներին մասնակցել և այնուհետև ծառայություններ է մատուցել միայն մեկ ՍՊ ընկերություն՝ 58,87 մլն դրամ ընդհանուր պայմանագրային գումարով /6 պայմանագրեր/: Հաշվեքննության արդյունքում պարզվել է.
 - ՍՊԸ-ի և ՊՈԱԿ-ի միջև կնքված բոլոր պայմանագրերում, որպես ընկերության տնօրեն, հանդես է եկել անձ, ով միաժամանակ աշխատել է ՊՈԱԿ-ում՝ որպես գլխավոր հաշվապահ, իսկ ՍՊԸ-ի հիմնադիրներն են հանդիսացել ՊՈԱԿ-ի նախկին տնօրենի և փոխտնօրենի հետ փոխկապակցված անձինք /հաշվառված են նաև նույն հասցեում/:
 - Գնման տեխնիկական բնութագրեր կազմվել են ապրանքների անվանումներին հղում կատարելով : 2012-2017թթ.. ընթացքում ՊՈԱԿ-ը ՍՊԸ-ի հետ կնքել է նկարահանման և լուսավորման տեխնիկայի վարձակալության պայմանագրեր 304,46 մլն դրամ գումարի չափով:
 - ՊՈԱԿ-ը կինոֆստիկի հավաքածուի վարձակալության համար ՍՊԸ-ին վճարել է շուրջ 86,2 մլն դրամ, այն դեպքում, երբ կինոֆստիկի հավաքածուն ՍՊԸ-ն Հայաստան է ներկրել 58,8 մլն դրամով՝ ներառյալ ԱԱՀ-ն:
- 2017 թվականին Կինոկենտրոնի մասնակցությամբ նկարահանված ֆիլմերի ցուցադրումից արտաբյուջե է մուտքագրվել՝ 3,606.3 հազ. դրամ, 2018 թվականին՝ 764,4 հազ. դրամ, իսկ 2019 թվականի 9 ամիսներին մուտքերը կազմել են՝ 1,846.0 հազ. դրամ՝ այն պարագայում, երբ յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեից «խաղարկային կինոնկարների» արտադրության համար սուբսիդավորվել է 280,000.0-300,000.0 հազ. դրամ:

ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂԱԾ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ առողջապահության նախարարություն

Հաշվեքննության կատարման
ժամկետը

Հաշվեքննությունն ընդգրկող
ժամանակաշրջանը

06.07.18-30.09.19թթ

01.01.07-31.12.18թթ.

Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Դեղերի շրջանառության պետական կարգավորմանն ուղղված ինստիտուցիոնալ գործունեություն		Իրականացվել է համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն: Կիրառվել են գնում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերակատարում, վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը:	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ	
4	0	3	
Հաշվեքննության կարծիք	Եզրակացություն	Հղումը	
Համապատասխանության հաշվեքննության մասով տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:	Ծախսային արդյունավետության սկզբունքը չի պահպանվել:		

Առավել ուշագրավ փաստեր

- ՀՀ պետական բյուջեի նախահաշվով նախատեսվել և գնումների գործընթացով ձեռք են բերել դեղեր և լաբորատոր նյութեր (թեստ-երիզներ), որի պահանջարկը չի ձևավորվել առողջապահական համապատասխան ոլորտի գլխավոր մասնագետի կողմից ներկայացված հայտով:
- Համապատասխան առողջապահական ոլորտների գլխավոր մասնագետների, դիսպանսերների և մասնագիտացված բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացվող դեղերի պահանջարկը հաշվարկներով հիմնավորված չէ և հիվանդների թվի տատանումներին համարժեք չի փոփոխվում: Ընդ որում, մեծամասամբ գնվող դեղերի քանակները՝ հիվանդների թվի համեմատ, աճել են առաջանցիկ տեմպերով:
- Գնումների պլանով նախատեսվել և ձեռք են բերվել առողջապահական համապատասխան ոլորտի գլխավոր մասնագետի կողմից առաջարկված պահանջարկից ավելի դեղերի չափաքանակներ: Արդյունքում, գլխավոր մասնագետի կողմից պահանջված դեղերի չափաքանակների ավելացումները հանգեցրել է 79,810.7 հազ. դրամի դեղերի ավելի գնմանը:
- 2018 թվականին Նախարարության կողմից ձեռք է բերվել մեթադոն 10մգ և 40մգ՝ 170,000 հատ դեղ՝ 32,356.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Տվյալ դեղը չի ծախսվել և հաշվառվել է որպես մնացորդ: Արդյունքում, Նախարարության կողմից 2018 թվականին հատկացված բյուջետային միջոցների տնտեսման փոխարեն, կատարվել են ծախսեր՝ 2019 թվականի համար նախատեսված դեղորայքի գնման նպատակով:
- Տվյալ տարվա դեղերի գնման համար նախատեսված ծախսերի հաշվին գնվել են իրական պահանջարկը գերազանցող քանակությամբ դեղեր, որոնք բավարարել են նաև հաջորդ տարվա որոշակի քանակության պահանջարկը և որոնց համար

պետական բյուջեից յուրաքանչյուր տարի հատկացվել են միջոցներ: Արդյունքում, տարեցտարի գնված դեղերի բաշխումից հետո առաջացել են մնացորդներ (1,228,418.7 հազ. դրամ):

• Տվյալ տարվա պատվաստանյութերի գնման համար նախատեսված ծախսերի հաշվին գնվել են իրական պահանջարկը գերազանցող քանակությամբ պատվաստանյութեր, որոնք բավարարել են նաև հաջորդ տարվա որոշակի քանակության պահանջարկը և որոնց համար պետական բյուջեից յուրաքանչյուր տարի հատկացվել են միջոցներ: Արդյունքում, գնված պատվաստանյութերի բաշխումից հետո տարեվերջին առաջացել են պատվաստանյութերի մնացորդներ (948,874.1 հազ. դրամ):

• Տեղեկատվություն է ստացվել ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերից կենտրոնացված և մարդասիրական օգնության կարգով ձեռք բերված դեղերի՝ բնակչությանը հատկացված դեղորայքի բաշխման ցուցակների վերաբերյալ (ընդ որում ներկայացված ցուցակները ամբողջական չէին): Առանձնացվել են դեղորայք ստացած մարդկանց անուններ և ուղարկվել ՀՀ ազգային անվտանգության ծառայություն՝ ճշտելու այդ մարդկանց երկրում գտնվելու կամ երկրից բացակայելու փաստերը: ԱԱԾ-ից ստացված տեղեկատվությունը համադրելով մարզերից ստացված դեղորայքի բաշխման ցուցակների տեղեկատվության հետ պարզվեց, որ Շիրակի մարզում 16 բնակիչ (64 անգամ), Լոռու մարզում 11 բնակիչ (30 անգամ) և Արագածոտնի մարզում 1 բնակիչ (1 դեպք), ստացել են դեղորայք՝ չգտնվելով ՀՀ-ում:

• «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ից ստացված տեղեկատվության հիման վրա Հաշվեքննիչ պալատի կողմից ձևավորվել են տեղեկատվական բազաներ: Այդ բազաները հնարավորություն են ընձեռել վերլուծել ՀՀ տարածք ներմուծված դեղերի ծավալներն՝ ըստ տեսակների և առանձին ներմուծումների և ըստ ներմուծողների: Վերլուծության արդյունքում պարզվել է՝

ԱՄՆ դոլար			
	2016թ.*	2017թ.	2018թ. 1-ին կիսամյակ
ՀՀ ներմուծված դեղորայքի գումարը	100,690,140.5	187,456,266.4	67,387,927.2
որից՝ բարեգործական կարգով	23,982,793.2	99,856,682.2 ³	22,978,006.9
Այլ նպատակներով (փորձանմուշներ)	161,345.6	259,368.3	207,308.2
Կոմերցիոն նպատակներով ներմուծված դեղորայքի գումարը	76,546,001.7	87,340,216.0	44,202,612.1

³ 2017թ. ՀՀ Առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոնի կողմից բարեգործական նպատակով ներմուծվել է 3000 հազ 65,547,245.9 ԱՄՆ դոլար արժեքով Սովալդի 400մգ դեղամիջոցը:

* համեմատություն իրականացնելու համար արտացոլվել են նաև 2016թ. տվյալները:

որից՝ ԵԱՏՄ անդամ երկրներից ներմուծված դեղորայքի գումարը	6,668,958.1 (8.7%)	9,779,648.1 (11.2%)	5,617,655.0 (12.7%)
Ներմուծում իրականացնող կազմակերպությունների թիվը	97	76	71
Ներմուծված դեղորայքի տեսակների քանակները	3235	3072	2463
ՀՀ-ում գրանցված դեղերի քանակը	4583	4622	4048
ՀՀ նոր գրանցված դեղերի քանակը	996	810	421

Արդյունքից հետևում է, որ ներմուծվող կազմակերպությունների թվի նվազմանը զուգահեռ նվազել են նաև նոր գրանցված դեղերի տեսակների քանակը:

Ներմուծված դեղորայքի բազայի (կոմերցիոն նպատակներով) վերլուծության արդյունքում պարզվեց, որ դեղերի շուկայում հիմնականում դերակատարում ունեն 7 ներմուծող կազմակերպությունները, որոնք միասին ընդհանուր ներմուծել են 2016թ.՝ 55,754,974.7 ԱՄՆ դոլարի (72.84%), 2017թ.՝ 66,906,138.8 ԱՄՆ դոլարի (76.60%) և 2018թ. 1-ին կիսամյակում՝ 34,256,661.2 ԱՄՆ դոլարի (77.50%) դեղորայք: Այդ 7 կազմակերպությունների կողմից ներմուծվող դեղերի մասնաբաժինն ունի աճի միտում:

Համաձայն ՀՀ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության՝ ՀՀ ներմուծված դեղերի տեղեկատվական բազաները համադրելով «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ից ստացված ՀՀ դեղերի ներմուծման բազաների հետ, պարզվել է, որ առկա են դեպքեր, երբ ներմուծող ընկերությունները և ֆիզիկական անձինք ԵԱՏՄ անդամ երկրներից ներմուծել են դեղորայք, սակայն տեղեկատվություն չեն ներկայացրել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և համապատասխան սահմանված փորձաքննություններ չեն անցել:

- Ներկայումս դեղերը համարվում են դրոշմապիտակներով պիտակավորման ենթակա ապրանք: Դեղերի մասով կիրառվում են նույն դրոշմապիտակները, ինչը կիրառվում է նաև այլ պիտակավորման ենթակա ապրանքների մասով: Դեղերի դրոշմապիտակների բազան համադրելով «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրամադրված ներմուծված դեղերի բազայի հետ ի հայտ են եկել տարբերություններ՝ ներմուծված դեղերի քանակների և տեսակների հետ կապված:

- Ընթացիկ եզրակացության առաջարկություններ բաժնում ներկայացվել են մի շարք առաջարկություններ՝ դեղերի հաշվառման, գրանցման, դրոշմապիտակավորման, դրանց նկատմամբ հետագա (արտադրողից մինչև սպառող) հսկողության վերաբերյալ:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ ֆինանսների նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
24.09.19-24.12.19թթ.	01.01.17-31.12.18թթ.	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
ՀՀ պետական պարտքի կառավարում	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային (ISSAI 100, 300) ստանդարտների համաձայն: Հաշվեքննությունն իրականացվել է համակարգին միտված մոտեցմամբ:	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
46	-	-
Եզրակացություն		Հղումը
Ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքները չեն պահպանվել:		

Առավել ուշագրավ փաստեր

1. ՀՀ պետական պարտքի սահմանման և դրա կառավարման շրջանակ

ՀՀ պետական պարտքի դե յուրե, ինչպես նաև պետական պարտքի կառավարման ընթացքում կիրառված դե ֆակտո սահմանումը բավարար համապարփակ չէ, այն չի ներառել ոչ բացահայտ պայմանական պարտավորությունները (մասնավորապես՝ պետական կամ գերազանցապես պետական սեփականությամբ ձեռնարկությունների, ինչպես նաև այն ոչ պետական կամ գերազանցապես ոչ պետական ձեռնարկությունների չերաշխավորված պարտքը, որոնց ռազմավարական կարևորությամբ և բնականոն գործունեության շարունակման հանրային շահով պայմանավորված մեծ է նշված կազմակերպությունների կողմից իրենց պարտավորությունները չկատարելու դեպքում պետության ֆինանսական միջամտության հավանականությունը), որի արդյունքում հաշվեքննության չափանիշների տեսանկյունից պետական պարտքի մաս համարվող նշված բաղադրիչը փաստացի մնացել է պետության կողմից անկառավարելի: Նշված

բաղադրիչի անտեսումը հանգեցնում է նաև ՀՀ պետական պարտքի վերաբերյալ հանրության և այլ շահառուների թերագնահատված պատկերացումների:

ՀՀ պետական պարտքի կառավարման կազմակերպչական կառուցվածք

- ՀՀ պետական պարտքի կառավարման կազմակերպչական կառուցվածքը եղել է ֆրագմենտավորված: Մասնավորապես, պետական պարտքի կառավարման համար պատասխանատու հիմնական ստորաբաժանումից՝ պետական պարտքի կառավարման վարչությունից (այսուհետ՝ ՊՊԿՎ) զատ, Ֆինանսների նախարարությունում (այսուհետ՝ ՖՆ) պետական պարտքի կառավարմանն առնչվող գործառույթներ են իրականացրել ևս երկու ստորաբաժանումներ՝ միջազգային համագործակցության վարչություն և պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն (այսուհետ՝ ՊԲՆՊԿՎ):
- ՀՀ պետական երաշխիքների կառավարման կազմակերպչական կառուցվածքը ևս եղել է ֆրագմենտավորված: Չնայած ՊԲՆՊԿՎ-ին են վերապահված եղել երաշխիքների տրամադրման ու կառավարման կանոնադրական գործառույթները, փաստացի ՊԲՆՊԿՎ-ն չի իրականացրել իրեն վերապահված գործառույթները արտաքին երաշխիքների մասով, իսկ մյուս կողմից այդ գործառույթների իրականացմանը մասնակցել է ՊՊԿՎ-ն՝ չունենալով դրա իրականացման կանոնադրական որևէ գործառույթ:
- ՊՊԿՎ-ին է վերապահված միջազգային ֆինանսական կազմակերպություններին անդամակցության գծով վճարումների կանխատեսման, իրականացման և հաշվառման գործառույթը, որը որևէ կապ չունի պետական պարտքի կառավարման հետ:
- Չնայած Կենտրոնական բանկի և ՖՆ-ի միջև կնքված գործակալական պայմանագրի առկայությանը, այն չի հրապարակվել:
- ՖՆ-ում պետական պարտքի կառավարման ոլորտում ներքին աուդիտներ չեն իրականացվել:
- Չի ապահովվել լիազորությունների պատշաճ տարանջատում, հակակշռում և զսպում պետական պարտքի գծով վճարումների նախաձեռնման, պարտքի կառավարման համակարգ պայմանագրերի տվյալների նախնական մուտքագրման, պայմանագրային տեղեկատվության հաստատման և համակարգում գրանցումների վերջնականացման գործառույթների գծով: Միևնույն պաշտոնատար անձը ներգրավված է եղել նշված բոլոր գործառույթների կատարման գործում:

Պարտքի կառավարման ռազմավարություն

- Չի կատարվել ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակը. երկարաժամկետ հատվածում պարտքի սպասարկման մեծությունը դրսևորել է աճի միտում (2012-2018թթ. աճել է 342%-ով):
- Չնայած փոխարժեքի դիսկը հանդիսացել է ՀՀ պետական պարտքի պորտֆելի ամենամեծ դիսկը, դրա գծով սահմանված ուղենշային ցուցանիշը՝ ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ մնացել է անփոփոխ՝ 20% մակարդակում: Չեն կիրառվել արտարժույթային դիսկի զսպման նպատակով հեջավորման գործիքներ: Ածանցյալ գործիքների կիրառության ընթացակարգեր սահմանված չեն եղել:

31.12.2018թ.-ի դրությամբ ոչ ռեզիդենտների ձեռք բերած ՀՀ պետական պարտատոմսերի տեսակարար կշիռը ընդհանուրում կազմել է 0.6%:

- Ցածր է եղել ՀՀ կառավարության պարտքի և տոկոսավճարների միջնաժամկետ կանխատեսումների որակը (օրինակ՝ 2018թ.-ին ՀՀ կառավարության պարտքի փաստացի մեծությունը գերազանցել է 2016-2018թթ. ռազմավարությամբ կանխատեսված մակարդակը 28.5%-ով):

- Բացակայել է Ռազմավարության նախագիծը ԿԲ-ին կարծիքի ներկայացնելու իմպերատիվ պահանջ և 2018թ.-ին այն կարծիքի չի ներկայացվել:

- Ներդրված չի եղել ռազմավարության կատարողականի վերաբերյալ կառավարչական ներքին հաշվետվողականության արդյունավետ համակարգ:

Պետական երաշխիքների կառավարում

- Պետության երաշխիքային քաղաքականության վերաբերյալ տեղեկատվություն չի հրապարակվել (ըստ այդմ՝ չի կատարվել ՊՊՄՕ 23-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը), սակայն առանձին տնտեսվարողների տրամադրվել են պետական ներքին և արտաքին երաշխիքներ՝ այդպիսով տվյալ տնտեսվարողների համար ստեղծելով անհավասար պայմաններ նույն ոլորտում գործող և համանման ֆինանսատնտեսական վիճակում գտնվող այլ կազմակերպությունների համեմատ:

- Պետական երաշխիքների տրամադրումը կրել է իրավիճակային բնույթ, սահմանված ունիվերսալ ընթացակարգերը չեն պահպանվել: Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին բյուջետային երաշխիք տրամադրելու ընթացակարգեր սահմանված չեն:

- Բացակայել է վարկային ռիսկի գնահատման մեթոդաբանություն և դրա հիման վրա՝ նախքան երաշխիքի տրամադրումը և տրամադրումից հետո իրականացված գնահատումներ: Ըստ այդմ, պետական երաշխիքների տրամադրման և կառավարման համակարգը անարդյունավետ է, քանի որ չի պարունակում դրանց նյութականացման հավանականության զսպման արդյունավետ ինստիտուցիոնալ մեխանիզմներ:

- Երաշխիքային վճարների գանձման ներկայիս համակարգը կապակցված չէ վարկային ռիսկի հետ:

- Պետական երաշխիքների տվյալների բազան ամբողջական չէ, երաշխիքները DMFAS 6 համակարգում հաշվառված չեն եղել, տվյալների գրանցման ընթացակարգերը բացակայել են:

Ենթավարկերի և բյուջետային վարկերի կառավարում

- Բյուջետային վարկավորման գործընթացը կրել է իրավիճակային բնույթ՝ շրջանցելով սահմանված ունիվերսալ ընթացակարգային կարգավորումները, իսկ ենթավարկերի տրամադրման ընթացակարգային կարգավորումներ սահմանված չեն եղել:

- Ենթավարկերի և բյուջետային վարկերի տրամադրման քաղաքականություն չի հրապարակվել՝ չնայած այդպիսիք տրամադրվել են:

- Բացակայել է վարկային ռիսկի գնահատման մեթոդաբանություն և դրա հիման վրա նախքան բյուջետային վարկի և ենթավարկի տրամադրումը և տրամադրումից հետո իրականացված գնահատումներ: Չի կիրառվել վարկային ռիսկի հետ

կապակցված վերադիր տոկոսադրույք: 43% դեպքերում վարկավորումն իրականացվել է առանց ապահովման միջոցների կիրառության:

- Ենթավարկերը և բյուջետային վարկերը DMFAS 6 համակարգում հաշվառված չեն եղել, տվյալների գրանցման ընթացակարգերը բացակայել են:

Արտաքին փոխառություններ

- Վարկային համաձայնագրերը վավերացնելու մասին ՀՀ օրենքի նախագծի մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերին կցվող Վարկային համաձայնագիրը վավերացնելու նպատակահարմարության տեղեկանք-հիմնավորումներում չի ներկայացվում համեմատական վերլուծություն ֆինանսավորման այլ աղբյուրների համեմատ և ընտրված աղբյուրից վարկի ներգրավման պայմանների (ֆինանսական) շահեկանության հիմնավորումը, ինչը չի նպաստում փոխառության գործընթացի թափանցիկությանը և չի ստեղծում տեղեկացված որոշումների կայացման միջավայր:

Կանխիկի հոսքերի կառավարում

- Չեն իրականացվել կանխիկի հոսքերի կանխատեսումներ օրական կտրվածքով: Իրականացվել են շաբաթական կանխատեսումներ՝ առաջիկա մեկ ամսվա համար: Կանխատեսումների որակը բավական ցածր է եղել, մասնավորապես՝ 2018թ. ԳՄՀ մուտքերի շաբաթական 48 կանխատեսումներից 43-ի դեպքում և ԳՄՀ ելքերի շաբաթական 48 կանխատեսումներից 36-ի դեպքում կանխատեսված ցուցանիշները շեղվել են փաստացի ցուցանիշներից առնվազն 15%-ով:
- Կանխատեսումների ցածր որակը պայմանավորված է եղել նաև այն հանգամանքով, որ ՀՀ ՊԵԿ-ը չի կատարել ՖՆ-ին պետական բյուջեի եկամուտների կանխատեսումների մասին տեղեկությունների տրամադրման՝ ՀՀ կառավարության 19.08.04թ.-ի թիվ 1354-Ն որոշման պահանջները:
- Չի իրականացվել կանխիկի հոսքերի ակտիվ կառավարում: Կիրառվող միակ գործիքը եղել է ԿԲ-ում ավանդադրման գործիքը, իսկ ավանդադրման նվազագույն ժամկետը կազմել է 7 օր, ըստ այդմ՝ չի իրականացվել կանխիկի հոսքերի ամենօրյա կառավարում՝ մեկօրյա գործարքների միջոցով, որի արդյունքում կարող էին նվազել կանխիկի մնացորդները (2018թ.-ին ԳՄՀ միջին մնացորդը կազմել է 14.5 մլրդ. դրամ) և ապահովել հավելյալ տոկոսային եկամուտներ (մինչև 812 մլն դրամի չափով):
- Առկա չի եղել կանխիկի հոսքերի կառավարման ֆորմալ մեթոդաբանություն, այդ թվում՝ կանխիկի մնացորդի շեմեր (հատակ և առաստաղ):

ՀՀ պետական պարտքի կառավարման SS ենթակառուցվածք

- ՀՀ ՖՆ-ում պետական պարտքի կառավարման տեղեկատվական համակարգի շրջանակներում տվյալների միասնական բազա առկա չէ: 2011թ.-ից ի վեր ՖՆ-ում տեղադրված է DMFAS 6 տեղեկատվական համակարգը, սակայն համակարգում գրանցված չեն ենթավարկերը, ներքին և արտաքին երաշխիքները, ինչպես նաև արտաքին 189 վարկերից 21-ը: Պետական պարտքի գծով տվյալների բազաները հիմնականում պահվում են Excel ֆայլերով:
- Վերջին 4 տարիների ընթացքում պետական պարտքի կառավարման DMFAS համակարգը զուրկ է եղել տեխնիկական սպասարկումից՝ պայմանավորված տեխնիկական ադմինիստրատորի բացակայությամբ:
- DMFAS տեղեկատվական համակարգին հասանելիություն ունեցող ՖՆ 15 աշխատակիցներից 6-ը չեն անցել վերապատրաստում, իսկ վերապատրաստում

անցածներից 7-ը, այդ թվում՝ տեխնիկական ադմինիստրատորի վերապատրաստում անցած անձինք այլևս չեն աշխատում համակարգի հետ, չի ապահովվել ինստիտուցիոնալ հիշողության փոխանցում:

ՀՀ պետական պարտքի կառավարման ոլորտը կանոնակարգող իրավական դաշտ

• ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակը չի ներառել փոխառության ծախսերի նվազեցումը պարտքային պորտֆելի ռիսկերի ընդունելի մակարդակով հաշվեկշռելու պահանջ, այլ բավարարվել է միայն պարտքի սպասարկման մեծության նվազեցման նպատակադրմամբ (ընդ որում, նպատակադրվել է սոսկ նվազեցնելը և ոչ՝ նվազագույնին հասցնելը, նախատեսվել է վերջինս իրականացնել միայն երկարաժամկետ հատվածի համար և ոչ՝ նաև միջնաժամկետի՝ մինչդեռ պարտքի ռազմավարական կառավարման հորիզոնը միջնաժամկետ հորիզոնն է):

• ՀՀ առաջնային օրենսդրությունը չի նախատեսել արտարժույթային պետական պարտատոմսերի թողարկմամբ պետական պարտքի ներգրավման լիազորություններ, դրանց հստակ պատվիրակում: (գ) ՀՀ առաջնային օրենսդրությունը չի նախատեսել փոխառության ծրագրի մշակման պահանջ՝ չնայած ՖՆ-ն մշակել և հրապարակել է փոխառության տարեկան ծրագրեր: Վերջիններս հաստատված չեն եղել որևէ իրավական ակտով:

ՀՀ պետական պարտքի գծով հաշվետվողականություն

• ՀՀ առաջնային օրենսդրությունը չի նախատեսում պետական պարտքի վերաբերյալ ինքնուրույն հաշվետվություն ԱԺ-ին ներկայացնելու պահանջ, փոխարենը նախատեսում է պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության կազմում պետական պարտքի և ընթացիկ պարտավորության վերաբերյալ տեղեկատվության ներկայացման պահանջ:

• ՖՆ-ի վիճակագրական տեղեկագրերում և այլ հրապարակումներում չի հրապարակվում ենթավարկերի վերաբերյալ ապագաբեգացված տեղեկատվություն՝ ըստ վարկառուների և յուրաքանչյուր վարկառուի գծով վարկավորման պայմանների:

• 2017թ. և 2018թ. ՀՀ պետական բյուջեի ծրագրերի իրականացումը բնութագրող ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշները չեն նախատեսել ՖՆ-ի կողմից պետական պարտքի կառավարման գործառույթների իրականացման կատարողականի գնահատման բավարար ծածկույթ:

ԵՐԵՎԱՆՔԱՂԱՔՈՒՄ ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտները	Ստուգման օբյեկտը
ՀՀ առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետարան	«Շտապբուժօգնություն» ՓԲԸ
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

24.09.19-20.12.19թթ.

01.01.17-31.12.18թթ.

Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Երևան քաղաքում շտապ բժշկական օգնության ծառայություններ		Իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների (ISSAI 100 և 300) միջազգային ստանդարտներին համապատասխան կատարողականի հաշվեքննություն: Կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը:
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
4	2	6
Եզրակացություն		Հղումը
Ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքները չեն պահպանվել:		

Ծանոթություն: Երևան քաղաքում շտապ բժշկական օգնության ծառայություն իրականացնող «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի բրիգադների արդյունավետ բաշխվածության և ծանրաբեռնվածության, շտապ օգնության կանչերին արդյունավետ արձագանքման և ժամանակին սպասարկման, էլեկտրոնային առողջապահության համակարգում կանչերի գրանցման և ֆինանսավորման գործընթացներում արձանագրվել են ծախսային և նպատակային արդյունավետության մի շարք խնդիրներ:

Առավել ուշագրավ փաստեր

Շտապ բժշկական օգնության բրիգադների բաշխվածություն և ծանրաբեռնվածություն

- 2017-2018թթ.-ին ոլորտի ռազմավարությամբ սահմանված՝ 30,000 բնակչին մեկ բրիգադ սկզբունքն ապահովվել է, սակայն, ըստ տարածքային բաշխվածության, բոլոր ենթակայաններում (բացի՝ Կենտրոն ենթակայանից) մեկ բրիգադը սպասարկել է ավելի քան 34,000 բնակչի, իսկ երկու ենթակայաններում՝ 37,000-ից ավելի բնակչի:
- Օրվա գերծանրաբեռնված ժամերին (16:00–ից 23:59-ը հատվածում) մի շարք ենթակայանների բրիգադներ մեկ ժամում սպասարկել են ավելի քան մեկ կանչ:

Շտապ բժշկական օգնության կանչերի արձագանքում և սպասարկում

- Զանգերի սպասման համակարգի բացակայության պատճառով 1-03 ծառայությունը զուգահեռաբար կարող է ընդունել մինչև 6 կանչ: Ուստի, 7 և ավելի միաժամանակյա կանչերը չեն գրանցվում Կենտրոնական դիսպեչերական համակարգում (ԿԴՀ) ժամանակին:
- ՀՀ մարզերի բջջային ցանցից 1-03 ծառայության ստացված զանգերն ավտոմատ կերպով չեն ուղղորդվում տարածքային շտապ օգնության ծառայություններ (բացառությամբ մեկ օպերատորի բջջային ցանցից ստացված կանչերի): Դրանք ուղղորդվում են Երևան, այնուհետև Երևանից մարզերի սպասարկող շտապ բուժօգնության միավոր:
- 2017-2018թթ.-ին ստացված կանչերի դասակարգման մասով չափորոշիչ սահմանված չի եղել, իսկ ԿԴՀ-ում կանչերի դասակարգման դաշտը պարտադիր դաշտ չէ:
- Ենթակայաններից բրիգադներ կանչերի փոխանցման ժամկետի վերաբերյալ չափորոշիչ սահմանված չէ: 2017-2018թթ.-ին գծային և վերակենդանացման բրիգադներին կանչերի փոխանցումը 7-9% դեպքերում տևել է ավելի քան 10 րոպե:
- 2017-2018թթ. համար կանչերի ժամանակին արձագանքման և սպասարկման չափորոշիչների ապահովման գործընթացի գնահատման համար անհրաժեշտ տվյալներն առկա չեն, քանի որ շտապ օգնության կանչը բրիգադին փոխանցվելուց հետո կանչի մյուս տվյալները լրացվում են ԿԴՀ-ում կանչի թերթիկի թղթային տարբերակից: Որոշ դեպքերում, կանչերի թերթիկների թղթային տարբերակներում կանչի տվյալները լրացվել են ոչ ամբողջությամբ:
- Առկա են դեպքեր, երբ շտապօգնության բրիգադով բերված հոսպիտալացման ենթակա պացիենտին բուժկենտրոնները մերժել են ընդունել ազատ մահճակալ չլինելու պատճառաբանությամբ:
- Բուժհաստատություններում ազատ մահճակալների քանակների վերաբերյալ «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ին առցանց տրամադրված տվյալները ստույգ չեն:

Շտապ բժշկական օգնության կանչերի՝ էլեկտրոնային առողջապահության համակարգում գրանցումը և ֆինանսավորումը

- 2017-2018թթ.-ին էլեկտրոնային առողջապահության համակարգում շտապ բժշկական օգնություն ստացած կանչերի ընդհանուր թվից պացիենտների նույնականացման տվյալներն առկա են եղել միայն 20-27% դեպքերում:
- Դիսպետչերական և էլեկտրոնային առողջապահության համակարգերի տվյալները միասնական չեն: Համակարգերի տվյալների մուտքագրման և կառավարման գործընթացն արդյունավետ չի եղել: Արդյունքում, էլեկտրոնային առողջապահության համակարգում պետական պատվերի շրջանակներում ֆինանսավորված կանչերի վերաբերյալ առկա են ոչ ստույգ տվյալներ:

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Հաշվեքննության կատարման ժամկետը

18.09.19-30.12.19թթ.

**Հաշվեքննությունն ընդգրկող
ժամանակաշրջանը**

01.01.18-31.12.18թթ.

Հաշվեքննության առարկան

Միջին մասնագիտական կրթության
համակարգ

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի
մասին» ՀՀ օրենքին, Բարձրագույն
հաշվեքննիչ մարմինների (ISSAI 100 և 300)
միջազգային ստանդարտներին
համապատասխան կատարողականի
հաշվեքննություն: Կիրառվել են հարցում,
արտաքին հաստատում, վերլուծական
ընթացակարգ և վերահաշվարկ
հաշվեքննության ընթացակարգերը:

**Համակարգին միտված
առաջարկություններ**

3

**Արդյունքին միտված
առաջարկություններ**

1

**Խնդիրներին միտված
առաջարկություններ**

2

Եզրակացություն

Հղումը

Ծախսային արդյունավետության սկզբունքը չի պահպանվել:



Առավել ուշագրավ փաստեր

- Պետական բյուջեի «Միջին մասնագիտական կրթություն» ծրագիրը ֆինանսավորվում է իրավական հիմք չունեցող ոչ արժանահավատ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների հիման վրա:
- «Միջին մասնագիտական կրթություն» ծրագրով ուսանողական նպաստների ձևով պետական պատվերով սովորողների ուսման վճարը փոխհատուցելու փոխարեն պետական բյուջեից հատկացված միջոցներով յուրաքանչյուր տարի փաստացի

իրականացվում է ուսումնական հաստատությունների պահպանման ծախսերի ֆինանսավորում:

- Տարբեր գերատեսչությունների միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մեկ ուսանողի հաշվարկով հատկացված ուսանողական նպաստի տարեկան գումարի չափը կազմում է 151.1 հազ. դրամից մինչև 3,728.1 հազ. դրամ, կամ տարբերությունը 24.7 անգամ, որը պայմանավորված չէ ուսումնական հաստատությունների մասնագիտական առանձնահատկություններով և հետևանք է ծրագրի տվյալ բաղադրիչի սխալ պլանավորման:

- ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության երկու ուսումնական հաստատություններին ՀՀ կառավարության որոշումներով յուրաքանչյուր ուսումնական տարվա համար պետական պատվերի շրջանակում հատկացվել է անվճար ուսուցման 90 ընդունելության տեղեր, և հաշվի առնելով ուսման տևողությունը՝ երեք տարի, սովորողների առավելագույն թիվը 2018 թվականի համար կազմում էր 270 սովորող: Սակայն, ըստ 2018 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության, այդ ուսումնական հաստատություններում պետական պատվերով միջին մասնագիտական կրթություն ստացողների թիվը կազմել է 855 սովորող, որի համար պետական բյուջեից հատկացվել է 892,344.2 հազ. դրամ: Տվյալ տարին պետական պատվերով սովորողների առավելագույն թվին համապատասխան ուսանողական նպաստի գումարը պետք է կազմեր 281,799.0 հազ. դրամ: Հետևաբար, ծախսային արդյունավետության տեսանկյունից ուսանողական նպաստների տրամադրում բաղադրիչով 2018 թվականին կատարվել է 610,545.2 հազ. դրամի անարդյունավետ ծախս:

- Ըստ 2018 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության, ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում 34,072.0 հազ. դրամի կրթաթոշակ է տրամադրվել 589 սովորողի: Հաշվի առնելով սպորտի ուսումնական հաստատությունների պետական պատվերով սովորողների առավելագույն թիվը, 10,773.0 հազ. դրամի կրթաթոշակ պետք է տրամադրվեր 189 սովորողի: Փաստորեն, ծախսային արդյունավետության տեսանկյունից ուսանողների կրթաթոշակ բաղադրիչով 2018 թվականին կատարվել է 23,299.0 հազ. դրամի անարդյունավետ ծախս:

- ՀՀ կրթության և գիտության նախարարության միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող յոթ ուսումնական հաստատություններ 2018 թվականին պետական բյուջեից կրթաթոշակների վճարման համար ֆինանսավորված միջոցների մի մասը որպես կրթաթոշակ չեն վճարել սովորողներին, սակայն այդ գումարը պետական բյուջե չի վերադարձվել, և ընդամենը 5,139.6 հազ. դրամ ծախսելվել է ոչ նպատակային:

- ՀՀ կառավարության ծրագրի տնտեսական զարգացման երեք առաջնահերթություններից մեկը՝ գյուղատնտեսության ոլորտի մասնագիտությունները, պահանջված չեն եղել հիմնական դպրոցների շրջանավարտների կողմից:

**ԳԵՈՂԵԶԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Հաշվեքննության օբյեկտը	Ստուգման օբյեկտը
------------------------	------------------

ՀՀ կադաստրի կոմիտե

«Գեոդեզիա և քարտեզագրություն»
ՊՈԱԿ (այսուհետ՝ «Գեոքարտ» ՊՈԱԿ)

Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
---------------------------------	---

24.09-30.12.2019թ.

01.01.2017թ. 31.12.2018թ.

Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը
------------------------	----------------------------------

Գեոդեզիական քարտեզագրական
ծառայություններ

Իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի
մասին» ՀՀ օրենքին, Բարձրագույն
հաշվեքննիչ մարմինների (ISSAI 100 և 300)
միջազգային ստանդարտներին
համապատասխան կատարողականի
հաշվեքննություն: Կիրառվել են հարցում,
արտաքին հաստատում, վերլուծական
ընթացակարգ և վերահաշվարկ
հաշվեքննության ընթացակարգերը:

Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
--	--	--

-

1

3

Եզրակացություն	Հղումը
----------------	--------

Նպատակային արդյունավետության սկզբունքը չի պահպանվել:



Ծանոթություն: ՀՀ Կադաստրի պետական կոմիտեի կողմից բաց մրցույթի
ընթացակարգով գեոդեզիական-քարտեզագրական ծառայությունների գնումը
կազմակերպելը որդեգրված քաղաքականության նպատակին չի ծառայել և վարվող
քաղաքականությունը նպաստել է «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի եկամուտների նվազմանը և
աշխատակիցների թվաքանակի կրճատմանը:

Առավել ուշագրավ փաստեր

- Մինչև 2015 թվականի ապրիլի 1-ը գնման ենթակա գեոդեզիայի և քարտեզագրման աշխատանքներն ու ծառայությունները հնարավոր է եղել ձեռք բերել մեկ անձից, ինչը պայմանավորված է «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ և ստեղծման նպատակով: «Գնումների կազմակերպման գործընթացի մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի թիվ 105-Ն որոշմամբ կատարվել են փոփոխություններ համաձայն որի՝ մեկ անձից ուղղակի գնում կատարելու պահանջը ճանաչվել է ուժը կորցրած և վերը նշված ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման գործընթացն իրականացվել է բաց մրցույթով: ՀՀ կառավարության որոշման մեջ կատարված փոփոխություններից հետո ՀՀ կադաստրի պետական կոմիտեն (այսուհետ՝ Կադաստր) աշխատանքների և ծառայությունների գնումները կազմակերպել է բաց մրցույթով: Արդյունքում, մրցույթներին մասնավոր ընկերությունների մասնակցելու հնարավորությունը զգալիորեն անդրադարձել է «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի տնտեսական գործունեության վրա: «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի 2016 թվականի եկամուտները 2015 թվականի համեմատ նվազել են 33%-ով: 2018 թվականին ֆինանսական դրությունը փոքր-ինչ բարելավվել է, բայց դեռ 27% -ով պակաս է, քան 2015 թվականին: Վերը նշված որոշումն իր հետևանքներն է ունեցել նաև անձնակազմի թվաքանակի վրա: 2013 թվականից հետո աշխատողների թիվն աստիճանաբար նվազել է՝ 2013 թվականի 101-ից մինչև 2019 թվականը հասնելով 65-ի: Վերոնշյալ որոշումը բացասաբար է անդրադարձել նաև «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեության վրա, քանի որ առկա է ռիսկ, որ մրցույթներում չհաղթելու դեպքում կանոնադրական գործառույթներն իրականացնելու համար չի ունենա բավական եկամուտներ:
- ՀՀ կառավարության որոշումներով և ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ «Գեոքարտ» ՊՈԱԿ-ին պետության կողմից անհատույց և անժամկետ տրվել է շենք, շինություններ, շարժական գույք, սարքավորումներ, գործիքներ: Գնման ենթակա գեոդեզիայի և քարտեզագրման աշխատանքների ու ծառայությունների մրցույթների ընթացակարգերում «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի կազմակերպաիրավական ձևն այլ մասնավոր ընկերությունների նկատմամբ առավելություն է տվել: Կադաստրի կողմից հայտարարված մրցույթներին հաղթել է՝ բոլոր հայտատուներից ամենացածր գին առաջարկելով, քանի որ մասնավոր ընկերությունները ստիպված են եղել կրելու այն ծախսերը, որոնցից «Գեոքարտ» ՊՈԱԿ-ն ազատված էր: Ուստի, մի շարք հայտարարված մրցույթներն ընթացակարգային առումով կրել են ձևական բնույթ:
- Կադաստրը, համաձայն «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի կանոնադրության, իրականացնում է կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն: Հաշվեքննության արդյունքներով պարզվել է, որ Կադաստրը վերահսկողական գործառույթները պատշաճ կերպով չի իրականացրել: Մասնավորապես.
 - Կադաստրը «Գեոքարտ» ՊՈԱԿ-ին պատվիրել է՝ ատլասների, քարտեզների, բառարանների, բուկլետների պատրաստման աշխատանքներ, որոնց մի մասը տպագրվելուց հետո տնօրինման կամ պահման իրավունքով հանձնվել է «Գեոքարտ» ՊՈԱԿ-ին: Պահպանման ոչ պատշաճ պայմանների հետևանքով դրանց մի մասը դարձել է ոչ պիտանի և 2018 թվականի մարտի 3-ին դուրս է գրվել: Կադաստրը չի վերահսկել ատլասների, քարտեզների, բառարանների, բուկլետների պատշաճ պահպանումը:

- Կադաստրի և «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի միջև կնքված 44,6 մլն դրամ արժեքով տնտեսական հետազոտության ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիրն ունեցվել է 63 օրով, սակայն պայմանագրով սահմանված տույժ պատվիրատուն չի կիրառել:
- Համաձայն «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի կանոնադրության 30-րդ կետի՝ կազմակերպությունը պարտավոր էր հիմնադրի կողմից սահմանված կարգով հրապարակել 2013-2018 թվականների տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչը չի կատարվել:

ՄՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտները		Ստուգման օբյեկտը
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
24.09.19-30.12.19թթ.		01.01.17-31.12.18թթ.
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Ստանդարտների մշակման և հաստատման գործընթաց		Իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների (ISSAI 100 և 300) միջազգային ստանդարտներին համապատասխան կատարողականի հաշվեքննություն: Կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը:
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
5	3	7
Եզրակացություն		Հղումը
Նպատակային արդյունավետության սկզբունքը չի պահպանվել:		

Ծանոթություն: 2017–2018 թվականների ընթացքում առկա են ստանդարտների մշակման և հաստատման համար գումարների անարդյունավետ ծախսելու ռիսկեր:

Առավել ուշագրավ փաստեր

Հաշվեքննությամբ ընդգրկված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ստանդարտների մշակման և հաստատման գործընթացում ոչ լիազոր, ոչ էլ ազգային մարմինների կողմից իրենց լիազորությունների և պարտականությունների շրջանակներում, լիարժեքորեն չեն կատարվել ստանդարտացման գործընթացի պլանավորման և մշակման աշխատանքները:

Լիարժեք չի գործել նաև ոլորտի նկատմամբ հսկողական մեխանիզմը, ինչի բացակայությունը հանգեցրել է ստանդարտացման գործընթացում մի շարք խեղաթյուրումների: Մասնավորապես՝

- Չի պահպանվել ստանդարտների մշակման ծրագրի պլանավորման աշխատանքների ժամանակացույցը, իսկ պետական ստանդարտացման ամենամյա ծրագիրը հաստատվել է նախարարի կողմից, ով նման իրավասություն չի ունեցել: Պետական կառավարման մարմինների կողմից հայրենական արտադրանքի խթանման համար ստանդարտների պահանջ չի ներկայացվել, իսկ ամենամյա ծրագրում ստանդարտների ընդգրկման համար սահմանված և հաստատված մեթոդաբանության բացակայության պատճառով ծրագրերում ընդգրկվել են ստանդարտներ, որոնց պահանջը գերատեսչությունների կողմից չի ներկայացվել:

- 2017-2018թթ. ՍԱԻ տնօրենի հրամանով ստանդարտները հաստատվել և գործողության մեջ են դրվել առանց ստանդարտացման տեխնիկական խորհրդի եզրակացության: Ավելին, տեխնիկական խորհուրդ ընդհանրապես գոյություն չի ունեցել, իսկ 2017թ. ՍԱԻ տնօրենի համապատասխան հրամաններով ընդունվել և գործողության մեջ են դրվել 10 ստանդարտներ, որոնք սակայն փաստացի մշակված չեն եղել:

- Մի շարք ստանդարտների մշակման աշխատանքներում համապատասխան ոլորտների մասնագետներ ներգրավված չեն եղել: Բազմաթիվ ստանդարտների նախագծերը շահագրգիռ մարմիններին ուղարկվել են կարծիքի ստանդարտի ընդունումից հետո, ավելին՝ մի շարք դեպքերում ստանդարտի հաստատումից հետո ստացված առաջարկությունները առանց տեխնիկական հանձնաժողովի նիստի և քննարկման ներառվել են նախկինում արդեն ընդունված և գործողության մեջ դրված ստանդարտներում:

«ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-Ի ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտները	Ստուգման օբյեկտը
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
17.04.19-31.10.19թթ.	01.01.17-31.12.18թթ.
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը

«Չափագիտության ազգային ինստիտուտ»
ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական
գործունեություն

իրականացվել է կատարողականի
հաշվեքննություն:

Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
5	4	8
Եզրակացություն		Հղումը
Նպատակային արդյունավետության սկզբունքը չի պահպանվել:		

Ծանոթություն: Հաշվեքննության արդյունքում, արձանագրվել են ծախսային և նպատակային արդյունավետության մի շարք խնդիրներ: ՀՀ օրենսդրական չափագիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտներում համապատասխան լիազորված մարմինների 2017-2018թթ. գործունեության արդյունքը չի հանգեցրել սահմանված նպատակների ամբողջական իրականացմանն ու պլանավորված արդյունքների ստացմանը:

Առավել ուշագրավ փաստեր

Կառավարման խորհրդի և կանոնադրության պահանջներ

- Չափագիտության ազգային մարմնի ղեկավարման գլխավոր մարմինը կառավարման խորհուրդն է, որի անհատական կազմը հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի 24.02.2016թ. թիվ 132-Ա հրամանով և դրանից հետո անհատական կազմի որևէ փոփոխություն չի իրականացվել, նոր կազմ չի հաստատվել, ավելին՝ կազմում ներառված անձինք, հաշվետու ժամանակահատվածում դադարել են լինել համապատասխան գերատեսչության աշխատակիցներ: Միաժամանակ, 2017-2018թթ. խորհրդի նիստեր առհասարակ չեն գումարվել, ինչի հետևանքով չեն պահպանվել «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-22-Ն, այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 6-րդ մասով կառավարման խորհրդին վերապահված գործառույթները:
- Օրենքի 18-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21.04.2016թ. թիվ 393-Ն որոշման համաձայն՝ մաքսային մարմինները ՀՀ տարածք ներմուծված չափման միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված կարգով պետք է տրամադրեն չափագիտության լիազոր մարմնին, սակայն ՀՀ մաքսային մարմինների կողմից ՀՀ տարածք ներմուծված չափման միջոցների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը վերջին անգամ տրամադրվել է 2014թ. և այնուհետև ընդհատվել է ընդհուպ մինչև 2018թ. վերջին եռամսյակը: Ավելին, նշյալ ժամանակահատվածում չափման միջոցի տեսակի հաստատում կատարվել է բացառապես բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված

հայտերի հիման վրա, իսկ տնտեսվարող սուբյեկտների գերակշիռ մասը չի իրականացրել չափման միջոցի տեսակի հաստատում:

Օրենսդրական չափագիտություն

- Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից կիրառվող չափման միջոցների ստուգաչափում մեծամասամբ չի իրականացվել: Մասնավորապես, համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տեղեկատվության՝ 2017թ. տարեվերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել է 14,296 խանութ և 2,369 կրպակ: Կշեռքների ստուգաչափում 2017թ. իրականացվել է 175 տնտեսվարող սուբյեկտների մոտ, որի արդյունքներով ստուգաչափվել է ընդհանուր թվով տարբեր տեսակի 795 հատ կշեռք, իսկ 2018թ.՝ 319 տնտեսվարող սուբյեկտների մոտ, իսկ ստուգաչափված կշեռքների թիվը կազմել 1,291 հատ:
- Ավտոմոբիլային սակաչափիչների ստուգաչափումների վերաբերյալ տեղեկատվության վերլուծությունից պարզվել է, որ ՓԲԸ-ի կողմից 2017թ. իրականացվել է 2,451 ավտոմոբիլային սակաչափիչների ստուգաչափում, 2018թ. դրանց թիվը էապես նվազել է՝ կազմելով 1,321-ը: Ընդ որում, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2018թ. ՀՀ-ում տաքսի վարելու լիցենզիա է ունեցել 92,000 քաղաքացի:
- ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2017թ. տարեվերջին ՀՀ տարածքում գործել է 362 գազալցակայան և 486 բենզալցակայան, մինչդեռ նույն տարում պարտադիր ստուգաչափում է անցել 287 գազալցակայան և 153 տնտեսվարող սուբյեկտի 264 նավթամթերքի բաշխիչ աշտարակ:
- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն 2017-2018թթ. տեղադրել է 347,379 հատ հաշվիչ, այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում ստուգաչափված հաշվիչների թիվը կազմել է 290,829 հատ (56,550 հատով պակաս):
- Առողջապահության ոլորտում գործունեություն ծավալվելու 4,751 լիցենզավորված կազմակերպություններից 2017-2018թթ. պարտադիր ստուգաչափման ենթակա սարքավորումներ կիրառող հաստատություններից ստուգաչափման հայտ է ներկայացրել շուրջ 146-ը կամ 3.1%-ը: Հանրապետությունում գործող շուրջ 200 պոլիկլինիկաներից 2017-2018թթ. ստուգաչափման հայտ է ներկայացրել 11-ը:

Ստուգաչափման արդյունքների վավերացում

- Համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի՝ սկսած 2012թ.-ից չափման միջոցների ստուգաչափում իրականացնող մասնագետները ենթակա են պարտադիր վկայագրման՝ որպես ստուգաչափող: 2017-2018թթ. ստուգաչափման աշխատանքներ իրականացրած 99 աշխատակիցներից 25-ը չի ունեցել ստուգաչափողի վկայագիր:
- Ստուգաչափման արդյունքների վավերացման փաստացի գործընթացը չի համապատասխանել իրավական ակտերից որևէ մեկի ամբողջական պահանջներին, վավերացման գործընթացը փաստացի կանոնակարգված չի եղել, իսկ

ստուգաչափման արդյունքների վավերացումը չի իրականացվել օրենսդրության պահանջներով: Մասնավորապես, ՓԲԸ-ն առանց իրավական ակտերի մշակել, տպել ու օգտագործել է ինքնակաշուն՝ տարեկան և եռամսյակային դրոշմներ, որոնց գոյության մասին, ինչպես նաև կիրառման վերաբերյալ որևէ իրավական փաստաթուղթ առկա չի եղել, հետևաբար, ստուգաչափման վավերացման ժամանակ նշված դրոշմներն օգտագործելը չի համապատասխանել չափագիտության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին:

Չափման միջոցների չափագիտական հսկողություն

- Օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ չափագիտության ազգային մարմինը չափման միջոցները սահմանված կարգով ստուգաչափման ներկայացնելու համար ծանուցում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին: ՓԲԸ-ն չի ունեցել վերոնշյալ գործառույթն իրականացնելու մշակված կարգ և փաստացի ծանուցումներ չի տրվել:
- Չեն պահպանվել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 14.02.2013թ. թիվ 104-Ն հրամանի 18-րդ և 19-րդ կետերի, ինչպես նաև 19.02.2018թ. թիվ 133-Ն հրամանի 23-րդ կետի պահանջները, ինչի հետևանքով ՓԲԸ-ի կողմից 2017թ. չեն կազմվել ստուգաչափման գրաֆիկները, իսկ 2018թ. մարտից՝ նախատեսված ստուգաչափման արձանագրությունները:
- Վերահսկողության համակարգը եղել է ոչ լիարժեք և փաստացի չի գործել: ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կազմում գործող շուկայի վերահսկողության տեսչության կողմից օրենսդրական չափագիտության ոլորտում 2017թ. իրականացվել է ընդհանուր թվով ընդամենը 73 ստուգում, որից թվով 28-ի դեպքում խախտում չի հայտնաբերվել, և տուգանք չի կիրառվել:

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵՎԱՄՈՒՏ ԱՆԴԱՄ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ (ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌԴԴՏԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ)

Հաշվեքնության օբյեկտները

ԵԱՏՄ անդամ պետությունների գանձապետական և մաքսային մարմիններ

Հաշվեքնության կատարման ժամկետը

01.05.19-28.11.19թթ.

Հաշվեքնությունն ընդգրկող ժամանակաշրջանը

01.01.18-31.12.18թթ.

Հաշվեքնության առարկան

Հաշվեքնության մեթոդաբանությունը

ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների) գումարների հաշվեգրման և բաշխման, դրանք, որպես եկամուտ բյուջեներ փոխանցման կարգի պահպանում

Իրականացվել է ֆինանսական, համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն: Կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ հաշվեքննության ընթացակարգերը:

Համակարգին միտված առաջարկություններ

Արդյունքին միտված առաջարկություններ

Խնդիրներին միտված առաջարկություններ

1

-

2

Հղումը



Ծանոթություն: ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից իրականացվել է անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման ու բաշխման, անդամ պետությունների բյուջեների եկամուտներին դրանց փոխանցման կապարման նկատմամբ համադրել հսկողական միջոցառումներ, որոնց համակարգումը 2019 թվականին իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից:

2018 թվականին ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ փոխանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվները սահմանվել են հետևյալ չափով.

- Հայաստանի Հանրապետության համար՝ 1.220 տոկոս,
- Բելառուսի Հանրապետության համար՝ 4.560 տոկոս,
- Ղազախստանի Հանրապետության համար՝ 7.055 տոկոս,
- Ղրղզստանի Հանրապետություն համար՝ 1.900 տոկոս,
- Ռուսաստանի Դաշնության համար՝ 85.265 տոկոս:

2018 թվականին ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի ընդհանուր գումարը կազմել է 12.3 մլրդ ԱՄՆ դոլար, որը 2017 թվականի համեմատ աճել է 5.7 %-ով: Ներմուծման մաքսատուրքերի մուտքի ամենամեծ աճը գրանցվել է Ղրղզստանի Հանրապետությունում, որը 2017 թվականի համեմատ կազմել է շուրջ 25.0%, Հայաստանի Հանրապետությունում այն կազմել է 24.2%, Ռուսաստանի Դաշնությունում՝ 14.4%, Բելառուսի Հանրապետությունում՝ 7.0% և Ղազախստանի Հանրապետությունում՝ 5.9%:

ԵԱՏՄ անդամ պետությունների միջև փոխադարձ հաշվարկների սալդոն 2018 թվականին դրական է ձևավորվել Հայաստանում, Ղազախստանում և Ղրղզստանում և կազմել է համապատասխանաբար 37.6 մլն ԱՄՆ դոլար, 231.7 մլն ԱՄՆ դոլար և 7.7 մլն ԱՄՆ դոլար, իսկ Բելառուսի Հանրապետությունում և Ռուսաստանի

Դաշնությունում սալդոն բացասական է և կազմել է համապատասխանաբար՝ 77.4 մլն ԱՄՆ դոլար և 209.3 մլն ԱՄՆ դոլար:

Առավել ուշագրավ փաստեր

- Ղազախստանի Հանրապետությունում ընդերքօգտագործողների կողմից 2014-2018թթ. վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարները (մոտ 30.0 մլն ԱՄՆ դոլար) Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմնի կողմից չեն բաշխվել ԵԱՏՄ անդամ պետությունների միջև: Արդյունքում չի կատարվել բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից 2018 թվականի վերահսկողության արդյունքներով տրված հանձնարարականը:

- 2018 թվականին ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային մարմինների միջև արտաքին և փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի ընդհանուր գործընթացի օգտագործմամբ տեղեկատվության փոխանակում չի իրականացվել: Խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է լրացնել ազգային ենթահամակարգերի իրականացումը միության տեղեկատվական համակարգի մեջ:

2018 թվականին վերջնական որոշում ընդունվեց Հայաստանի Հանրապետության և Ղրղզստանի Հանրապետության կողմից ներմուծման այն մաքսատուրքերի հաշվեգրման և բաշխման կարգը կիրառելու մասին հարցի վերաբերյալ, որոնց մասով վճարման պարտավորությունն առաջացել է ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության և Ղրղզստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծելու պահից մինչև ԵԱՏՄ-ին միանալու ամսաթիվը: Նշված հարցը տարիներ շարունակ բազմիցս քննարկվել է ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջև, շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ, որի արդյունքում ձևավորվել էին տարբեր կարծիքներ: Նշված հարցի պարզաբանման համար Եվրասիական տնտեսական հանձնաժողովը դիմել էր ԵԱՏՄ դատարան, որի կողմից ընդունված եզրակացության համաձայն սահմանվել էր, որ ԵԱՏՄ հիմնադիր պետությունների համար (Ղազախստանի Հանրապետություն, Բելառուսի Հանրապետություն և Ռուսաստանի Դաշնություն) այդ պարտավորությունը ծագել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից, ԵԱՏՄ պայմանագրին միացած Հայաստանի Հանրապետության համար՝ 2015 թվականի փետրվարի 1-ից, իսկ Ղրղզստանի Հանրապետության համար՝ 2015 թվականի հոկտեմբերի 1-ից: Այսպիսով, կարելի է փաստել, որ Հաշվեքննիչ պալատի կողմից բարձրացված վիճադարույց խնդիրը ստացավ իր վերջնական լուծումը:

ՄԱՍ 3. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատն իր գործունեությունը կազմակերպում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատն անցկացրել է 29 նիստ, որոնցից 17-ն՝ արտահերթ: Հաշվեքննիչ պալատի բոլոր նիստերի օրակարգերն օրենքով սահմանված կարգով նիստից երկու օր առաջ ուղարկվել են Ազգային ժողով և Կառավարություն: Նույն ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատի կողմից ընդունվել է 327 որոշում⁴, որոնց գերակշիռ մասը՝ 301-ն, առնչվում է հաշվեքննության գործընթացին, 8-ը՝ Հաշվեքննիչ պալատի գործունեության մեթոդական և իրավական ապահովմանը, 6-ը՝ անձնակազմի կառավարման հարցերին, 12-ը՝ ֆինանսատնտեսական գործունեությանը:

Հաշվեքննիչ պալատի նիստերում կայացված որոշումները (բացառությամբ անհատական իրավական ակտերի, հաշվեքննության ու ստուգման առաջադրանքների) երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվել են Հաշվեքննիչ պալատի www.armsai.am պաշտոնական կայքում:

Կայքում հրապարակված բովանդակությունը համառոտ ներկայացված է ստորև.

2019թ. պաշտոնական կայքում հրապարակված նյութերի վերաբերյալ	
Բովանդակություն	Հրապարակումների թիվ
Հաշվեքննիչ պալատի որոշումներ	80
Հաշվեքննիչ պալատի նիստերի լուսաբանում	27
Միջազգային հարթակներ և համագործակցություն	11
Թափուր աշխատատեղերի և փորձագետների ներգրավման հայտարարություններ	21
Այլ տեղեկատվություն	15

Հաշվետու ժամանակահատվածում զանգվածային լրատվամիջոցները ակտիվորեն լուսաբանել են Հաշվեքննիչ պալատի մամուլի հաղորդագրությունները և հաշվեքննության արդյունքները: Հաշվեքննիչ պալատը էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից հիշատակվել է ավելի քան 2,300 անգամ:

2020 թվականի փետրվարի 22-23-ը Աղվերանում տեղի է ունեցել «Հանդիպում ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ» երկօրյա համաժողովը, որը կազմակերպվել էր Հաշվեքննիչ պալատի կողմից՝ GIZ-ի աջակցությամբ: Միջոցառման նպատակն էր՝ ստեղծել աշխատանքային միջավայր լրագրողների և պալատի ներկայացուցիչների միջև, որը կնպաստի համագործակցության շրջանակների ընդլայնմանը և հետագա

⁴ Երեք առանձին որոշումների մասով ներկայացվել է երեք «հափուկ կարծիք»:

բացահայտումների տարածմանը հանրության լայն շրջանակներում: Օրակարգով նախատեսված բոլոր հարցերը միտված էին ներկայացնելու պալատի գործունեությունը, 2020 թվականի գործունեության ծրագիրը, գործառույթներն ու համապատասխան օրենքը:

Հաշվեքննիչ պալատում հաստիքների առավելագույն քանակը 155-ն է: Հաշվեքննիչ պալատի մարդկային ռեսուրսների վերաբերյալ որոշ տվյալներ ներկայացված են ստորև բերված աղյուսակներում.

Աշխատակիցների տարիքային խմբերը

I. Աշխատակիցների տարիքային խմբեր	Քանակ	Տոկոս
1. 30-ից երիտասարդ	13	8.8%
2. 30-40 տարեկան	34	23.1%
3. 40-50 տարեկան	40	27.2%
4. 50-60 տարեկան	31	21.1%
5. 60-ից մեծ	26	17.7%
II. 15 տարի և ավելի պետական ծառայության աշխատանքային ստաժ ունեցողներ	56	38.1%
III. Միջին տարիք	41	

Աշխատակիցների շարժը

Աշխատակիցների ընդհանուր շարժ (ընդամենը)	82
1. պետական ծառայության հաստիքներում աշխատակիցների շարժ	37
պետական ծառայությունից ազատված	10
պետական ծառայության ընդունված	27
2. պայմանագրային աշխատակիցների շարժ	45
պայմանագրային ազատված	10
պայմանագրային ընդունված	35

Աշխատակիցների որակավորման բարձրացման շրջանակը

Որակավորման և փորձի փոխանակման ծրագրեր	Մասնակիցներ
արտերկրում սեմինարներ	6
պետական ծառայության /քաղաքացիական ծառայության վերապատրաստումներ	35
պետական գույքի էլեկտրոնային հաշվառում և գրանցամատյանների վարման վերաբերյալ	3
ծրագրային բյուջետավորման վերաբերյալ	5

GIZ աջակցությամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության վերաբերյալ	87
GIZ աջակցությամբ գանձապետական համակարգի վերաբերյալ	30
GIZ աջակցությամբ MS Excel ծրագրի վերաբերյալ	21
GIZ աջակցությամբ կատարողականի հաշվեքննության վերաբերյալ	17
GIZ աջակցությամբ կատարողականի հաշվեքննության վերաբերյալ արտագնա վերապատրաստումներ և փորձի փոխանակում	6
GIZ աջակցությամբ ֆինանսական հաշվեքննության վերաբերյալ արտագնա վերապատրաստումներ և փորձի փոխանակում	3
GIZ աջակցությամբ հաղորդակցության և ՀԼՄ-ների հետ աշխատանքի վերաբերյալ	1

2019 թվականին հաշվեքննիչ պալատի պահպանման նպատակով տրամադրվել է շուրջ 1,077.9 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 98%-ը: Հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 18.8 մլն դրամն օգտագործվել է 100%-ով: Հաշվեքննիչ պալատի կարողությունների զարգացմանը տրամադրվել է 10.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 83.7%-ը:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի՝ 2019 թվականին Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի ֆինանսական հաշվետվությունը ենթարկվել է արտաքին աուդիտի՝ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից մրցութային հիմունքներով ընտրված արտաքին աուդիտորական կազմակերպության կողմից: Սույն աուդիտորական եզրակացությունը հրապարակված է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում:

2019 թվականի ֆինանսական հաշվետվությունը նույն ընթացակարգով 2020 թվականին կենթարկվի արտաքին աուդիտի, որի ավարտվելուն պես Հաշվեքննիչ պալատը պաշտոնական կայքում կհրապարակի աուդիտորական եզրակացությունը:

2019 թվականի նոյեմբերին ավարտվել է ԻՆՏՈՍԱԻ-ի կողմից մշակված աուդիտի բարձրագույն մարմինների կատարողականի գնահատման մեթոդաբանության հիման վրա (SAI PMF) մշակված Վերահսկիչ պալատի կատարողականի ինքնագնահատման արդյունքների արտաքին հավաստման գործընթացը ԻՆՏՈՍԱԻ Զարգացման նախաձեռնության (IDI) գրասենյակի կողմից:

Հավաստիացման նպատակն էր՝ երաշխավորել, որ SAI PMF-ի մեթոդաբանությունը պահպանված է, որ գնահատման ընթացքում օգտագործված ապացույցները բավարար են, որ վերլուծությունը համահունչ է ապացույցներին, որ ամփոփագիրը համահունչ է վերլուծությանը: Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության զարգացման նախաձեռնության (INTOSAI IDI) կողմից ստացված անկախ հավաստիացման հաշվետվությունում արձանագրվեց, որ «IDI-ի կողմից

ստացված վերջնական հաշվետվությունում բոլոր նպատակները բավարար չափով ապահովված են: Սույն հավաստիացման գործընթացում բարձրացված բոլոր էական հանգամանքները հասցեագրված են»: Գնահատումն իրականացվել է հետևյալ ուղղություններով՝ անկախություն և իրավական դաշտ, ներքին կառավարում և էթիկա, աուդիտի որակ և հաշվետվություններ, ֆինանսական կառավարում, ակտիվներ և օժանդակ ծառայություններ, մարդկային ռեսուրսներ և վերապատրաստում, հաղորդակցություն և շահառուների հետ հարաբերությունների կազմակերպում: Գնահատման սանդղակը մեկից չորս միավորների միջակայքն է: Վերահսկիչ պալատը գնահատվել է 1-2 միավորների միջակայքում:

Հաշվեքննիչ պալատի կողմից իր աշխատանքի ինքնագնահատումների իրականացումը կրելու է շարունակական բնույթ և ծառայելու է, որպես հեռանկարային ռազմավարական-ինստիտուցիոնալ զարգացման հիմք:

2019 թվականի ընթացքում արդեն իրականացվել են SAI PMF գործիքով Հաշվեքննիչ պալատի կատարողականի ինքնագնահատման նախապատրաստական աշխատանքներ և ձևավորվել է ինքնագնահատման հանձնաժողով: 2020 թվականին նախատեսվում է իրականացնել Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի կատարողականի ինքնագնահատում, ինչը կօգնի հստակ գրանցել, թե 2016-2019 թվականների ընթացքում Հաշվեքննիչ պալատի կատարողականի առումով ինչ զարգացումներ են տեղի ունեցել և բարձրագույն հաշվեքննիչ մարմինը կարողությունների զարգացման բարելավման որ փուլում է գտնվում:

Հաշվետու տարում իրականացվել են Հաշվեքննիչ պալատի գործունեության մեթոդական և իրավական ապահովմանն ուղղված հետևյալ աշխատանքները.

- Հաշվեքննիչ պալատի մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման ծրագրի մշակում,
- Հաշվեքննիչ պալատի որակի կառավարման համակարգի ձևավորման հայեցակարգի մշակում,
- Հաշվեքննիչ պալատի անդամների գործունեությանն առնչվող միջազգային իրավական պրակտիկայով պայմանավորված ուղենշային չափանիշների մշակում,
- Հաշվեքննողների համար ներքին ծառայողական հարաբերությունների շրջանակում կիրառվող էթիկայի կանոնների մշակում,
- Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների մշակում,
- Հաշվեքննիչ պալատի հաշվեքննության փաստաթղթավորման և այլ օժանդակ ուղեցույցների մշակում,
- Հաշվեքննիչ պալատի 2020-2023 թվականների զարգացման ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների պլանի մշակման աշխատանքներ:

Հաշվեքննիչ պալատը նաև աշխատանքներ է տարել հետևյալ ներքին իրավական ակտերի շարունակական բարելավման ուղղությամբ.

- Հաշվեքննիչ պալատի կանոնակարգ,

- Հաշվեքննիչ պալատի կանոնադրություն,
- Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանություն,
- Հաշվեքննիչ պալատի գործավորության կարգ:

Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության հիման վրա մշակվել և Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատվել է Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի գործունեության ծրագիրը, որը հրապարակվել է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում: Այս տարվա փետրվարի 4-ին, ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում Հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յուլյանը պատգամավորների խնդրանքով ներկայացրել է պալատի 2020 թվականի գործունեության ծրագիրը: Հանձնաժողովի անդամների և պալատի ներկայացուցիչների միջև տեղի ունեցած քննարկման ընթացքում խոսվել է նաև պալատի աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված մի շարք ծրագրերի ընթացքի և հետագա գործողությունների մասին:

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020
թվականի գործունեության ծրագիր

Հղում



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2019 թվականին Հաշվեքննիչ պալատի միջազգային համագործակցության շրջանակը ներառում է միջազգային կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացումից մինչև մասնագիտական հարթակներում երկկողմ և բազմակողմ համագործակցությունը:

Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) և տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության ՍԻԳՄԱ ծրագրի և Հաշվեքննիչ պալատի միջև ձեռք բերված համաձայնության հիման վրա հաշվետու ժամանակահատվածում ՍԻԳՄԱ-ն մասնագիտական աջակցություն է ցուցաբերել Հաշվեքննիչ պալատին 2020-2023 թվականների ռազմավարական զարգացման ծրագրի և դրա իրականացման միջոցառումների պլանի մշակման գործում: ՍԻԳՄԱ-ն նշանակալի մասնակցություն է ունեցել նաև Հաշվեքննիչ պալատի վարքագծի կանոնների, մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման ծրագրի և որակի կառավարման համակարգի ձևավորման հայեցակարգերի նախագծերի մշակման աշխատանքներում:

ՀՀ-ում ԵՄ պատվիրակության և «Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության» (այսուհետև՝ GIZ) «Հանրային ֆինանսների կառավարում Հարավային Կովկասում» համատեղ ծրագրի շրջանակներում տրամադրվել են տեխնիկական աջակցություն հետևյալ ուղղություններով.

- Հաշվեքննիչ պալատի 30 հաշվեքննող (հաշվեքննություն իրականացնող 10 ստորաբաժանումից յուրաքանչյուրից երեքական հաշվեքննող) մասնակցել է «LS FINANCE» և «LS REP» գանձապետական համակարգերի վերապատրաստման դասընթացներին:
- Հաշվեքննիչ պալատի ևս 21 աշխատակից վերապատրաստվել և տիրապետում է Microsoft Excel ծրագրային փաթեթին (խորացված մակարդակով): 2018թ. նույն աջակցության ծրագրի շրջանակներում վերապատրաստվել էր 30 աշխատակից:
- Հաշվեքննիչ պալատի 87 հաշվեքննողներ հեռավար կարգով (տեսակապի միջոցով) մասնակցել են ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության դասընթացներին:
- Հաշվեքննիչ պալատի 17 հաշվեքննողներ մասնակցել են միջազգային մասնագետի կողմից անցկացվող կատարողականի հաշվեքննության թեմայով վերապատրաստման դասընթացներին:
- Արտագնա դասընթացների և փորձի փոխանակման ծրագրերի շրջանակներում վերապատրաստվել է Հաշվեքննիչ պալատի թվով 10 աշխատակից:

«Հանրային ֆինանսների կառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում 2019 թվականի մայիսի 23-ին անցկացվել է «Խորհրդարանի բյուջետային վերահսկողության գործիքակազմ. արտաքին հաշվեքննություն» թեմայով սեմինար-քննարկում, որին մասնակցել են ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի անդամներ, ներկայացուցիչներ ԱԺ աշխատակազմից, Հաշվեքննիչ պալատից, փորձագետներ և այլն: Սեմինարի ընթացքում քննարկվել են խորհրդարանի և Հաշվեքննիչ պալատի փոխգործակցության իրավական շրջանակներին, արտաքին հաշվեքննության արդյունքում կազմված ընթացիկ եզրակացությունների նկատմամբ սահմանված իրավական պահանջներին վերաբերող հարցեր: Նույն ծրագրի շրջանակներում, 2019 թվականի հոկտեմբերի 18-20-ը Ծաղկաձորում կազմակերպել էր «Ազգային ժողովի ոլորտային մշտական հանձնաժողովների և ԱԺ հաշվեքննության ու աուդիտի հարցերի ենթահանձնաժողովի դերը խորհրդարանի և Հաշվեքննիչ պալատի փոխհարաբերություններում» թեմայով աշխատաժողով, որին մասնակցել են պատգամավորներ, պալատի ներկայացուցիչներ, փորձագետներ և այլն: Աշխատաժողովի ընթացքում պալատը ներկայացրել է «Հաշվեքննիչ պալատի զեկույցների պատրաստման փորձը» թեմայով բանախոսություն: ԱԺ պատգամավորները և Հաշվեքննիչ պալատը ձեռք են բերել պայմանավորվածություն, որ նման միջոցառումները կլինեն շարունակական:

ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրի 2019 թվականի նախապայմանների ապահովման շրջանակներում GIZ-ի աջակցությամբ ներգրավվել են փորձագետներ (որակավորված աուդիտորներ) Հաշվեքննիչ պալատի հետևյալ հաշվեքննություններում՝ ISSAI ստանդարտների ապահովման նպատակով փորձագիտական աջակցություն տրամադրելու համար.

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն,
- ՀՀ պետական պարտքի կառավարման ոլորտում կադրորոշականի հաշվեքննություն,
- Երևան քաղաքում շրապ բժշկական օգնության ծառայությունների կադրորոշականի հաշվեքննություն,
- Միջին մասնագիտական կրթության համակարգի գործունեության կադրորոշականի հաշվեքննություն:

2019 թվականին Հաշվեքննիչ պալատը և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (այսուհետև՝ USAID) ձեռնամուխ են եղել կյանքի կոչելու դեռևս 2018 թվականին կնքված փոխըմբեռնման հուշագիրը:

USAID կողմից հաշվետու ժամանակահատվածում նշանակալի աջակցություն է տրամադրվել Հաշվեքննիչ պալատին ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրի 2019 թվականի նախապայմանների ապահովման նպատակով: Մասնավորապես, USAID աջակցությամբ ներգրավվել են փորձագետներ (որակավորված աուդիտորներ) հետևյալ ոլորտներում՝ ISSAI ստանդարտների ապահովման նպատակով փորձագիտական աջակցություն տրամադրելու համար.

- ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն,
- ՀՀ ԿԳՄՍ գիտության կոմիտեի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն,
- ստանդարտների մշակման և հաստատման գործընթացի կատարողականի հաշվեքննություն,
- գեոդեզիական քարտեզագրական ծառայությունների կատարողականի հաշվեքննություն:

2020 թվականին նախատեսվում է Հաշվեքննիչ պալատ, ԱՄՆ բարձրագույն հաշվեքննիչ մարմին, USAID եռակողմ համագործակցության ծրագրի կնքումը, որով USAID-ն ԱՄՆ բարձրագույն հաշվեքննիչ մարմնի հետ համատեղ կհզորացնի Հաշվեքննիչ պալատի մասնագիտական կարողությունները:

Հայաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի, Բուլղարիայի, Հունաստանի, Թուրքիայի աուդիտի բարձրագույն մարմիններն իրենց երկրներում Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի շրջանակներում յուրաքանչյուրն իր հերթին իր երկրում ամենամյա հատուկ աուդիտներ է անցկացնում: Հաշվետու տարվա ընթացքում Հաշվեքննիչ պալատը ակտիվ համագործակցել է միջազգային իր գործընկերների հետ և հաջողությամբ ավարտել է ՀՀ ֆինանսների նախարարությունում (որպես հսկողության գծով

համակարգողի) և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում (որպես ծրագրի ազգային մարմնի) նախատեսված աուդիտները, որոնց արդյունքները ներառվել են Եվրոպական հանձնաժողովին ներկայացված աուդիտորական միասնական հաշվետվությունում, որի պատրաստման համար պատասխանատու է Ռումինիայի աուդիտի բարձրագույն մարմինը:

Երկկողմ և բազմակողմ համագործակցության շրջանակներում տեղի են ունեցել տեղեկատվության և փորձի փոխանակման նպատակով մի շարք միջոցառումներ.

- 2019 թվականի սեպտեմբերին Հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ք. Մոկվայում անցկացվող բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային համագումարին (INCOSAI): Հաշվեքննիչ պալատի նախագահը համագումարի տարբեր հարթակներում երկկողմ հանդիպումներ է ունեցել Բելառուսի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Չինաստանի, Հարավային Կորեայի, Իրանի, Ղրղզստանի և մի շարք այլ երկրների՝ իր գործընկերների հետ: Համատեղ փորձի փոխանակման և կարողությունների զարգացման ծրագրերի առնչությամբ ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ մի շարք բարձրագույն հաշվեքննիչ մարմինների հետ:
- 2019 թվականի նոյեմբերի 28-ին Հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանի նախագահությամբ ք. Երևանում անցկացվել է ԵԱՏՄ բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կոլեգիայի համատեղ նիստը, որին մասնակցել են Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի բարձրագույն հաշվեքննիչ մարմինների ղեկավարները, պատվիրակներ Եվրասիական տնտեսական հանձնաժողովից, ներկայացուցիչներ ԵԱՏՄ անդամ պետությունների ֆինանսների նախարարություններից և մաքսային մարմիններից: Նիստին մասնակցել և բացման խոսքով հանդես է եկել ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը: Համագումարի ընթացքում հաստատվել և ստորագրվել են ԵԱՏՄ բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից 2019 թվականին Հաշվեքննիչ պալատի համակարգմամբ իրականացված ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման, անդամ պետությունների բյուջեների փոխանցման ճշտության վերաբերյալ համատեղ հաշվեքննության արդյունքները:
- Հաշվեքննիչ պալատի և Շվեդիայի ազգային աուդիտի գրասենյակի համագործակցության խորացման և պալատի կարողությունների հզորացման ուղղությամբ աջակցության հարցերի քննարկման նպատակով Հաշվեքննիչ պալատը հյուրընկալել է Շվեդիայի ազգային աուդիտի գրասենյակի պաշտոնական պատվիրակությանը: Կողմերի միջև ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ՝ ԻՆՏՈՍԱԻ համայնքում բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կարողությունների հզորացման գործիքի շրջանակներում հզորացնելու Հաշվեքննիչ պալատի մասնագիտական կարողությունները՝

մասնագիտական վերապատրաստումների, աշխատաժողովների, որակի
հսկողության համակարգի կատարելագործման և այլ ուղղություններով:

Համագործակցությունը պատկան մարմինների հետ

Հ/Հ	Թեմա	Երբ է տրամադրվել	Հաշվեքննությունն (վերահսկողությունը) ընդգրկող ժամանակաշրջանը	Ծանոթություն
I. Հաշվեքննիչ պալատը տրամադրել ՀՀ գլխավոր դատախազությանը				
1.	«Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ	22.03.2018թ.	01.01.2016-29.12.2017թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:
2.	Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն	22.03.2018թ.	01.01.2016-29.12.2017թթ.	Հարուցվել է 7 քրեական գործ, նախաքննության փուլում է:
3.	Տավարաբուծության զարգացման ծրագիր	23.03.2018թ.	01.01.2016-01.12.2017թթ.	Հարուցվել էր 6 քրեական գործ, որոնք կարճվել են:
4.	Արմավիրի մարզի Նորակերտ համայնք	01.10.2018թ.	01.01.2016-29.06.2018թթ.	Կցվել է արդեն հարուցված քրեական գործին, նախաքննության փուլում է:
5.	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (մոնիտաժային և շինարարական աշխատանքների գծով ենթակապալառուների որակավորման նվազագույն չափանիշներին	08.02.2019թ.	01.01.2017-30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:

	անհամապատասխանության մասով)			
6.	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (էլեկտրահաղորդման գծերի ապամոնիտաժման անհամապատասխանության մասով)	08.02.2019թ.	01.01.2017-30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:
7.	Ջրային տնտեսության պետական կոմիտե	01.04.2019թ.	01.01.2017-30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:
8.	ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտե	01.04.2019թ.	01.01.2017-30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:
9.	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (գույրոնի, բիտումի և մագուրի գնման գործընթացի ստուգման վերաբերյալ)	08.02.2019թ.	01.01.2015-31.12.2017թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:
10.	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (կահույքի և կենցաղային տեխնիկայի գնման գործընթացի ստուգման վերաբերյալ)	08.02.2019թ.	01.01.2015-31.12.2017թթ.	
11.	ՀՀ ՊՆ ավիավառելիքի ձեռքբերման, պահպանման և օգտագործման գործընթաց	04. 07. 2019թ. գաղտնի	01.01.2009-30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:
12.	ՀՀ ՊՆ արտաբյուջետային միջոցների ձևավորում և օգտագործում	08.01.2020թ. գաղտնի	01.01.2009-30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:

II. Հաշվեքննիչ պալատը տրամադրել է ՀՀ գլխավոր դատախազության պահանջով

13.	Ջրային տնտեսության պետական կոմիտե	12.06.2018թ.	01.01.2016- 01.12.2017թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:
14.	Պետական գույքի կառավարման վարչություն	29.05.2018թ.	01.01.2016- 29.12.2017թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
15.	ՀՀ առողջապահության նախարարություն	23.05.2018թ.	01.01.2015- 31.12.2017թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
16.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	26.06.2018թ.	01.01.2016- 20.12.2017թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:
17.	Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	26.06.2018թ.	01.01.2016- 20.12.2017թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
18.	Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության դրամաշնորհային ծրագրեր	15.01.2020թ.	01.01.2015- 20.12.2017թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
19.	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ռիսկերի վրա հիմնված համալիր հարկային ստուգումների մեթոդաբանության	04.07.2019թ.	01.01.2018- 31.12.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:

	և ռիսկայնությունը որոշող չափանիշների կիրառություն			
20.	Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ	14.06.2019թ.	01.01.2017- 30.09.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
21.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	09.07.2019թ.	01.01.2018- 31.12.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
22.	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	09.07.2019թ.	01.01.2017- 30.12.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
23.	Տեսչական մարմիններ	25.07.2019թ.	01.01.2017- 30.09.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
24.	ՀՀ բնապահպանության նախարարություն	08.11.2019թ.	01.01.2017- 30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:
25.	ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների	12.12.2019թ.	01.01.2017- 31.12.2017թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:

	իրականացման պետական աջակցության դրամաշնորհային ծրագրեր			
26.	Սոցիալական ապահովության պետական ծառայություն	13.12.2019թ.	01.01.2018- 31.12.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
27.	Դեղատնային գործունեության լիցենզավորման գործընթաց	22.01.2020թ.	01.01.2017- 30.09.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
28.	Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր	10.01.2020թ.	01.01.2016- 30.09.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
29.	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	10.01.2020թ.	01.01.2017- 01.10.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
30.	Սոցիալական ապահովության պետական ծառայության	26. 12. 2019թ.	01.01.2018- 31.12.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
III. Հատուկ քննչական ծառայությանը տրամադրված նյութ				

31.	Պետական եկամուտների կոմիտե	10.05.2019թ.	01.01.2015- 29.12.2017թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
IV. Ազգային անվտանգության ծառայությանը տրամադրված նյութ				
32.	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Արցախի Հանրապետության Մարտակերտ քաղաքում ասֆալտապատման աշխատանքներ)	20.11.2019թ.	01.01.2013- 31.12.2017թթ.	Կցվել է արդեն հարուցված քրեական գործին, նախաքննության փուլում է:
V. Պետական վերահսկողական ծառայությանը տրամադրված նյութ				
33.	«Հայաստան» համահայկական հիմնադրամի (Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում գնման գործընթաց) ⁵	11.10.2019թ.	01.01.2015- 31.12.2017թթ.	Կցվել է արդեն հարուցված քրեական գործին, նախաքննության փուլում է:

⁵ Հաշվեքննիչ պալատի լիազորությունների սահմանափակ լինելու պատճառով ուսումնասիրությունները շարունակվել են ՊՎԾ-ն: